

ԶՀԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածություններ

ԻԶ ՏԱՐԻ

2016 թ.

Գ ԵՌԱՄՍՅԱԿ

Հոլիս, օգոստոս, սեպտեմբեր

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում
Radio Bible Class ընկերությանը, որի թույլտվությամբ
Our Daily Bread գրքուկից թարգմանել ենք հաջորդ
էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Ֆաքս՝ (010) 54-75-69, Կայքէջ՝ www.amaa.am

Երբ Աստված մեզ Հետ է

Կարգա՛

Ա Մնացորդաց 28:9-20

Ձորացի՛ր և քա՛ջ եղի՛ր, գործի՛ր և մի՛ վախեցիր ու մի՛ զարհուրի՛ր, քանզի իմ Տեր Աստվածը քեզ Հետ է, նա քեզ չի թողնի և չի լքի: Ա Մնաց. 28:20

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Հոբ 20-21

■ Գործք Առ. 10:24-48

վիճակից ամուսնական կյանքի մեջ մտնելը, աշխատանքային կենսաշրջանից հանգստյան անցնելը: Չմոռանանք կողակցին կորցնելու և այրիանալու մասին ևս: Այս ամենը անորոշություն և անապահովություն է մտցնում մեր կյանքի մեջ:

Հին Կտակարանում հիշատակված կարևոր անցումներից մեկը Սողոմոն թագավորի կողմից իր հոր՝ Դավթի գահը ժառանգելն է: Վստահ եմ, որ նա ընկել էր ապագայի հանդեպ մեծ անորոշության մեջ: Դրա համար էլ հայրը, խրատելով նրան, ասում էր. «Ձորացի՛ր ու քա՛ջ եղի՛ր, գործի՛ր և մի՛ վախեցիր... քանզի իմ Տեր Աստվածը քեզ Հետ է» (Ա. Մնաց. 28:20):

Հավանաբար դու էլ ունես դժվարին անցումների շրջաններ քո կյանքում: Բայց երբ Աստված քո լաստի մեջ է, դու մենակ չես: Աչքդ կենտրոնացրո՛ւ Նրա վրա: Նա պիտի քեզ անցկացնի ծանր հորձանքներից և հասցնի խաղաղ հանգրվան:

Աստված քեզ պիտի առաջնորդի արագընթաց փոփոխությունների ժամանակ:

Երբ առաջին անգամ փորձում էի լաստով նավել ջրի հոսանքն ի վեր, հանկարծ լսեցի հորձանքի ահավոր գոչյուն: Մի պահ սաստիկ վախեցա. նման ահալի և վտանգավոր բան առաջին անգամ էր պատահում ինձ: Բայց այդ ամենը կարճ տևեց, քանի որ լաստանավորդը մեր լաստը անվտանգ ուղղությամբ էր առաջնորդում: Ես ապահով էի գոնե մինչև ջրի հաջորդ հորձանքը:

Մեր կյանքում կատարվող անցումները հաճախ նման են ջրի այդ հորձանքին: Անխուսափելի իրողություն է ցատկը կյանքի մի շրջանից դեպի մյուսը՝ միջնակարգ դպրոցից համալսարան տեղափոխվելը, ամուրի

Աստծուն անտեսել

Կարգա՛
Սաղմոս 62.1-8

**Սիրեք մեր Տեր
Աստծուն, ընթանաք
նրա բոլոր
ճանապարհներով,
պահեք նրա
պատվիրանները:**
Հեսու 22.5

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Յոթ 22-24
■ Գործք Առ. 11

Որպես բարձրագույն ուսում-
նական հաստատություն
նախկին ուսուցիչ՝ Հաճախ եմ մտա-
ծել այն մասին, թե ինչ ահավոր պի-
տի լինի կանգնել լեցուն դասարանի
առջև և զգալ, որ ոչ մի աշակերտ չի
լսում քեզ ու չի հետևում քո ու-
սուցմանը:

Մեզանից ոչ մեկին հաճելի չէ ան-
տեսվելը: Երբ բարեկամի հետ խոսելիս
նա մեր ասածը չի լսում, մեզ վիրավոր-
ված ենք զգում: Խանութում գնումներ
կատարելիս շատ ենք նեղվում, երբ աշ-
խատակիցն անտարբեր է լինում և մեզ
չի օգնում: Երբ որևէ հարցում դժվա-
րին կացության մեջ ենք հայտնվում,
ցավ ենք ապրում տեսնելով, որ ոչ ոք
մեզ ձեռք չի երկարում:

Ուրեմն պատկերացրո՛ւ, թե որքա՛ն մեծ ցավ ենք պատ-
ճառում Աստծուն, երբ անտեսում ենք Նրան: Մտածի՛ր մի
պահ, թե որքան ենք ցավեցնում Աստծու սիրող սիրտը, երբ
հակառակ իր՝ Սուրբ Հոգու միջոցով մեր մեջ բնակվելուն,
աշխատում ենք այնպես անել, իբր Նա այնտեղ չէ: Կամ
եկեք մի պահ մտածենք. Աստված ինչպե՛ս պիտի զգա իրեն,
երբ իր Խոսքի մեջ եղած պատվիրանները բոլորովին անտես-
վում են մեր կողմից:

Ուշադիր լինենք, որ չանտեսենք Աստծուն: Մեծ կամ
փոքր հարցերի պարագայում, ամեն վայրկյան Նրան ունե-
նանք մեր խորհուրդներում: Դա կարելի է անել Նրա խոս-
քի ընթերցումով և աղոթքով, հավատալով Սուրբ Հոգու մի-
ջոցով մեր մեջ լինելու Նրա խոստումին, Նրա անունով ծա-
ռայելով ուրիշներին: Սաղմոսերգուհի պես ասենք. «Քեզ
հետևեց իմ հոգին» (62.8):

Հիմար է նա, ով անտեսում է Աստծուն:

Անպատկառու-

թյուն

Կարգա՛

Գործք 12.20-24

**Իսկ ամբոխն աղաղա-
կում էր. «Դա Աստ-
ծու ձայն է և ոչ թե
մարդու»: Բայց Տիրոջ
հրեշտակը իսկույն
հարվածեց նրան:**

Գործք 12.22-23

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Յոթ 25-27

■ Գործք Առ. 12

վախեցան, թե իրենք կարող են դառնալ պաշտամունքի առարկա (Գործք 14.14-15): Տեսնելով Պողոս Առաքյալի՝ հրաշքով անդամալույծին բուժելը, մարդիկ աղաղակեցին՝ ասելով. «Աստվածները, մարդկանց նման դարձած, մեզ մոտ իջան» (Գործք 14. 11-13): Ապա նրանք ուզեցին զոհ մատուցել Պողոսին և Բառնաբասին: Երբ առաքյալները լսեցին այդ ամենը, պատառոտեցին իրենց հագուստները և ամբոխի մեջ վազեցին՝ աղաղակելով. «Ինչո՞ւ եք այդ անում» (Գործք 14.14-15):

Իրար հակասող այս երկու սուրբգրային պատմությունների մեջ մենք տեսնում ենք մի հանդիսավոր կոչ՝ մեր ակնածանքը մատուցելու Արարիչ եղող միակ Աստծուն այս անպատկառ աշխարհում: Միայն Նա է, որ արժանի է մեր փառաբանությունը, փառքի և մեծարանքի: Ինքն է միայն արժանի մեր պաշտամունքին:

Հերովդեսը, հագած իր թագա-
վորական պատմուճանը, ճառ
կարդաց ամբոխի առաջ, որին ու-
զում էր դուր գալ: Նա արժանացավ
ամբոխի շողոքորթ վերաբերմունքին:
«Դա Աստծու ձայն է և ոչ թե մար-
դու», - գոռացին մարդիկ (Գործք
12.22): Միակ և ճշմարիտ Աստծու
վախը նրան թելադրելու էր, որ հա-
կաճառի, բայց նա այդպես չարեց:
Եվ քանի որ «փառքը Աստծուն չտ-
վեց», Տիրոջ հրեշտակը իսկույն
հարվածեց նրան: Նա տանջալի մահ-
վան արժանացավ Աստծուն մեծա-
րանք չցուցաբերելու համար:

Մյուս կողմից՝ Պողոսն ու Բառ-
նաբասը այնքան մեծ պատկառանք
ցույց տվեցին Աստծուն, որ նույնիսկ
վախեցան, թե իրենք կարող են դառնալ
պաշտամունքի առարկա (Գործք 14.14-15):
Տեսնելով Պողոս Առաքյալի՝
հրաշքով անդամալույծին բուժելը,
մարդիկ աղաղակեցին՝
ասելով. «Աստվածները, մարդկանց
նման դարձած, մեզ մոտ
իջան» (Գործք 14. 11-13): Ապա
նրանք ուզեցին զոհ մատու-
ցել Պողոսին և Բառնաբասին:
Երբ առաքյալները լսեցին այդ
ամենը, պատառոտեցին իրենց
հագուստները և ամբոխի մեջ
վազեցին՝ աղաղակելով. «Ինչո՞ւ
եք այդ անում» (Գործք
14.14-15):

Ոչ թե մեզ, Տե՛ր, ոչ թե մեզ, այլ քո անվանը փառք տուր:

Սաղմոս 113.1

Տոնել

ազատությունը

Կարգա՝

Հոտմ. 6.15-23

Որովհետև Հիսուս

Քրիստոսի մեջ

կյանքի հոգու

օրենքն ինձ ազատեց

մեղքի ու մահվան

օրենքից:

Հոտմ. 8.2

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Յոթ 28-29

■ Գործք Առ. 13.1-25

կանությունն է նաև մեր հոգևոր կյանքում: Բոլոր նրանք, ովքեր երկար ժամանակից ի վեր հավատացյալի կյանքով են ապրում, հաճախ մոռանում են, թե ի՛նչ է նշանակում մեղքին գերի լինելը: Երբեմն մենք նույնիսկ ինքնագոհ ու ապերախ ենք դառնում: Բայց Աստված հաճախ մեզ հուշարար է ուղարկում մի հավատացյալի միջոցով, որն իր ոգևորիչ վկայությամբ ցույց է տալիս, թե Աստված ի՛նչ մեծ հրաշք է կատարել իր կյանքում: Եվ մեր ուրախությունը ևս մեկ անգամ կնորոգվի, երբ անդրադառնանք, որ մենք էլ ազատված ենք «մեղքի ու մահվան օրենքից» (Հոտմ. 8.2):

Եթե ազատությունը ձանձրալի թվա քեզ, կամ միտքդ կենտրոնացնես այնպիսի բաների վրա, որ չես կարող իրագործել, նկատի ունեցիր, որ դու այլևս ոչ միայն մեղքի գերին չես, այլև ազատ ես սուրբ լինելու և վայելելու հավիտենական կյանքը Քրիստոսի հետ (Հոտմ. 6.22):

Առևանգվելուց և 13 օր պատանդ պահվելուց հետո ազատ արձակված մի նորգեղանդացի լուսանկարիչ, ժպիտը դեմքին, ասում է. «Հիմա ես ինձ շատ ավելի կենդանի եմ զգում, քան մինչ այս ապրած ամբողջ կյանքում»:

Դժվար է հասկանալ, թե ինչու ազատ արձակվելը շատ ավելի է ոգևորում մարդուն, քան ազատ լինելը:

Բոլոր նրանց համար, ովքեր վայելում են իրենց ամենօրյա ազատությունը, այս լուսանկարչի ազատ արձակվելը լավ հիշեցում է այն մասին, թե հաճախ որքան դյուրին է մոռանալ մեր ունեցած ազատությունն ու նրա բարիքները: Դա իրա-

Քրիստոսի համար ապրելը ճշմարիտ ազատություն է բերում մեզ:

**Հարկ չկա խոտը
քաղելու**

Կարգա՝

Ղուկաս 10:38-42

**Բայց մի բան է
հարկավոր. Մարիամը
լավ բաժին է ընտրել,
որ նրանից չի
վերցվի:**

Ղուկ. 10.42

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Հոբ 30-31

■ Գործք Առ. 13.26-52

Միացյալ Նահանգների մի փոքրիկ քաղաքի քաղաքապետ որոշում է այլևս չքաղել իր բակի խոտը: Նա խոտի մեջ մի ցուցանակ է ամրացնում՝ հետևյալ մակագրությամբ. «Կյանքում շատ ավելի կարևոր բաներ կան, քան երկարած խոտը քաղելը»: Նա բազմաթիվ պատճառներ է ներկայացնում խոտը չքաղելու համար, որոնցից մեկը իր կնոջ՝ քաղցկեղից մահանալն էր: Կնոջ կորուստը պատճառ էր դարձել, որ նա իր անելիք գործերի մեջ նախապատվության վերադասավորում կատարեր: Նա սկսել էր երեկոները նստել տան առաջ և դիտել ու վայելել խոտերի մեջ մեծացող վայրի ծաղիկները, ինչպես նաև սկյուռներին ու թռչուններին, որոնք հիմա գալիս էին նրա բակը:

Քաղաքապետարանի խորհրդի անդամներից մեկը նրան դիտողություն է անում՝ ասելով. «Եթե նա այդպես է սիրում անել, լավ: Թերևս ինքը իրավացի է: Թերևս շատ ավելի կարևոր բաներ կան, քան երկարած խոտը քաղելը»: Այդ քաղաքապետի օրինակը մեզ մտածել է տալիս, որ թերևս մենք էլ երբեմն կարիք ունենք վերանայելու աշխատանքում մեր նախապատվությունների կարգը, կյանքի մեր ժամանակը ի՞նչ տեսակ գործերի հատկացնելը, ինչի՞ն կարևորություն տալը: Այսօրվա մեր Աստվածաշունչ ընթերցման հատվածն ասում է. «Մարթան էլ սպասարկության համար շատ էր զբաղված» (Ղուկ. 10.40): Իսկ Մարիամն ավելի կարևոր էր համարել «Հիսուսի ոտքերի մոտ նստելը և նրա խոսքերը լսելը» (Ղուկ. 10.39):

Երբեմն մի շարք ամենօրյա գործեր պետք է հետաձգել, որպեսզի առիթ ստեղծվի Տիրոջը կամ մեր ընտանիքին ու բարեկամներին ժամանակ հատկացնելու:

Հիսուսի անունով մեկիմ օգնելը պետք է համարվի օրվա ամենակարևոր գործը:

Խոնարհվել

Կարգա՛
Սաղմոս 94

**Եկե՛ք երկրպագենք
նրան, խոնարհվենք
ու ծնրադրենք մեր
Արարչի՝ Տիրոջ առջև:
Սաղմ. 94.6**

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Հոբ 33-33
■ Գործք Առ. 14

գործածել է երեք տարբեր բառեր, որոնք ցույց են տալիս Աստծուն պաշտողի դիրքը և բնորոշում նրա կեցվածքը: Սաղմոսերգուհի գործածած առաջին բառը՝ **երկրպագենք**, նշանակում է ամբողջ մարմնով խոնարհվել՝ Տիրոջը պատվելու համար: Երկրորդ բառը՝ **խոնարհվենք**, նշանակում է մեղքից ցած խոնարհվել՝ որպես արտահայտություն մեծարանքի և պաշտամունքի: Իսկ երրորդ բառը՝ **ծնրադրենք**, նշանակում է ծունկի գալով մեծարել և փառաբանել Աստծուն:

Ըստ Սաղմոսերգուհի՝ Աստծու ներկայությունը մեզի դալը Աստծուն պատվելու և մեծարելու նշան է, այլ ոչ թե բարբարոսական վարմունք: Սակայն ամեն պարագայում մեր մարմնի դիրքից ավելի կարևորը մեր հավատքի ու և սրտի կեցվածքն է:

Որքա՞ն հավատքով, հոգեկան ծարավով և խոնարհուլթյամբ ենք մեզ պահում Աստծու ներկայությունը:

Հին հույները և հռոմեացիները հրաժարվում էին ծնկի իջնել պաշտամունքի ժամանակ: Նրանք ասում էին, թե ազատ մարդու ծնրադրելը չի համապատասխանում իրենց մշակույթին, այլ պատշաճում է միայն բարբարոսներին: Մի շարք հույն փիլիսոփաներ ծնրադրելը համարում էին մի տեսակ ավելորդապաշտություն: Արիստոտելն այն անվանում էր բարբարոսական վարվելակերպ: Ամեն պարագայում, այս համոզմունքը հատուկ չէ քրիստոնյա հավատացյալին:

Սաղմոսը 94.6-ը ցույց է տալիս, որ ծնրադրել նշանակում է մեր խորին ակնածանքը հայտնել Աստծուն: Այս մեկ համարում Սաղմոսերգուն

Պաշտամունքի ընթացքում մեր վերաբերմունքը շատ ավելի կարևոր է, քան մեր մարմնի դիրքը:

Շատ վաղ է լքելը

Կարդա՛
Ա. Կորնթացիներ 9.24-27

**...դեն գցենք ամեն
ծանրութիւնն և մեզ
դուրսով պաշարող
մեղքը և համբերու-
թյամբ վազենք.... ըն-
թացքը:**

Եբբ. 12.1

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Հոբ 34-35

■ Գործք Առ. 15.1-21

նա ի վերջո նվաճեց մի խոշոր մրցույթի հաղթողի կոչումը: Հաստատակամութիւնը մեծ հաջողության հասցրեց նրան, սակայն դա այնքան էլ դուրսին չէր:

Մի հեղինակ իր «Երկար հնազանդութիւն միւսնույն ուղղութեամբ» գրքում ասում է, որ հավատացյալի կյանքը ավելի շատ նման է մարաթոնյան վազքի, քան 100 մետր կարճ վազքի: «Ուրեմն,- եզրակացնում է նա,- հավատացյալները կոչված են հարատեւելու մի երկար վազքի համար, որը իմաստավորում է մեր կյանքը»:

Քրիստոսի շնորհքով և զորութեամբ մեր այս կյանքի մրցման ընթացքում մենք ևս կարող ենք «վազել համբերու-
թյամբ» (Եբբ. 12.1): Եվ մեր Տիրոջ օրինակով, օգնութեամբ և քաջալերութեամբ մենք էլ կարող ենք Պողոս Առաքյալի պես վազել մրցանակին՝ շահելու համար անապականելի պսակը (Ա. Կորնթ. 9.25):

Պետք է վազել հավատքի մրցումի մեջ՝ հավիտենականու-
թյունը նպատակ ունենալով:

Մի նշանավոր մարզիկ ընդա-
մենը 16 տարեկան էր, երբ
ընտրվեց մասնակցելու գոլֆի եզրա-
փակիչ մրցումի: Այդ առաջին հաջո-
ղութիւնը շուտով նրան առաջնոր-
դեց ավելի բարձր մրցումների մաս-
նակցելու և հաջող ելույթներ ունե-
նալու:

Սակայն նրա կյանքը այնքան էլ
հեշտ չեղավ: Նա ոչ միայն չվայելեց
վազքի հաջողութիւնը, այլև տոկա-
լով հասավ մի մարաթոնի, որն իրե-
նից 16 տարի պիտի պահանջեր և
պիտի ստիպեր նրան, որ մասնակցի
3 տարբեր մրցումների: Եղավ մի
պահ, երբ նա նույնիսկ փորձեց լքել
այդ ասպարեզը, սակայն տեւական
ջանքերի շնորհիվ 32 տարեկանում

Ճշմարիտ նյութը

Կարգա՛
Գաղատացիներ 1.6-12

**Որովհետև ոչ ոք
ուրիշ հիմք չի կարող
դնել, քան ինչ որ
դրված է, որ է՝
Հիսուս Քրիստոսը:
Ա Կորնթ. 3.11**

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Յոթ 36-37
■ Գործք Առ. 15.22-41

**«Դավիթ, այսօր բացակայու-
թյունդ զգացի դասարանում»,**,- ասա-
ցի քոլեջի աշակերտներից մեկին՝
տեսնելով նրան դպրոցի քարտուղա-
րության գրասենյակում: Դավիթը
զարմանալի պատասխան տվեց՝ ասե-
լով. «Առաջին դասարանում և առա-
ջին օրը քոլեջում այդպես պատահում
է». նա սխալ էր հասկացել իր դասա-
ցուցակը և սխալ տեղ էր գնացել:

Զավեշտալին այն էր, որ կային
երկու տարբեր դասարաններ, որտեղ
միևնույն առարկան տարբեր ուսու-
ցիչներ էին դասավանդում, և Դավի-
թը, փոխանակ իմ դասարանը գալու,
գնացել էր մյուս ուսուցչի դասարա-
նը: «Վնաս չունի, մյուս դասարա-
նում նույնպես ճշմարիտ նյութն են

լսել: Քեզ բացակա չեմ հաշվում»,,- ասացի նրան:

Այս դեպքը ինձ հիշեցրեց շատ հավատացյալների, որոնք
հաճախ ընտրություն ունեն՝ իրենց եկեղեցին հաճախելու:
Կարևորը այնպիսի եկեղեցի հաճախելն է, որտեղ Աստու-
ծային ճշմարիտ խոսքն է մեկնաբանվում, և քարոզվում է փրկու-
թյուն Քրիստոսի միջոցով (Ա Կորնթ. 15.3-5), ուր Աստվա-
ծաշունչը հավատքի կիրարկման միակ կանոնն է, և ուր
հնարավորություն կա ծառայելու Քրիստոսի անունով: Շատ
կարևոր է, որ պատգամը հռչակի Ավետարանի փրկության
բարի լուրը՝ հիմնված Հիսուսի ուսուցումների վրա, այլ ոչ
թե մեկ այլ ավետարանի (Գաղ. 1.6-9): Կարևորը պատգա-
մաբերը չէ, այլ պատգամը:

Ինչպիսի՞ ավետարանի պատգամ է, որ լսում ենք: Արդ-
յո՞ք այն կառուցված է Հիսուսի դրած հիմքերի վրա (Ա
Կորնթ. 3.11):

Հիսուս Քրիստոսը միակ հիմքն է եկեղեցու:

**Սխալ տպավորու-
թյուններ**

Կարգավ

Հեսու 22.10-34

**.....դա վկայություն է
նրանց մեջ, թե Տերը
նրանց Աստվածն է:**
Հեսու 22.34

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Հոբ 38-40

■ Գործք Առ. 16.1-21

Մանասեն զոհասեղան էին կառուցել Հորդանան գետի մոտ: Երբ մյուս ցեղերը լսում են այդ մասին, սաստիկ բարկանում են (Հեսու 22.9-12), որովհետև Աստված պատվիրել էր, որ միայն Իրեն պաշտեն, և զոհերը մատուցվելու էին միայն Ուխտի տապանակի մեջ (Ելք 20.3, Ղևտ. 17.8-9): Մյուսները այդ զոհասեղանի կառուցվելը օրինազանցություն և ուրացում են համարում: Բարեբախտաբար, Փենէէս քահանային ուղարկում են՝ հասկանալու, թե ինչո՞ւ է շինված զոհասեղանը (Հեսու 22.13-33): Եվ նրանք իմանում են, որ այդ զոհասեղանը կառուցված է որպես միության հուշարձան բոլոր ցեղերի համար՝ մեկ Աստծու հովանավորության տակ (Հեսու 22.34):

Հաճախ մեր առաջին տպավորությունը կարող է սխալ լինել: Սակայն մոտիկ հարաբերությունների շնորհիվ կարող են սրբագրվել այդ սխալ տպավորությունները, որոնք հաճախ հետևանք են մեր հպարտության և նախապաշարումի:

Առաջին տպավորությունը հաճախ բերում է սխալ եզրակացության:

Զեյն Օսթրինի նշանավոր վեպը՝ «Հպարտություն և նախապաշարումներ», պատմություն է միջին դասի մի աղջկա՝ Լիզիի մասին, որին համակրում է Դարսին՝ ինքնահավան, հարուստ մի մարդ: Լիզին այն տպավորությունն ուներ, թե Դարսին ամբարտավանի և եսասերի մեկն է: Այդ պատճառով էլ նա խստորեն մերժում է իրեն սիրո խոստովանություն անող Դարսինին: Սակայն որոշ ժամանակ անց, երբ իմանում է, որ նա շատ բարեգործություններ է արել, ընդունում է իր սխալ տպավորությունը և համաձայնում ամուսնանալ:

Հեսուի գրքի 22-րդ գլխում հանդիպում ենք սխալ տպավորության մի դեպքի: Ռուբենի ցեղից Գադը և

**Հրաճք, թե՞ կա-
խարդություն**
Կարգա՛
Հովհ. 10:24-42

Թեկուզ ինձ չհավատաք էլ, գոնե գործերին հավատացեք, որպեսզի ճանաչեք ու հավատաք, որ Հայրն իմ մեջ է, ու ես՝ նրա մեջ: Հովհ. 10:38

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Յոթ 38-40
■ Գործք Առ. 16.1-21

աճպարարություն անել՝ հավատացնելու համար մարդկանց, որ իր արածը հրաճք է: Սակայն շատերը, որոնք իսկապես տեսան Հիսուսին՝ հրաճքներ գործելը, չուզեցին հավատալ, որ նա սպասված Մեսիան է: Նրանք նույնիսկ տրամադիր եղան մահվան դատապարտելու Հիսուսին՝ իրեն Աստվածորդի հռչակելու համար (Հովհ. 10. 30-31): Հիսուսն ասաց նրանց. «Եթե իմ Հոր գործերը չեմ կատարում, ինձ մի՛ հավատացեք: Իսկ եթե կատարում եմ, թեկուզ ինձ չհավատաք էլ, գոնե գործերին (հրաճքներին) հավատացեք, որպեսզի ճանաչեք և հավատաք, որ Հայրն իմ մեջ է, ու ես՝ նրա մեջ» (Հովհ. 10. 37-38):

Հիսուսի հրաճքները բնորոշում են Նրա՝ Աստծու Որդի՝ Փրկիչ լինելը, որն իր կյանքը զոհաբերեց աշխարհի մարդկության մեղքերի փրկության համար: Նրա գործերն ու հրաշափառ հարությունը ամենևին էլ մոգական խաբուսություններ չէին, այլ սիրո և շնորհքի հրաճքներ:

Հավատա՛ Աստծուն և պիտի հավատաս հրաշքների: Հավատա՛ Նրա Որդուն և պիտի ունենաս հրաշքների փորձառությունը:

Հիսուսն իրո՞ք քայլեց ջրի վրայով, թե՞ դա ջրի մեջ թաղված մի ժայռ էր: Նա իսկապես՞ բազմապատկեց հացն ու ձուկը՝ կերակրելու համար 5000 հոգու, թե՞ թմրածություն վիճակ ստեղծեց ժողովրդի մեջ: Հիսուսի արածները հրաճք էին, թե՞ կախարդություն:

Մի ցնորամիտ, անտեսելով քրիստոնեական հավատքը, այս հարցը բարձրացրեց հեռուստատեսային մի հաղորդման մեջ և փորձեց Աստվածաշնչի հրաճքներին մոտենալ բաց մտքով: Հաղորդավարը եզրակացրեց՝ ասելով. «Եթե նույնիսկ անաստված լինեիր այս հարցը ներկայացնողը, եզրակացությունը չպիտի փոխվեր»:

Ամեն դեպքում Հիսուսը չէր կարող

**Սահմանափակ,
բայց օգտակար**
Կարգակ
Մատթ. 25:24-48

**Եվ ես տկարությամբ,
վախով ու մեծ դողով
եղա ձեզ մոտ:**
Ա Կորնթ. 2:3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 1-3
■ Գործք Առ. 17.1-15

Տագումով գերմանացի Սյուզան Բլոխը հաճախ առիթ է ունեցել մտերիկ միջավայրում նվագակցելու մեծ գիտնական Էյնշտեյնին և ուրիշ հայտնի գիտնականներին: Բլոխն ասում է. «Չնայած որ Էյնշտեյնը բավական լավ ջութակահար էր, սակայն նա հաճախ էր բարկացնում իրեն նվագակցողներին, քանի որ չէր կարողանում հետևել նրանց չափերին»: Հակառակ իր գիտական մեծ և հեղաշրջող տեսությունների՝ նա միշտ դժվարություններ էր ունենում երաժշտական չափերի մեջ: «Այդ ամենով հանդերձ՝ նա մնաց միշտ խանդավառ մի երաժիշտ», - ասում է Սյուզան Բլոխը:

Արդյոք մենք էլ հաճախ վշտանում ենք մեր ունեցած սահմանափակումների համար: Մենք բոլորս ունենք մեր կարողությունները: Միաժամանակ մենք ունենք նաև անկարողություններ: Թերևս փորձենք մեր սահմանափակումները գործածել որպես պատրվակ՝ չանելու համար այն բաները, որոնք անելու կարողությունը Աստված տվել է մեզ: Օրինակ, եթե մենք հրապարակային խոսքի կամ երգչախմբում երգելու կարողություն չունենք, դա չի նշանակում, թե մենք պետք է եկեղեցու բոլոր գործերը սոսկ դիտող լինենք՝ առանց որևէ բան անելու:

Երբ արձանագրենք, որ բոլորս էլ ունենք որոշ սահմանափակումներ, կանգ չառնենք: Առաջ նայենք և փնտրենք Աստծու առաջնորդությունը: Վստահաբար կարող ենք ազդեցել, ազնիվ վերաբերմունք ցույց տալ ուրիշներին, այցելել հիվանդներին և ծերերին: «Միայն թե զանազան պարզեցնենք ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է... Զանքի մեջ թույլ չլինենք» (Հռոմ. 12:6):

Շատ մարդիկ սխալ են գործում՝ թաղելով իրենց տրված տաղանդը:

Առատութիւն

Կարգւ՛
Ղուկաս 12.13-21

**Տեսե՛ք և զգուշացե՛ք
ազահուլթիւննից.
որովհետև մարդուս
կյանքը նրա
ունեցվածքի
շատութիւննից է:**
Ղուկ. 12.15

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 4-6
■ Գործք Առ. 17.16-34

Հիսուսը Հարուստ մարդու մասին մի պատմութիւմբ իր հետևորդներին զգուշացրեց ազահուլթիւն մասին: Այդ Հարուստ մարդը երբեք խնդիր չունէր ո՛չ առատ հունձ ունենալու, ոչ էլ ամբարները մեծացնելու (Ղուկ. 12.16-18): Այդ մարդն իր ամբողջ կյանքը վստահել էր իր Հարստութիւնը (Ղուկ. 12.15): Նա իր ապահովութիւնն ակնկալում էր իր նյութական ունեցվածքից և հիմարաբար մոռացել էր «Աստծով Հարստանալու» մասին (Ղուկ. 12.21): Այդ Հարուստ մարդն ապրում էր իր ներկայով և այդ ճանապարհով էլ պատկերացնում էր ապագան (Ղուկ. 12. 19-20):

«Լավ կյանքը» կարելի է չգտնել նյութական բաների մեջ: Մեր ապահովութիւնը «նյութական առատութիւն» մեջ փնտրելու փոխարեն լավ կլինի, որ մեր վստահութիւնը դնենք Աստծու և Նրա թագավորութիւն վրա՝ որպէս ճշմարիտ կյանքի աղբյուրի:

Նպատակի աղքատութիւնը շատ ավելի վատ է, քան քսակի աղքատութիւնը:

Որպէս առատութիւմբ լեցուն Հասարակութիւն մեջ ապրող ժողովուրդ՝ չենք կարող ուրանալ այն Հարստութիւնը, որը հետզհետե առատորեն դիզվում է արեւմտյան աշխարհի մի շարք շրջաններում: Սակայն, այդ ճոխութիւմբ հանդերձ, կա նաև մի որոշակի մտահոգութիւն: Այն կարելի է կոչել «տնտեսական առեղծված», ինչպէս ասել է մի հոգվածագիր: Չգիտեմ՝ որքանով է դիպուկ այդ բնորոշումը, սակայն պարզ է մի բան. մարդիկ հետզհետե սկսել են իրենց ապահովութիւնը ավելի շատ փնտրել «նյութի»՝ նյութական Հարստութիւն մեջ, որը ժամանակավոր է:

Աստվածաշունչը նյութ և Հարստութիւն փնտրելը կոչում է «ազահուլթիւն»: Հիսուսը Հարուստ մարդու մասին մի պատմութիւմբ իր հետևորդներին զգուշացրեց ազահուլթիւն մասին: Այդ Հարուստ մարդը երբեք խնդիր չունէր ո՛չ առատ հունձ ունենալու, ոչ էլ ամբարները մեծացնելու (Ղուկ. 12.16-18): Այդ մարդն իր ամբողջ կյանքը վստահել էր իր Հարստութիւնը (Ղուկ. 12.15): Նա իր ապահովութիւնն ակնկալում էր իր նյութական ունեցվածքից և հիմարաբար մոռացել էր «Աստծով Հարստանալու» մասին (Ղուկ. 12.21): Այդ Հարուստ մարդն ապրում էր իր ներկայով և այդ ճանապարհով էլ պատկերացնում էր ապագան (Ղուկ. 12. 19-20):

«Լավ կյանքը» կարելի է չգտնել նյութական բաների մեջ: Մեր ապահովութիւնը «նյութական առատութիւն» մեջ փնտրելու փոխարեն լավ կլինի, որ մեր վստահութիւնը դնենք Աստծու և Նրա թագավորութիւն վրա՝ որպէս ճշմարիտ կյանքի աղբյուրի:

Բույսեր սպանող

Կարդա՛
Ղուկաս 14.16-26

**Եթե մեկն ինձ մոտ
գա, բայց չատի իր
հորն ու մորը, կնոջն
ու զավակներին... նա
չի կարող լիմ
աակերտը լինել:**

Ղուկ. 14.26

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 7-9
■ Գործք Առ. 18

արագ և ուժեղ է աճում, որ խեղդում է իր շուրջը գտնվող ուրիշ բույսերի՝ ամբողջությամբ ծածկելով և մահացնելով նույնիսկ մեծ ծառերը: Շրջապատին վնասող այսպիսի բույսերի մասին մտածելը մեզ կօգնի հասկանալու ավելի կենսական հարցեր, քան ծառերի մահն է: Հիսուսը զգուշացրեց, որ եթե մեր սրտերում որևէ բան մրցում է Իրեն սիրելու հետ, դա կարող է խեղդել մեր հոգևոր կյանքը: Նա ասաց, որ նույնիսկ ընտանիքի բնական սերը երբեմն կարող է վտանգել մեր՝ Իրեն հետևելու ընթացքին (Ղուկ. 14.16-26): Մեր Տերը մեզանից պահանջում է անբաժան սեր և հավատարմություն:

Երբ մի անգամ արդեն Քրիստոսին ընդունենք ամեն ինչից վեր, շուտով պիտի սովորենք և կարողանանք Իրենից ցած դասել սիրո մյուս բոլոր մեր դրսևորումները: Պետք է թույլ տալ, որ սիրո այլ առարկաներ գերմանական բաղեղի պես խեղդեն մեր սրտի մեջ աճող Քրիստոսի սերը:

Որքան շատ սիրենք Քրիստոսին, այնքան ավելի շատ պիտի սիրենք ուրիշներին:

**Ի՞նչ կա ձեռքիդ
մեջ**

Կարդա՛
Ելք 4.1-5

**Ես կկանգնեմ բլրի
գագաթին, և Աստծու
գավազանը կլինի իմ
ձեռքում:**

Ելք 17.9

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 10-12
■ Գործք Առ. 19.1-20

բուլթյունը և իր հետ լինելը՝ որպես իր պատգամաբերը: Իրականում շատ քիչ տարբերություն կար գավազանը գետնին նետելու և օձը պոչից բռնելու միջև: Երկուսն էլ հնազանդություն դրսևորումներ էին: Ի վերջո, դասը այն է, որ Աստված կարող է անել այն, ինչ ուզում է՝ արժևորելու համար իր պատգամը ժողովրդին, որ ուղարկել էր Մովսեսի միջոցով:

Ի՞նչ կա մեր ձեռքերում: Այլ իմաստով՝ մեր կյանքը մեր ձեռքերում է: Մեզ մնում է ընտրել, թե մենք պիտի վատնե՞նք ժամերը, օրերը, շաբաթները, ամիսները և տարիները՝ անընդհատ մեր անձնական հարցերի հետևից ընկնելով, թե՞ Աստծու կամքի համեմատ, Իրենով զորացած և առաջնորդված, պիտի ապրենք կյանքի մեր ժամանակը իր փառքի համար:

Պիտի զարմանանք, թե Աստված ի՞նչ մեծ գործեր կարող է իրագործել մեր մեջ և մեր միջոցով, երբ կատարյալ հնազանդություն մենք այն, ինչ որ մեզնից խնդրում է, որ անենք:

Մի բան անելու Աստծու կոչը պարունակում է Նրա գործությունը՝ այն ավարտելու համար:

Կենդանաբանական այգու աշխատակիցները զգուշացնում են, որ եթե ուզում ես օձ բռնել, ապա երբեք չփորձես բռնել պոչից: Այն կարող է անմիջապես փաթաթվել ձեռքիդ և խայթել քեզ: Ամենաճիշտ և ապահով ձևը օձին գլխից բռնելն է (խնդրում եմ, չփորձե՛ք դա ձեր տանը):

Օձը պոչից բռնելու էր նման այն, ինչ Աստված ասաց Մովսեսին, որ անի (Ելք 4.1-5): Մովսեսը, որը եղել էր անապատում, անկասկած, շատ օձերի էր հանդիպել և գիտեր, որ իմաստությունն չէ օձին պոչից բռնելը:

Արդյոք ի՞նչ էր ուզում սովորեցնել Մովսեսին Աստված: Աստված ուզում էր, որ Մովսեսը գիտակցի իր գործը:

**Մեր լավագույնը
տալ Աստծուն**

Կարգա՛

Ա Մնացորդաց 22

....տունը, որ պետք է
կառուցվի Տիրոջ
համար, պետք է լինի
... փառահեղ ու
հռչակավոր:

Ա Մնաց. 22.5

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 13-15

■ Գործք Առ. 19.21-41

և կնկատի մեր սխալը»: Մենք բոլորս դժկամությամբ բացեցինք մեր երգարանի այդ դժվար էջը և սկսեցինք կրկին փորձել:

Կիրակի առավոտյան՝ պաշտամունքի ընթացքում, երբ ճիշտ երգեցինք երգը, քչերը այդ նկատեցին: Բայց դա չէր կարևորը: Կարևորը մեր սրտանց երգելն ու մեր լավագույնն անելն էր, հոգ չէ, որ ներկաների մեկ տոկոսն էր հասկանում Աստծուն փառաբանելու լավագույն երգեցողությունը:

Դավիթ թագավորն ուզում էր, որ Տիրոջ համար կառուցվելիք տունը «փառահեղ ու հռչակավոր» լինի (Ա Մնաց. 22.5): Ուստի մեռնելուց առաջ ուզեց հավաստիանալ, որ իր զավակը՝ Սողոմոնը, տաճարը կառուցելու համար ունենա բավարար նյութեր՝ մեծ քանակությամբ ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, տախտակ, քար, նաև վարպետ արհեստավորներ (Ա Մնաց. 22.14-15):

Ի՛նչ էլ անենք, մեր ունկնդիրներից թեկուզ մեկ հոգին արժանի է մեր լավագույնին:

Շաբաթներ շարունակ փորձում
էինք մեր երգելիք երգը և ի վերջո կարողացանք բավականին հաջող երգել այն: Բայց մի փոքրիկ դժվար մասն, ըստ մեր ղեկավարի, այնուամենայնիվ, չկարողացանք հարկ եղածին պես երգել: Կրկին ու կրկին այդ դժվարին մասը փորձելուց հետո մեր ղեկավարը համոզվեց, որ եղածը բավարար է: «Սրա վրա շատ աշխատեցինք,՝ ասաց նա,՝ դուք էլ հոգնեցինք, ես էլ: Շատ ժամանակ էլ չունենք: Ժողովրդի 99 տոկոսը գլխի չի էլ ընկնի, որ սխալ երգեցինք այդ նուրբ հատվածը»: Սակայն երբ պատրաստվում էինք տուն գնալու, նա իր միտքը փոխեց. «Մենք պետք է ամբողջը ճիշտ երգենք, ներկաների թեկուզ մեկ տոկոսի համար, որը հասկանում է

Երբ Աստծուն ենք փառաբանում, միայն մեր լավագույնն է բավարար համարվում:

Դուրս հանել աղբը

Կարգա՛
Սաղմոս 102

**Որքան հեռու է
արևելքն
արևմուտքից, այնքան
հեռացրեց նա մեր
անօրեննությունները
մեզնից:**

Սաղմ. 102.12

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 16-17
■ Գործք Առ. 20.1-16

հաճելի պատկեր չի ստեղծվում: Հիսուսն ուզում է, որ այդ ամենը կանոնավոր կերպով թափենք Իր խաչի առջև: Իրակա- նում նա խոստացել է անտեսել դրանք և մոռանալ:

Արդյո՞ք աղբամանի մեջ խառնում ենք ուտելիեղենի դա- տարկ տուփերը՝ փորձելով գտնել մի այնպիսի բան, որից կար- ծես թե չենք ուզում բաժանվել. բնավորություն մի մեղսալի գիծ, որից չենք ուզում բաժանվել, հաճույք, որից ուզում ենք կառչել կամ վրեժխնդրություն, որը չենք ուզում մոռանալ: Հարցն այն է, թե ինչո՞ւ ենք ուզում աղբի հետ մնալ:

Աղտեղությունը մեր սրտից դուրս հանելն սկսվում է խոստովանությունից և վստահելով Քրիստոսին, որ մեզ ազա- տի դրանից: «Ապա եթե մեր մեղքերը խոստովանենք, նա հավատարիմ է ու արդար, որ մեր մեղքերը ների մեզ և մաք- րի ամեն անիրավությունից» (Ա Հովհ. 1.9): Այսօր աղբահա- վաքի օր է: Դո՛ւրս հանիր աղբերդ և թո՛ղ այնտեղ:

Խոստովանությունը այն բանալին է, որ բացում է
ներումի դուռը:

Միվորաբար տիկինս է, որ ինձ
հիշեցնում է աղբատարի
գալու օրը աղբը դուրս հանելու մա-
սին: Թեև իմ սիրած գործերից չէ դա,
սակայն ուժերս հավաքում եմ և աշ-
խատում ժամ առաջ վերջացնել: Հե-
տո շատ լավ եմ զգում ինձ, երբ աղ-
բը տնից դուրս հանված է լինում:
Իսկ եթե մոռանամ, աղբը ներսում
պիտի մնա մինչև հաջորդ շաբաթ:

Ճիշտ այնպես, ինչպես բեռնա-
տարներ են հարկավոր դիզված աղբը
մեր տներից դուրս տանելու համար,
այդպես էլ մենք պետք է թույլ տանք,
որ Հիսուսը հավաքի այն թափթփու-
քը, որ անխուսափելիորեն հավաք-
վում է մեր սրտերում: Երբ մոռանում
ենք դրանք դուրս հանել, այնքան էլ

**Ուշադրութեամբ
ձեռնարկիր**

Կարգա՛
Գործք 20:27-32

**Եվ հիմա ձեզ
հանձնում եմ
Աստծուն, ու նրա
չնորհի խոսքին, որ
կարող է շինութիւն
տալ....:**

Գործք 20:32

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 18-19
- Գործք Առ. 20.17-38

Երբ Աստվածաշնչյան մի ժողովի համար գտնվում էի Ջաքարթայում (Ինդոնեզիա), հրավեր ստացա տեղական մի եկեղեցում ելույթի համար: Այդ եկեղեցում տեղի էին ունենում երկու հաջորդական պաշտամունքներ: Առաջին պաշտամունքից առաջ երեցներից մեկը խնդրեց, որ Աստվածաշունչս իրեն տամ: Նա բացատրեց, որ եկեղեցու երեցները պատասխանատու են սուրբգրային ուսուցման ճշգրտութեան համար: Ուրեմն, որպես նշան, որ ինձ վստահում են քարոզել, Աստվածաշունչը ինձ պիտի տային ժողովրդի ներկայութեամբ:

Այդ սովորութեան մեջ թե՛ զգաստացնող և թե՛ քաջալերող մի բան կար: Դա ինձ հիշեցրեց, որ Աստվածաշնչի ճշմարտութիւնը ներկայացնելու առանձնաշնորհը չպետք է հասարակ բան համարվի մարդկանց կողմից:

Գործք Առաքելոցի 20-րդ գլխում կարդում ենք, որ Պողոս Առաքյալը հանդիպում է ունենում Եփեսոսի եկեղեցու երեցների հետ: Եկեղեցու առաջնորդներին հիշեցնելով նրանց պարտականութիւնը՝ նա հիշեցնում է նրանց, որ զգոն լինեն՝ չընկնելու սխալ ուսուցիչների ուսուցման վտանգի մեջ (Գործք 20:28-29): Եկեղեցու առաջնորդների պարտականութիւնն է օգնել ժողովրդին, որ աճի Աստծու ճշմարիտ խոսքով (Գործք 20:32):

Կարևոր է, թե ի՛նչ է մեր կոչումը:

Պետք է Աստծու խոսքին մոտենալ բախնդրութեամբ: Միայն այդ դեպքում է, որ եկեղեցին հոգևոր աճ կունենա:

Աստծու հոգին գործածում է Աստծու խոսքը՝ փոխելու համար Աստծու ժողովրդին:

**Այդ չէ
ամբողջութիւնը**
Կարգա՛
Եսայի 55.6-9

**Քանզի Տերն ինքը
տեսնում է մարդկանց
արարքները, ինչ որ
սրանք արել են:**
Հոր 34.21

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 20-22
■ Գործք Առ. 21.1-17

Երբ առաջին անգամ Ալյասկա
այցելեցի, շատ խանդավառ-
վեցի մեր առջև բացված տեսարան-
ներից: Մինչ տեղավորվում էինք
իջևանատանը, սենյակիս պատուհա-
նից ուշադրութիւնս գրավեց դիմա-
ցի հսկայական ժայռակույտը: Անմի-
ջապես պատշգամբ դուրս եկա՝ ամ-
բողջ լեռը տեսնելու:

«Հրաշալի է», - ցածրաձայն ասա-
ցի ինքս: Կողքիս գտնվող մի մարդ
ասաց. «Է՛հ, դա ամբողջը չէ»:

Այդ օրը նկատեցի, որ Ալյասկա
այցելող զբոսաշրջիկները հաճախ
չեն տեսնում բոլոր «մեծ հրաշալիք-
ները»: 20.320 ոտք բարձրութեամբ
լեռան վրա շատ սքանչելի տեսա-
րաններ ամպամած օրերին հաճախ

ծածկված են լինում մարդկային տեսողութիւնից:

Երեմիա մարգարեն 29.11 համարում մեզ հիշեցնում է՝ ասե-
լով. «Ե՛ս միայն գիտեմ իմ մտադրութիւնները, որ խորհում
եմ, - պատգամում է Տերը, - խաղաղութեան մտադրութիւնս և ոչ
թե չարութեան: Դրանից հետո ես հույս կտամ ձեզ»:

Աստված իր ամենատես համայնապատկերի մեջ տեսնում
է մեզ՝ իր ժողովրդին, և ուզում է օգնել մեզ՝ իրագործելու
այն գործը, որ ուզում է, որ անենք, և զարգացնելու նկա-
րագրի այն գծերը, որ ուզում է, որ ունենանք:

Առակաների 16.9 համարն ասում է. «Մարդու սիրտը պի-
տի խորհի իրավունքի մասին, որպեսզի աստված էլ ուղղի
նրա ընթացքը»: Կյանքի մասին մեր տեսակետը սահմանա-
փակված է մեր մարդկայնականութեամբ, սակայն մենք կա-
րող ենք վստահել մեր Արարիչ Աստծուն, որի տեսադաշտը
անսահման է:

Մենք տեսնում ենք մասնակին, Աստված տեսնում է ամ-
բողջութեամբ:

**Մեր երևակայածից
ավելի**

Կարգա՛

Ա. Հովհ. 2.28-3.3

**...Հիմա Աստու-
որդիներ ենք, և
տակավին հայտնված
չէ, թե ինչ պիտի
լինենք...:**

Ա. Հովհ. 3.2

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 23-25

■ Գործք Առ. 21.18-40

Տասնամյակներ շարունակ
Տաստղագետները գծագրել են
տիեզերական տեսարաններ՝ հիմնվե-
լով գիտական տեղեկությունների և
իրենց երևակայության վրա: Սա-
կայն տիեզերքում պատվող ռոբոտ-
ների և հեռադիտակների միջոցով
արված նկարները զգալիորեն տար-
բեր են ներկայացնում իրականու-
թյունը:

Հրագրային հոգվածում մի աստ-
ղագետ գրում էր, որ Լուսնիթագի և
Լուսնի առաջին նկարները «գուրս
եկան մեր երևակայածից շատ տար-
բեր»: Այդ գիտնականը խոստովա-
նում է, որ իր գծած նկարները 70
տոկոսով չէին համապատասխանում
իրականությունը:

Աստվածաշունչը պատմում է Հիսուսի ասածի և արածի
մասին, բայց ո՛չ նրա արտաքին երևույթի մասին: Մեր մտ-
քում և երևակայության մեջ Հիսուսի դիմանկարը մենք կազ-
մել ենք արվեստագետների գծած նկարներից և կիրականորյա
դպրոցի նյութերից: Սակայն մի օր, երբ դեմ առ դեմ տես-
նենք Նրան, պարզվելու է, որ Հիսուսի դիմանկարը բոլորո-
վին տարբեր է: «Սիրելիներ՛ր, հիմա Աստու-
որդիներ ենք, և
տակավին հայտնված չէ, թե ի՛նչ պիտի
լինենք, բայց գի-
տենք, որ երբ նա հայտնվի, նրա նման կլինենք, որովհետև
կտեսնենք նրան, ինչպես որ է» (Ա. Հովհ. 3.2): Եվ Նրան տես-
նելու այդ միտքը մաքրագործում է մեզ (Ա. Հովհ. 3.3):

Ավետարանիչն ասում է, որ ոչ միայն պիտի տեսնենք
մեր Տիրոջը՝ այնպես, ինչպես որ է, այլև մենք էլ իր նման
պիտի լինենք: Ի՛նչ զարմանալի իրողություն է լինելու դա՝
մեր երևակայածից շատ ավելի:

Այն, ինչ երագում ենք լինել, պիտի իրականանա
Հիսուսին ուղղված մեր առաջին իսկ նայվածքով:

**Հաղորդություն
Լուսնի վրա**

Կարգա՝

Սաղմոս 138

**Եթե երկինք ելնեմ,
այնտեղ ես դու...**

Սաղմ. 138.8

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 26-28

■ Գործք Առ. 22

խորհրդածեն այդ օրվա իրադարձությունների շուրջ և Աստծուն փառք տան: Ապա առանձնանալով նա գինին լցրեց արծաթյա սկիհի մեջ և կարդաց. «Ես որթատունկն եմ, դուք՝ ճյուղերը. նա, ով իմ մեջ է մնում, ես էլ՝ իր մեջ, նա շատ պտուղ է բերում» (Հովհ. 15.5): Լուսնյան մեջ նա փառք տվեց Աստծուն և ճաշակեց հացն ու գինին:

Աստված ամեն տեղ է, և մեր պաշտամունքը պետք է արտահայտի այդ ճշմարտությունը: 138 սաղմոսում կարդում ենք, որ ո՛ւր էլ գնանք, Աստված մեզ հետ է: Օլդերինն այդ իրողությունը հիշատակեց Լուսնի մակերևույթին: Նա ժամանակ ունեցավ հաղորդակցվելու Աստծու հետ, որը ստեղծել, փրկել էր իրեն, հաղորդակցվել իր հետ:

Տնից հեռո՞ւ ես զգում քեզ: Լեռան զագաթի՞ն կամ խոր ձորո՞ւմ ես զգում քեզ: Ի՛նչ էլ լինի վիճակդ, Աստծու հետ հաղորդակցությունը միայն մի աղոթքի չափ է հեռու քեզանից:

Աստծու ներկայությունը մեր մեջ Նրա մեծագույն
նվերն է մեզ:

Թիվ 11 տիեզերանավը առաջին անգամ լուսնէջք կատարեց կիրակի՝ 1969-ի հուլիսի 20-ին: Շատերին են հայտնի Արմսթրոնգի այն պատմական խոսքերը, որ ասաց՝ Լուսնի վրա առաջին անգամ ոտք դնելով. «Կատարվածը մի փոքրիկ քայլ է մարդու համար, սակայն մի մեծ ուսույուն՝ մարդկության համար»: Սակայն քչերը գիտեն այնտեղ կատարված առաջին հաղորդության մասին:

Օլդերին անունով մյուս տիեզերագնացը իր հետ հաղորդության մի փոքրիկ փայտե աման էր վերցրել տիեզերանավ, որ տվել էին իր եկեղեցու անդամները: Նա ելույթ ունեցավ ռադիոյով և Երկրի վրա գտնվող իր ունկնդիրներին հորդորեց, որ

**Ճանաչված՝
երկնքում**

Կարգա՝
Հովհաննես 20.11-18

**Իմ ոչխարները իմ
ձայնը լսում են, ու
ես նրանց ճանաչում
եմ, և իմ հետևից
գալիս են:**

Հովհ. 10.27

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 29-30
- Գործք Առ. 23.1-15

լո՞ւ ենք երկնքում: Ես հավատում եմ, այո՛, պիտի ճանաչենք իրար: Երբ Հիսուսն Իր փառավորյալ մարմինը ստացավ, Նրա հետևորդները շուտով ճանաչեցին Նրան (Հովհ. 20.19-20): Մի օր էլ մենք պիտի ունենանք մեր փառավորյալ մարմինը (Ա Կորնթ. 15.42-49, Ա Հովհ. 3.2):

Հիսուսն ասաց իր աշակերտներին. «Ուրախացե՛ք, որ ձեր անունները գրված են երկնքում» (Ղուկ. 10.20): Մի օր մենք էլ պիտի լսենք մեր սիրելիների ձայնը, ում անուններն արձանագրված են երկնքում, ձայներ, որ հիմա լուռ են: Մենք դարձյալ պիտի լսենք մեր հոր թավ ձայնը և մեր մոր կարեկից կանչը:

Սակայն կա մի յուրահատուկ ձայն, որը լսելու եմ սպասում ամենից առաջ: Դա իմ Տիրոջ՝ Հիսուսի ձայնն է, որ իմ անունը պիտի տա: Ես էլ Մարիամի պես անմիջապես պիտի ճանաչեմ Նրան և պիտի կոչեմ «Իմ Տեր և Փրկիչ»:

Մարիամը կանգնեց դատարկ գերեզմանի մուտքին և լաց եղավ վշտահար, քանի որ իր Տերը մեռած էր: Ինչպես հեղինակն է նկարագրում, «նա կարոտով էր հիշում անհետացած ձեռքի հպումը և այն ձայնի արձագանքը, որն այլևս չկար»:

Հետո Հիսուսը երևաց: Վշտահար Մարիամին թվաց, թե դա խաբկանք է, որովհետև կարծեց, թե տեսածը պարտիզպանն էր: Բայց երբ Հիսուսը տվեց նրա անունը, Մարիամը ճանաչեց Նրան և անմիջապես բացականչեց. «Ռաբբո՛ւնի», որ նշանակում է վարդապետ (Հովհ. 20.16):

Մարդիկ երբեմն ինձ հարցնում են, թե արդյոք մենք իրար ճանաչե-

Մնաց բարով ասելը երկրային օրենք է, վերամիացումը՝ երկնային օրենք:

Բնագրեր

Կարգա՛
Սաղմոս 31

**Քեզ կիմաստնացնեմ
ու խելամիտ կդարձ-
նեմ քո ընթացած ճա-
նապարհին և աչքերս
վրադ կպահեմ:**

Սաղմ. 31.8

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 31-32

■ Գործք Առ. 23.16-35

ծում ենք, թե նրանք կարող են սխալվել, դա պիտի փրկի մեզ, ապահովի մեր փրկությունը փոթորկի ընթացքում:

Բոլորս էլ փոթորիկների ենք դիմազարավում, որոնք սպառնում են մեզ մատնել շփոթմունքի ու շեղվելու: Դա կարող է լինել մեր բժշկից ստացված հեռախոսագանգը, մեզ դավաճանած մի բարեկամ կամ խորտակված երազանք: Սրանք հանգամանքներ են, որոնցից պետք է զգուշանալ: Երբ կյանքի հուսախաբուցությունները մեզ կուրացնեն, չվստահենք բնագրերին: Աթոռիդ կամ կյանքի փոթորիկների մեջ շունչդ պահած թոփչք կատարելը կարող է հանգեցնել հուսահատության, շփոթմունքի և վրիժառության, որոնք ավելի են վատթարացնում վիճակը: Աստված ուզում է առաջնորդել իր խոսքի իմաստությունը ապրելու համար: «Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լուսավորում է իմ շավիղները» (Սաղմ. 118.105): Նա միշտ ճիշտ վայր է առաջնորդում:

Որքան ավելի մոտիկից քայլենք Աստծու հետ, այնքան ավելի հստակ կտեսնենք Նրա առաջնորդությունը:

Փոթորկի ժամանակ օդանավով ճամփորդություն կատարելը վտանգավոր արկածախնդրություն է: Փորձությունը քո՛ բնագրերով թռչելն է, կամ, ինչպես օդանավորդներն են ասում, «շունչդ պահած՝ աթոռի վրա»: Սակայն ցանկացած օդաչու քեզ կասի, որ այդ պատգամը վտանգի համար է: Եթե դու վստահում ես քո զգացումներին և բնագրերին, պիտի շփոթվես՝ մտածելով, թե օդանավը վեր է բարձրանում, երբ իրականում այն վայր է իջնում: Բայց, փա՛ռք Աստծու, որ կողմնացույցի մագնիսական սլաքը միշտ հյուսիս է ցույց տալիս և միշտ վստահելի է: Եթե թույլ տանք, որ մեր գործիքները մեզ առաջնորդեն, նույնիսկ երբ կար-

**Սիրտս ինձ
դատապարտում է**
Կարգա՛
Ա. Տիմ. 12-17

**Քանզի եթե մեր
սիրտը մեղադրի մեզ,
ապա Աստված մեր
սրտից ավելի մեծ է և
ամեն բան գիտե:**
Ա. Հովհ. 3.20

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 33-34
■ Գործք Առ. 24

Երբ Հովվի օգնականի պաշտոն ստանալով՝ տեղափոխվեցի այլ քաղաք, այդ կնոջ հետ հարաբերություններս խզվեցին: Ուզեցի կապը վերականգնել, բայց անփութության պատճառով ձգձգվեց: Մի օր էլ թերթում կարդացի նրա մահվան լուրը: Անտանելի մի ցավ պատեց ինձ: Ձղջացի և հանցանքս խոստովանեցի Աստծուն:

Պողոս Առաքյալը դարձի գալուց ավելի քան 30 տարի հետո հաճախ էր ակնարկում այն ժամանակաշրջանը, երբ ինքը «հայհոյիչ, անարգող ու հալածող» էր (Ա. Տիմ. 1.13): Նույնիսկ իրեն կոչում էր «մեղավորներից առաջինը» (Ա. Տիմ. 1.15): Այդ ամենից հետո Առաքյալը հաճախ ուրախությամբ կրկնում է իր՝ ներում գտած լինելու իրողությունը:

Աստված, որ լրիվ ճանաչում է մեզ (Ա. Հովհ. 3.20), ներել է մեզ այն մեղքերը, որոնք խոստովանել ենք (Ա. Հովհ. 1.9): Մենք կարող ենք և պետք է հավատանք ու վստահենք Աստծուն:

Դու է՞լ երբեմն քեզ հանցավոր ու անարժան ես զգում տարիների առաջ գործած սխալիդ համար: Հավանաբար, դա խոստովանել ես Աստծուն և խնդրել, որ քեզ ների, սակայն սխալ արարքիդ հուշը կարծես դեռ շարունակում է հետապնդել քեզ: Ես համակարծիք եմ քեզ: Տակավին իմ մեջ հանցավորություն զգացումն է արթնանում, երբ հիշում եմ այն սխալ վերաբերմունքը, որ ցույց տվեցի մի ծեր կնոջ, երբ պատրաստվում էի հովվական ծառայության: Նա այն խանութի հաճախորդներից էր, որտեղ ես համատեղությամբ աշխատում էի: Բարեկամացել էի հետը և դարձել նրա հոգևոր խորհրդատուն, նույնիսկ նրա ամուսնու թաղումը ես էի կատարել:

Մեր խոստովանությունը Աստծուն միշտ բերում է Նրա ներումը:

**Հակակշռել
բարկուծյունը
Կարգա՛
Դանիել 3.8-25**

Ոչ մի բան թող չլինի հակառակուծյամբ և ոչ էլ սնապարծուծյամբ, այլ խոնարհուծյամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի:

Փիլիպ. 2.3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 35-36
■ Գործք Առ. 25

Տլորիդայի Օուլանդո քաղաքը

Հաջարավոր ընտանիքներ ամեն տարի այնտեղ են գնում՝ անցկացնելու իրենց արձակուրդը: Սակայն անցյալ տարի մի առողջապահական պարբերական Օուլանդոն անվանել էր «Ամերիկայի ամենանյարդային քաղաքը»: Հոգվածազիրն իր տեսակետը հիմնել էր այնտեղ կատարվող վայրագուծյունների, ճանապարհային միջադեպերի և արյան բարձր ճնշում ունեցող մարդկանց քանակի վրա: Նաբուքոդոնոսոր թագավորը «բարկուծյամբ և ցասումով» հրամայեց, որ Սեդրակին, Միսակին ու Աբեղնագովին իր մոտ բերեն, քանի որ սրանք չէին ցանկացել պաշտել իր ոսկե արձանը (Դանիել 3.13): Երբ իր ուզածը չեղավ, նա «զայրույթով լցվեց, բարկացավ» այդ երեքի վրա (Դանիել 3.19):

Բոլորս էլ հաճախ տանջվում ենք, որ զսպենք մեր բարկուծյունը: Սակայն բարկուծյունը միշտ չէ, որ սխալ վերաբերմունք է: Առաքյալն ասում է. «Բարկանաք՝ մի՛ մեղանչեք» (Եփես. 4.26): Պետք է բարկանաք, երբ անարդարուծյուն տեսնեք: Սակայն հաճախ Նաբուքոդոնոսոր թագավորի պես մեր բարկուծյունը անտեղի ու անպատշաճ պատճառներով է առաջանում՝ որպես հետևանք մեր եսասիրուծյան և հպարտուծյան: Եթե մեր բարկուծյունը տիրապետի մեր կամքի վրա, մենք չենք կարողանա վերահսկել մեր ասելիքն ու անելիքը: Առաքյալը կոչ է անում՝ ասելով. «Ոչ մի բան թող չլինի հակառակուծյամբ և ոչ էլ սնապարծուծյամբ, այլ խոնարհուծյամբ մեկը մյուսին թող իր անձից ավելի լավ համարի» (Փիլիպ. 2.3): Երբ ուրիշներին մեզնից առավել դասենք, պիտի տեսնենք, որ մեր բարկուծյունը հակակշռելու առաջին քայլն արել ենք:

Երբ մարդու բարկությունն իշխում է նրա վրա, նա դրսևորվում է վատագույն կողմով:

Մագիի սիրտը

Կարդա՛
Հակոբ 1.19-27

**Բայց խոսքը
կատարողներ՝ եղեք և
ոչ միայն լսողներ՝
ձեր անձերը խաբելով:**
Հակ. 1.22

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 37-39
■ Գործք Առ. 26

իրենց համայնքում կարևոր գործեր կատարելն ու անտեր մնացած երեխաներին օգնելն է: Մարդկանց օգնելու իր ցանկության մասին նա ասում է. «Ինձ թվում է, թե մարդկանց օգնելը այն գործն է, որ ես պետք է անեի»:

Որպես հավատացյալներ՝ մենք էլ պետք է ունենանք տալու սիրտ: Հակոբոս Առաքյալն ասում է, որ պետք է լսենք Խոսքը և այն կատարող լինենք (Հակ. 1.22-23): Սակայն նա չի բավարարվում մեզ պարզապես հնազանդություն պատվիրելով: Նա մեզ հատուկ ցուցումներ է տալիս մեր անելիքի վերաբերյալ: Հետո Ավետարանիչը մեզ ներկայացնում է այն գործնական ձևը, որով շարժվելու ենք: Նա ասում է. «Որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել» (Հակ. 1.27):

Խնդրի՛ր Աստծուց, որ քեզ Մագիի սրտի նման մի սիրտ պարզեի: Աստծու սիրով լցված՝ հնազանդվի՛ր Նրան՝ անելու համար Նրա ասածը: Սա է, որ պետք է անենք:

Դ-ու կարող ես տալ առանց սիրելու, բայց չես կարող սիրել առանց տալու:

Երբ Մագին սովորում էր երրորդ դասարանում, հաճախ դպրոցից տուն էր վերադառնում առանց ձեռնարկների: Նրա անփութությունը ջղայնություն էր պատճառում մորը, քանի որ նա միշտ ստիպված էր լինում նոր ձեռնոցներ գնել: Մի օր մայրը բարկացած ասաց. «Մագի, դու էլ պետք է պատասխանատվություն զգաս ձեռնոցներիդ համար: Այսպես շարունակվել չի կարող»:

Մագին սկսեց լալ և արցունքների միջից ասաց մորը, որ այդ ամբողջ ընթացքում, երբ ինքը նոր ձեռնոցներ էր ստանում, դրանք տալիս էր իր այն դասընկերներին, ովքեր ձեռնոց չուներին:

Հիմա Մագին 18 տարեկան է:

Նրա նախասիրություններից մեկը իրենց համայնքում կարևոր գործեր կատարելն ու անտեր մնացած երեխաներին օգնելն է: Մարդկանց օգնելու իր ցանկության մասին նա ասում է. «Ինձ թվում է, թե մարդկանց օգնելը այն գործն է, որ ես պետք է անեի»:

Որպես հավատացյալներ՝ մենք էլ պետք է ունենանք տալու սիրտ: Հակոբոս Առաքյալն ասում է, որ պետք է լսենք Խոսքը և այն կատարող լինենք (Հակ. 1.22-23): Սակայն նա չի բավարարվում մեզ պարզապես հնազանդություն պատվիրելով: Նա մեզ հատուկ ցուցումներ է տալիս մեր անելիքի վերաբերյալ: Հետո Ավետարանիչը մեզ ներկայացնում է այն գործնական ձևը, որով շարժվելու ենք: Նա ասում է. «Որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել» (Հակ. 1.27):

Խնդրի՛ր Աստծուց, որ քեզ Մագիի սրտի նման մի սիրտ պարզեի: Աստծու սիրով լցված՝ հնազանդվի՛ր Նրան՝ անելու համար Նրա ասածը: Սա է, որ պետք է անենք:

ԳԻՆԵՐ

Կարգա՛
Սաղմոս 41

Ցերեկը Տերն իր ողորմությունը հաստատեց. գիշերը՝ նոր օրհներգություն. ես աղոթում եմ Աստծուն իմ կյանքի համար:

Սաղմ. 41.9

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 40-42
■ Գործք Առ. 27.1-26

որպես դրա հետևանք է գրել 41-րդ սաղմոսը: Հավանաբար իր ըմբոստ զավակից՝ Աբեսաղոմից հալածված ու տանջված ժամանակ (Բ Թագ. 16-18), գիշերով առանձնացած, նա արձանագրել է իր ցավն ու վախը: Մի հոգեվիճակ, երբ մթությունը սեղմում է մեզ և ստիպում, որ հաշվի նստենք մեր սրտի տառապանքի հետ ու ծանր հարցադրումներ անենք Աստծուն:

Սաղմոսերգուն առերևույթ ողբում է Աստծու բացակայությունը, սակայն այդ ամենից հետո գտնում է գիշերվա մի երգ (Սաղմ. 41.8), որն իրեն խաղաղություն ու ապահովություն է տալիս գալիք դժվարությունների հանդեպ:

Երբ տառապում ենք գիշերվա մեջ, մենք էլ կարող ենք սաղմոսերգուի պես ասել. «Հույսդ դի՛ր Աստծու վրա, օրհներգի՛ր նրան, իմ անձը փրկողն Աստված է» (Սաղմ. 41.12):

Իր «Գիշեր» վերնագրով հուզիչ և ցնցող գրքում հեղինակը՝ որպես ջարդի անհամար զոհերից մեկը, նկարագրում է իր մանկական տարիները: Կտրված տնից և ընտանիքի անդամներից (բացի հորից, որն էլ պիտի մահանար գաղթի ճանապարհին)՝ նա ապրել է հոգեկան շատ դառը և մուլթ մի գիշեր: Հոգեվիճակ, որը սասանեց Աստծու հանդեպ նրա հավատքն ու համարումը: Նրա անմեղությունն ու հավատքը մթության բազինի վրա դարձան մարդկային չարիքի և մեղքի զոհերը:

Դավիթ թագավորին էլ էր բախտ վիճակվել հոգեկան մուլթ գիշերներ անցկացնելու, և Աստվածաշնչի շատ մասնագետներ համոզված են, որ նա

որպես դրա հետևանք է գրել 41-րդ սաղմոսը: Հավանաբար իր ըմբոստ զավակից՝ Աբեսաղոմից հալածված ու տանջված ժամանակ (Բ Թագ. 16-18), գիշերով առանձնացած, նա արձանագրել է իր ցավն ու վախը: Մի հոգեվիճակ, երբ մթությունը սեղմում է մեզ և ստիպում, որ հաշվի նստենք մեր սրտի տառապանքի հետ ու ծանր հարցադրումներ անենք Աստծուն:

Քրիստոնեական

վարվելակերպ

Կարգւմ

Բ Տիմոթեոս 2:22-26

Հակառակվողներին

հեղուցյամբ

խրատի...:

Բ Տիմ. 2.25

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 43-45

■ Գործք Առ. 27.27-44

Հաստ կաշի ունեցող կենդանու նոսր բուժելը պերճանք չէ, այլ արվում է՝ կարիքից դրդված: Մի լրագրային հոգվածում ասվում էր, որ եթե փղերի նոսրերը կանոնավոր խնամք չստանան, ապա կարող են առաջանալ շատ վտանգավոր բորբոքումներ: Դրա համար էլ մարդը մի գաղափար է հղացել. պատրաստել է փղի հատուկ «լողակներ», որոնք օգնում են զսպելու փղին և նրան ապահով են դարձնում կողքի ընկած վիճակում: Այդ գործիքը կարող է ունենալ 12 ոտք բարձրություն, կշռել 15 տոննա և արժենալ հարյուր հազար դոլար: Մի շարք կենդանաբանական այգիներ գնել են այդ օգտակար սարքը:

Մարդկանց մասին հոգ տանելն էլ կարող է վտանգավոր լինել: Պողոս Առաքյալը նկարագրում է, թե ինչպես օգնել բոլոր նրանց, ովքեր վտանգավոր իրավիճակներում շեղվում են ճշմարտությունից: Առաքյալը չի ներկայացնում հնարավոր որևէ գործիք՝ օգնելու բոլոր նրանց, ովքեր վտանգի տակ են դնում իրենց և ուրիշների կյանքը (Բ Տիմ. 2.23,25): Փոխարենը նա մեզ հիշեցնում է, որ երբ հարցը վերաբերում է ուրիշների մտքերի և սրտերի մասին հոգ տանելուն, մենք չենք կարող վստահել մարդկային հնարամտությունն ու զորությունը: Առանց կովի կամ կոպտություն՝ Աստծու ծառան պետք է ցուցաբերի ազնվություն և համբերություն (Բ Տիմոթ. 2.24):

Ճշմարտության և ազնվության միաձույլ կեցվածքը վտանգի ժամանակ ավելի կարևոր է, քան պարզ ինքնապաշտպանությունը: Նա ցուցաբերում է Աստծու Հոգին նրանց, ովքեր ուզում են ընդունել Նրան:

Զգուշություն և շնորհք գործածիր, երբ ուղղում ես մեկին,
ով շեղված է:

Սոսկալի՛

Կարգա՛
Սաղմոս 46

**Տերը բարձրյալ և
ահարկու է, մեծ
թագավոր է ամբողջ
երկրի վրա:**
Սաղմ. 46.3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 46-48
■ Գործք Առ. 28

կամ ուստորանում ճաշելը: Արդյո՞ք դրանք սոսկալի փորձառու թյուններ են: Բացեցի մի ստվար բառարան և այդ բառի հետևյալ հոմանիշները գտա՝ «սարսափելի», «վախազդու», «ցնցող», «ակնածալից»:

Հիշեցի, երբ մի օր կանգնած էի խոր ձորի եզերքին, ժայռի վրա: Այդ փորձառու թյունն իրոք «սոսկալի» բան էր ինձ համար:

Ապա սկսեցի ավելի երկյուղ ներշնչող իրողության մասին մտածել: Դա էլ տիեզերքը ստեղծող և կառավարող Աստված Ինքն էր:

Ամենևին էլ զարմանալի չէ, որ Սաղմոսերգուն ասում է. «Տերը բարձրյալ և ահարկու է, մեծ թագավոր է ամբողջ երկրի վրա» (Սաղմ. 46.2):

Հաջորդ անգամ, երբ լսեմք «սոսկալի» բառը, թող այն մեզ հիշեցնի մեր Մեծ Աստծուն, որ իսկապես «սոսկալի» է:

Հաճախ գործածվող մի բառ է, որը մենք երբեմն լսում ենք արտասովոր բովանդակությունների մեջ: Խոսքը սոսկալի բառի մասին է:

Ինչ տարեկան թոռնիկիս հետ, հյուրասենյակի հատակին նստած, խաղում ենք ավտոմեքենաներով: Մեկ էլ տեսար՝ թոռնիկս ասում է. «Սոսկալի՛ է»:

Մեկ այլ անգամ, երբ տիկնոջս հետ դուրս էինք գալիս ուստորանից, տնօրենը, որ կանգնած էր դրսում, հարցրեց. «Ինչպե՞ս էր ամեն ինչ»: «Շատ լավ», պատասխանեցի ես: «Սոսկալի», ավելացրեց կինս:

Այս երկու դեպքը ինձ մտածել տվեցին, թե իրո՞ք սոսկալի է թոռնիկիս հետ զվարճալի խաղ խաղալը

կամ ուստորանում ճաշելը: Արդյո՞ք դրանք սոսկալի փորձառու թյուններ են: Բացեցի մի ստվար բառարան և այդ բառի հետևյալ հոմանիշները գտա՝ «սարսափելի», «վախազդու», «ցնցող», «ակնածալից»:

Հիշեցի, երբ մի օր կանգնած էի խոր ձորի եզերքին, ժայռի վրա: Այդ փորձառու թյունն իրոք «սոսկալի» բան էր ինձ համար:

Ապա սկսեցի ավելի երկյուղ ներշնչող իրողության մասին մտածել: Դա էլ տիեզերքը ստեղծող և կառավարող Աստված Ինքն էր:

Ամենևին էլ զարմանալի չէ, որ Սաղմոսերգուն ասում է. «Տերը բարձրյալ և ահարկու է, մեծ թագավոր է ամբողջ երկրի վրա» (Սաղմ. 46.2):

Հաջորդ անգամ, երբ լսեմք «սոսկալի» բառը, թող այն մեզ հիշեցնի մեր Մեծ Աստծուն, որ իսկապես «սոսկալի» է:

Աստծուն ճանաչելուց ավելի սոսկալի և ակնածալից բան չկա:

Աստծու ուշացումը

Կարդա՛
Ամբակում 1.12-2.3

**Իմ պահակակետում
կկանգնեմ,
կբարձրանամ ժայռի
վրա և կտեսնեմ, թե
ինչ կխոսի ինձ
հետ...:**

Ամբակում 2.1

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 49-50

■ Հոռոմեացիներ 1

որովհետև ինչ որ պիտի գա, կգա և չի ուշանա» (Ամբ. 2.3):

Հավատքը երբեք տեղի չի տալիս: Հավատացյալը գիտե, որ հակառակ անպատասխան երևույթներին, ամեն բան բարիի գործակից պիտի դառնա: Ուրեմն նա կարող է սպասել առանց նույնիսկ նշաններ տեսնելու, թե Աստված գործի վրա է, քանի որ վստահում է Նրան: «Յուրաքանչյուր ուշացում անկասկած լավ է, որովհետև մենք Աստծու ապահով ձեռքերում ենք»,⁻ ասել է մի հավատացյալ:

Մենք էլ՝ որպես հավատացյալներ, մեր սպասման մեջ ամեն ուշացում պիտի «բարիի գործակից» համարենք: Ուշացումները պետք են՝ մեզ մղելու ավելի աղոթելու և ոչ թե անհամբեր լինելու և մտահոգվելու կամ ձանձրանալու: Ուշացումները առիթներ են Աստծու համար՝ մեր մեջ զորացնելու խոնարհություն, համբերություն, հանդարտություն և զորություն: Եթե Աստծու պատասխանը ուշանա, սպասի՛ր. վստահաբար՝ այն պիտի գա:

Աստված երկարաձգում է մեր համբերությունը՝ մեծացնելու համար մեր հոգին:

Սպասելը ինձ համար դժվար բան է: Ես հիմա եմ պատասխաններ ուզում: Հետաձգումները չփոթեցնում են ինձ: Զգձգումները վախեցնում են ինձ: Ես ինձ վիրավորված եմ զգում Աստծու ուշացումով՝ զարմանալով, թե՛ ինչո՞ւ և որքա՞ն: «Որքա՞ն պիտի սպասեմ, ո՛վ Տեր»:

Ամբակում մարգարեն էլ պատասխան ուզեց Աստծուց, բայց Աստված ուզեց ժամանակ տալ իր պատասխանին: Դրա համար մարգարեն ասում է. «Իմ պահակակետումը կկանգնեմ... և կտեսնեմ, թե (Աստված) ինչ կխոսի ինձ հետ» (Ամբ. 2.1), «որովհետև տեսիլքիդ կատարման համար տակավին ժամանակ կա» (Ամբ. 2.3): Աստված պատասխանում է. «Համբերի՛ր,

Անփոփոխ սեր

Կարգա՛
Հակոբոս 1.12-20

**Ամեն բարի տուրք և
ամեն կատարյալ
պարգև վերևից է
իջնում, լույսի
Հորից...:**

Հակոբոս 1.17

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 51-53
■ Հռոմեացիներ 2

ված է լինելու դիմագրավել բազմաթիվ փոփոխությունների՝ առողջապահական, ընկերային և տարիքային: Ապա նա կոչ արեց, որ նրանք սուրբգրային իմաստով սահմանված սերը մշակեն իրենց հարաբերությունների ընթացքում, որը երբեք չի վարանում և ոչ էլ ձախողվում է՝ հակառակ ամեն տեսակ փոփոխությունների, որ, վստահաբար, պիտի գան:

Հիշեցի մի համար Հակոբոսի նամակից. «Ամեն բարի տուրք և ամեն կատարյալ պարգև վերից է իջնում, լույսի Հորից, որի մեջ փոփոխություն կամ փոփոխման շուք բնավ չկա» (Հակ. 1.17): Աստված երբեք չի փոխվում, ոչ էլ նրա սերն է փոխվում մեր հանդեպ: Մենք ստացողներն ենք կատարյալ սիրո՝ մեր երկնավոր Հորից, որը սիրում է մեզ «հավիտենական սիրով» (Երեմ. 31.3): Մենք կանչված ենք ընդունելու Նրա անփոփոխ սերը և թողնելու, որ այդ սերը ձևավորի մեր կյանքերը և տարածվի ուրիշների վրա:

Աստծու սերը շարունակում է կանգուն մնալ, մինչ ուրիշ սերեր ընկնում են:

Մի հարսանիքի ժամանակ նորահարսի պապը արտասանեց այդ և կնոջ հարաբերություններին վերաբերող մի քանի կարևոր համարներ Աստվածաշնչից: Ապա մեկ ուրիշն ասմունքեց մի բանաստեղծություն: Պսակի արարողությունը կատարող հովիվը օգտագործեց այդ բանաստեղծության տողը՝ բացատրելու համար այն սերը, որ հարկավոր է հավատացյալների ամուսնության մեջ. «Սերը սեր չէ, եթե փոխվում է, երբ առիթ է ստեղծվում ձևափոխվելու»: Ծջմարիտ սերը չի փոխվում պայմանների բերումով:

Հոգևոր հովիվն իր պատգամում հիշեցրեց, որ ամուսնացող զույգը համատեղ կյանքի ընթացքում ստիպ-

Արթնացի՛ր

Կարդա՛
Սաղմոս 53

**Ահա Աստված իմ
օգնականն է...:**

Սաղմ. 53.6

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 54-56
■ Հռոմեացիներ 3

Երկար ժամանակ է՝ չէի սահել
ջրադահուկներով: Բայց երբ
բարեկամներս հրավիրեցին ինձ և
փեսայիս, չկարողացա մերժել: Առա-
ջինը սկսեց փեսաս, իսկ ես դիտում
էի: Նկատեցի, որ բավականին դժվա-
րանում է իր տախտակի վրա ուղիղ
բարձրանալ: Նա բավական փորձ ու-
ներ սահելու, սակայն երբ փորձում
էր բարձրանալ սահնակի վրա, չէր
ստացվում: Եվ երբ եկավ իմ հերթը,
ես արդեն կորցրել էի ինքնավստա-
հույթյունս:

Բարեբախտաբար բարեկամս վար-
պետ ջրասահորդ էր: Նա ինձ հետ
մնաց ջրի մեջ և ուղղորդեց ինձ: Նա
ասաց. «Թո՛ւյլ տուր, որ նավակը քեզ
վեր քաշի և ամո՛ւր պահիր քեզ»: Ար-

տաքուստ հակասական այս պատվերը շատ օգտակար եղավ:
Ես այդ երկու խորհուրդն էլ կատարեցի և վստահեցի նավա-
կին, որ անի իր անելիքը, ու կախվեցի ամբողջ ուժով: Առա-
ջին անգամ նավակը տարավ ինձ, և ես, ամուր բռնած, վեր
բարձրացա ու հաճելի շրջագայություն կատարեցի ջրի վրա:

Երբ քեզ ճնշեն կյանքի հարցերն ու հոգսերը, լինեն
դրանք անտանելի ծանր վշտեր կամ այնպիսի կացություն-
ներ, որոնք յուրաքանչյուր օրդ՝ առավոտից գիշեր, կվերա-
ծեն չարաչար աշխատանքի, բարեկամիս խրատը կարող է
օգնել: Նախ թո՛ւյլ տուր, որ Աստված քեզ վեր քաշի Իր գո-
րությամբ (Սաղմ. 53.1-4): Ապա բռնի՛ր Նրա ձեռքից: Ապա
կառչի՛ր Նրանից և «գորացի՛ր Տիրոջով և նրա գորության
կարողությամբ» (Եփես. 6.10):

Վստահի՛ր Նրա գորությանն ու հարատե՛ր: Նա բավա-
րար ուժ պիտի տա քեզ, որ չընկնես (Եսայի 40.31):

Իսկ նրանք, որոնք Տիրոջն են ապավինում, նոր ուժ պիտի
ստանան (Եսայի 40.31):

**Պրական կեցվածք
ցավի դեմ**

Կարդա՛

Հակոբոս 1.1-8

Լիովին

ուրախություն

համարեք, եղբայրներ՛,

երբ պես-պես

փորձանքների մեջ

ընկնեք...:

Հակ. 2.1

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 57-59

■ Հռոմեացիներ 4

վերաբերմունքի համար: Բոլոր նրանք, ովքեր բարկանում են Աստծու դեմ, երբ իրենց գործերը սխալ են ընթանում, կարիք ունեն աստվածաշնչյան դեղաբուժման, որ երկու քայլով մի ծրագիր է՝ դրական և Աստծուն մեծարող կեցվածքով ի պատասխան ցավի:

1. Ծիշտ մտածել ցավի մասին: Ցավը ոչ միայն անխուսափելի է, այլև անխտրական: Նեղությունը գալիս է ամեն ձևով ու հասիներով: «Պես-պես փորձանքներ» (Հակ. 1.2) ազդում են մեր առողջության, մեր աշխատանքի, մեր հարաբերությունների վրա: Բայց երբ հասկանանք փաստերը, պիտի կարողանանք գնահատել դրանց արժեքը մեր կյանքում:

2. Ընդդիմությունն ու ընդվզումը փոխարինել ընկալմամբ և ուրախությամբ: «Ուրախություն համարե՛ք» (Հակ. 1.2) ոչ թե ցավը, այլ այն գիտակցությունը, թե Աստված մեր ցավն օգտագործում է՝ բյուրեղացնելու և ավելի լավը դարձնելու մեզ, այլ ոչ թե դառնացնելու:

Աստված ընտրում է մեր ի՛նչ բանից անցնելը:
Մենք ընտրում ենք այդ բանից ինչպե՛ս անցնելը:

Հիշում եմ՝ քոլեջական օրերիցս մի գիշեր, երբ նոր էի վերջացրել առավոտյան հանձնելիք աշխատանքս, հանկարծ հարևան սենյակից աղմուկ լսեցի: Հարևան դասընկերս, խուճապի մատնված, սենյակի իրերի մեջ՝ այս ու այն կողմում, փնտրում էր իր գրավոր աշխատանքը: Հուսահատ՝ նա բռունցքով ուժգնորեն հարվածեց պահարանին և գոռաց. «Շնորհակալ եմ, Աստվա՛ծ, դու կյանքը մեծ խնդուկի ես վերածում»:

Ես գուցե աստվածաբանությունից ամենաբարձր գնահատականը կտայի նրա, որովհետև առնվազն իմացավ, որ ի վերջո Աստված է վերին պատասխանատուն: Բայց անբավարար պիտի գնահատեի հարցի հանդեպ նրա ցուցաբերած

**Բնական առատա-
ձեռնություն**

Կարգա՛

Ա. Տիմ. 6.17-19

**Բարիք գործեն, բարի
գործերով Հարստա-
նան, առատաձեռն լի-
նեն ու կարոտյալնե-
րին Հաղորդակից:**

Ա. Տիմ. 6.18

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 60-62

■ Հոռոմեացիներ 5

սում, որի եկեղեցում կային որոշ թվով Հարուստ մարդիկ: Նրանցից ոմանք չէին հասկացել իրենց պատասխանատվու-
թյունը Աստծու թագավորության մեջ: Ուստի Պողոսը կոչ է անում Տիմոթեոսին, որ հիշեցնի նրանց, որ մեծ Հարստու-
թյուն ունեցողները պետք է ունենան նաև մեծ պատասխա-
նատվություն, որը նշանակում է հեզ լինել, իրենց ապահո-
վությունը Աստծու մոտ փնտրել և իրենց Հարստությունն օգտագործել բարի գործերի համար: Նրանց՝ իրենց դրամը գործածելու ձևը ցույց է տալիս նրանց սրտի մեծությունը:

Նույնիսկ եթե Հարուստ չենք, Աստված մեզ կոչ է անում բնական առատաձեռնության: Մենք կարող ենք բաժնեկիցել մեր ունեցածը և Հարստանալ բարի գործերով: Եթե առա-
տաձեռն ենք դրամի հարցում, հավանական է, որ առատա-
ձեռն կլինենք նաև այն բաների մեջ, որոնք վերաբերում են Աստծուն և Նրա ստեղծած մարդկությունը:

Նշանավոր ռեստորաններից մեկի մատուցողը երեք տարի ի վեր սպասարկում էր այնտեղ ճաշող հաճախորդներից մեկին, որն ամեն անգամ ճաշի համար վճարելուց բացի մեծ գումար էր թողնում մատուցողին՝ որպես նվեր: Մի օր էլ 26-դոլարանոց ճաշի գինը վճարելուց հետո նա թո-
ղեց 10.000 դոլարի մի նվեր՝ ասելով՝ «Ուզում եմ՝ իմանաս, որ արածս կա-
տակ չէ»: Բնական առատաձեռնու-
թյան ի՛նչ հրաշալի դրսևորում:

Առաքյալը պատվիրում է Տիմո-
թեոսին, որ քաջալերի եկեղեցու Հա-
րուստներին, որպեսզի բնական
առատաձեռնություն ցույց տան (Ա
Տիմ. 6.18): Տիմոթեոսը ծառայում էր
Հարուստ քաղաք համարվող Եփեսո-

Երբ մենք մեզ տանք Աստծուն, մյուս բոլոր բաները տալը
դյուրին կլինի:

Սկյուռ կերակրող

Կարգա՛
Սաղմոս 64

**Տարվա պսակը պիտի
օրհնվի քո
քաղցրությամբ,
դաշտերդ
պարարտությամբ
պիտի լցվեն:**

Սաղմ. 64. 12

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 63-65
■ Հռոմեացիներ 6

Տարիներ առաջ մեր տան մոտ սկյուռների մի կերաման: Շատ պարզ հարմարանք էր: Տախտակի երկու կտոր և մի մեխ, որին ամրացված էր եգիպտացորենի կողրը: Ամեն առավոտ մի սկյուռ դալիս էր և վայելում իր նախաճաշը: Շատ գեղեցիկ կենդանի էր, մեջքը՝ սևավուն, իսկ փորի մասը՝ մոխրագույն:

Հաճախ առավոտյան նստում էի մեր տան ետնաբակում և դիտում սկյուռի ուտելը: Նա ճանկերով պոկում էր եգիպտացորենին փաթաթված տերևներն ու մեկ-մեկ դուրս բերելով հատիկները՝ դրանք բերանն էր տանում և ուտում: Օրվա վերջում ոչ մի հատիկ չէր մնում, միայն ծա-

ռի տակ թափված կեղևի մնացորդներ:

Հակառակ իր նկատմամբ իմ ցուցաբերած հոգածության՝ այդ կենդանին վախենում էր ինձանից: Երբ փորձում էի մոտենալ, նա փախչում էր՝ տարօրինակ ձայներ հանելով, և փորձում թաքնվել ծառի վրա: Նա չգիտեր, որ ես էի իր կերակուր հայթայթողը:

Այդպիսին է նաև ոմանց վերաբերմունքն Աստծու հանդեպ: Նրանք խուսափում են Աստծուց՝ վախենալով Նրանից: Նրանք չգիտեն, որ Աստված սիրում է իրենց և ամեն բան ապահովում նրանց վայելքի համար (Սաղմ. 64.12): Շոտլանդացի մի հոգևոր հովիվ ասել է. «Ոչինչ այնպես ուժգնորեն չի արթնացնում մեր կարեկցությունը, քան գիտենալը, որ մենք սիրված ենք Նրանից, ով ամբողջությամբ սեր է»: Աստծու սերը այն կատարյալ սերն է, որը «հեռացնում է վախը» (Ա Հովհ. 4.18):

Քեզ սիրող երկնավոր Հայրդ երբեք իր աչքը չի
հեռացնում քեզանից:

**Ինչի՞ն ես
Հավատում**

Կարգավ՛
Եսայի 50.4-41

**Տեր Աստված ինձ
խրատող լեզու տվեց,
որ կարողանամ ճիշտ
ժամանակին խոսք
ասել...**

Եսայի 50.4

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 66-67
- Հռոմեացիներ 7

Տրենսիս Գոլիցըր, ստանալով իր քրիմիազիտություն տիտղոսը, աշխատելու ընդունվեց բժշկական հաստատություն: Հիվանդանոցային փորձառություն ընթացքում մի մահամերձ կին հաճախ էր նրա հետ խոսում Քրիստոսի հանդեպ իր ունեցած հավատի մասին: Փրենսիսն Աստծուն չէր հավատում, սակայն չէր կարողանում անտարբեր մնալ այդ կնոջ հանդարտ և ուրախ վիճակի հանդեպ: Մի օր մահամերձը նրան հարցնում է. «Դու ինչի՞ն ես հավատում»: Անակնկալի եկած Փրենսիսը կարմրում է ամոթից և թոթովելով պատասխանում. «Վստահ չեմ, թե ինչ-որ բանի հավատում եմ»: Մի բանի օր անց կինը մահանում է:

Բժիշկը լրջորեն մտածում է այդ հարցի մասին և հասկանում, որ ինքը մերժել է Աստծուն՝ առանց բավականաչափ հարցն իմանալու: Սկսում է Աստվածաշունչ և աստվածաբանական գրքեր կարդալ: Մի տարի անց ծնկի գալով՝ նա իր կյանքը նվիրում է Քրիստոսին: Ներազգեցություն: Պարզապես անկեղծ ու պարզ մի հարց տարեց կնոջ կողմից, ում մարմնական սիրտը դատապարտված էր, սակայն մտահոգությունն ուրիշների փրկության հանդեպ շատ ուժեղ էր:

Մեսիայի գալու մարգարեական պատկերը գտնում ենք Եսայի 50.4 համարում, որտեղ ասվում է. «Տեր Աստված ինձ խրատող լեզու տվեց, որպեսզի կարողանամ ճիշտ ժամանակին խոսք ասել»:

Պատրաստ լինենք հարմար պահին մի խոսք կամ հարցում ունենալու՝ ուրիշներին դեպի Քրիստոս ուղղորդելու, ով պարգևում է կյանք և խաղաղություն:

Հաջորդ անձը, որին կհանդիպես, կարող է կարիքն ունի Թրիստոսին հասնելու:

**Միջազգային
բարեկամություն**

Կարգա՝
Կողոսացիներ 1.3-12

**Գոհանում ենք
Աստծուց և մեր Տեր
Հիսուս Քրիստոսի
Հորից՝ ամեն
ժամանակ ձեզ համար
աղոթք անելով:**

Կող. 1.3

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 68-69
- Հռոմեացիներ 8.1-21

սիրում են ծովախեցի հավաքել: Իրենց առաջին նամակագրությունից 48 տարի անց, երբ նրանք առաջին անգամ հանդիպեցին Մայամիի միջազգային օդանավակայանում, Միլիսընթն ասաց. «Նա՛ղյա, ես քեզ կճանաչեի, որտեղ էլ հանդիպեի»:

Պողոս Առաքյալի նամակները լեցուն են իր բարեկամների հանդեպ կարեկցությամբ և երախտագիտությամբ: Նա գրում է. «Գոհանում ենք Աստծուց և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հորից՝ ամեն ժամանակ ձեզ համար աղոթք անելով» (Կող. 1.3): Նա քաջալերում է հավատացյալներին Քրիստոսի հետ նրանց ընթացքի մեջ (Կող. 1.10):

Մտերմությունը խորանում է, երբ երկուստեք կապված են լինում Քրիստոսի հետ, ինչպես Հիսուսը պատվիրեց. «որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15.12): Նրանով հաստատված բարեկամությունն ավելի է արժևորվում և գոյատևում:

Բուլղարաբնակ Նադյան 1947-ին նամակագրություն սկսեց Միացյալ Նահանգներում բնակվող Միլիսընթի հետ: Շուտով նրանք դարձան նամակագրական ընկերներ: Տարիներ շարունակ նրանք փոխանակում էին նկարներ, դպրոցական պատմություններ և երազանքներ: Նրանց նամակագրությունն ընդհատվեց, երբ Բուլղարիայի կառավարությունն արգելեց անձնական հարաբերությունները Արևմուտքի հետ:

Տարիներ անց, երբ քաղաքական հարաբերությունները փոխվեցին, Միլիսընթը նամակ գրեց Նադյային իր ունեցած վերջին հասցեով: Շուտով նրանք տեղեկացան, որ երկուսն էլ ամուսնացել են բժիշկների հետ, որոնք

Լավ պրկում

Կարգա՛
Հոռոմեաացիներ 8.26-28

....որովհետև իմ
զորությունը
տկարության մեջ է
իրագործվում:
Բ Կորնթ. 12.9

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 70-71
■ Հոռոմեացիներ 8.22-39

տի վիճակից: Աստված երբեմն ստիպել է ինձ, որ հավատքս բաժնեկցեմ մեկի հետ, ում շատ լավ էիմ ճանաչում, կամ սովորականից շատ ավելի արժեքավոր նվեր տամ, կամ մխիթարեմ մեկին անձնական դժվարություն ունեցած պահին:

Աբրահամի կյանքը ցույց է տալիս հավատքի կարևորությունը, երբ Աստված ուզում է, որ դուրս գանք մեր հանգիստ վիճակից: «Հավատով Աբրահամը հնազանդվեց, երբ կանչվեց... Եվ դուրս եկավ առանց իմանալու, թե ո՛ւր է գնում» (Եբր. 11.8):

Երբ պրկենք մեր հոգևոր մկանները, գուցե ցավ զգանք: Բայց Աստված մեզ վստահեցնում է՝ ասելով. «Քեզ իմ շնորհը բավական է, որովհետև իմ զորությունը տկարության մեջ է իրագործվում» (Բ Կորնթ. 12.9): Մեր հարմարավետությունն ու բավարարությունն իր մեջ են գտնվում (Բ Կորնթ. 3.5):

Երբ հավատքով և հնազանդությունով քայլ անենք, Աստված «լավ պրկումով» կգորացնի մեր հոգևոր կյանքը:

Մեր հավատքը պրկված է լինում, երբ մեր տկարությունը փոխանակում ենք Աստծու զորության հետ:

Բնաբուժությունը ցավ պատճառող անհրաժեշտություն է ծնկի վիրահատությունից հետո: Քայլելու փորձերիս հետ բնաբույժը մի քանի անգամ քաշում և ծռում է ծունկս, ապա այն ձգած պահելով՝ հարցնում քաջալերությամբ. «Ավելի լավ ես զգում քեզ, չէ՞»: «Ո՛չ այնքան լավ», - հուսահատ պատասխանում եմ ես:

Շուտով հասկացա, թե որքա՛ն կարևոր է մարդու մկաններն ու հոգերը պրկելն ու շարժման մեջ դնելը, ինչը թեև ցավալի, բայց օգտակար է դրանք զորացնելու համար: Ֆիզիկական շարժումներից և պրկումներից բացի կան նաև հոգեկան պրկումներ, որոնց համար Աստված ուզում է, որ դուրս գանք մեր հանգստի

Տիկին Կյուրի

Կարգա՛
Սաղմոս 1

**Քո խոսքերը սրտումս
թաքցրի, որ
չմեղանչեմ քո դեմ:**
Սաղմ. 118.11

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 72-73
- Հռոմեացիներ 9.1-15

դալ նրա ձեռագրերը և քիմիական փորձերի գրանցումները, հազնում են պաշտպանական հատուկ հազուստներ, որովհետև այդ ամենը տակավին ռադիոակտիվ նյութեր ունեն իրենց մեջ:

Մեր ժամանակներում ոչ ոք առանց պաշտպանվածության չի մոտենում ռադիոակտիվ նյութերին: Բայց շատեր կարծես չեն մտահոգվում մեղքին մոտիկ լինելու վտանգով: Սաղմոսերգուն զգուշացնում է մեզ մեղավոր կեցվածքից, խոսքից և վարմունքից (Սաղմ. 1.1,4-6): Աստուծո օրենքներին հնազանդվելը հոգևոր պաշտպանություն է մեղքից և նրա մահացու հետևանքներից: Սաղմոսերգուն ասում է. «Քո խոսքերը սրտումս թաքցրի, որ չմեղանչեմ քո դեմ» (Սաղմ. 118.11): Տիկին Կյուրին չիմացավ ռադիոակտիվ նյութերի առջև գտնվելու վտանգը: Սակայն Աստված Իր խոսքի միջոցով մեզ անհրաժեշտ նախազգուշացում է տալիս մեղքի վտանգից: Լավ է ամեն օր գործադրել այն, ինչ կարդում ենք Նրա կենսատու գրքում:

Տիկին Մարի Կյուրին համաշխարհային պատմության մեջ իր տեղն ունի որպես ռադիոակտիվ ճառագայթների բնագավառի ռահ-վիրա: 1903-ին նա եղավ Նոբելյան մրցանակի արժանացած առաջին կինը՝ պատվավոր տեղ գրավելով գիտության մեջ: Այնուհետև՝ 1911-ին, ստացավ Նոբելյան երկրորդ մրցանակը՝ քիմիայից:

Գիտական աշխարհում ներդրած այսքան մեծ և հրաշալի նպաստը առանց մեծ զոհողության չեղավ: Մարի Կյուրին մահացավ լեյկեմիա կոչվող արյան քաղցկեղից, որի պատճառը երկար ժամանակ ռադիոակտիվ ճառագայթների հետ շփվելն էր: Մինչև օրս գիտնականները, ովքեր ուզում են կար-

Ահազանգի ձայնը

Կարդա՛
Հայտնություն 21.1-5

**Եվ գահի վրա նստողն
ասաց. «Ահա ամեն
բան նոր եմ անում»:**
Հայտն. 21.5

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 74-76
■ Հռոմեացիներ 9.16-33

Մեպտեմբերի մի տաք օր՝ հետ-
միջօրեին, գնացել էի մարզա-
դաշտ՝ դիտելու դպրոցական տղայիս
Ֆուտբոլային խաղը: Հանկարծ մի
ուժգին ձայն՝ ուշադրավ, բայց
միևնույն ժամանակ տագնապալից,
խանդարեց տիրող հարաբերական
հանգիստը: Ահազանգող այդ սուր
ձայնը անտեղի էր և տրամադրու-
թյուն փչացնող: Մի նշանավոր եր-
գիչ ահազանգի մասին ասել է.
«Ահազանգը նշանակում է, որ ինչ-
որ մեկին հիվանդանոց են տանում
կամ բանտ»: Շատ ճիշտ է: Երկու
դեպքում էլ ինչ-որ մեկի օրը խան-
դարված է. մեքենան շտապում է՝
կա՛մ ինչ-որ մեկին ազատելու և
կա՛մ բռնելու ու պատժելու:

Այդ ահազանգը մի պահ ուշադրությունս կտրեց խաղից
և թեև գնալով թուլանում էր, բայց սկսեցի մտածել նրա մա-
սին: Այնպես թվաց, թե ահազանգը ճամարտությունը հիշեց-
նելու հզոր միջոց է: Այս աշխարհը ցավալիորեն վտանգված
է: Ահազանգը, լինի այն ոճիրի կամ դժբախտությունյան պատ-
ճառով, հիշեցնում է, որ ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է և
պետք է ուղղել:

Այդպիսի պահերի լավ է, որ հիշենք, որ Աստված տես-
նում է աշխարհը կործանման վտանգի մեջ և խոստացել է,
որ մի օր ինքը բոլոր հին բաները պիտի մաքրի և բոլոր բա-
ները նոր է անելու (Հայտն. 21.5):

Աստծու այդ խոստումը մեզ քաջալերում է կյանքի
դժվարություններում և տալիս իր մխիթարությունը՝ փսի-
սալով այն մեր ականջին: Փսիսուք, որը խլացնում է նույ-
նիսկ շտապօգնությունյան մեքենաների ահազանգը:

Աստծու մխիթարության փսիսուքը լռեցնում է մեծ
փորձությունների աղմուկը:

Գեղեցիկ ոտքեր

Կարգա՛
Հռոմեացիներ 10.14-18

**...ինչպե՞ս հավատան,
ուժից չլսեցին, և
ինչպե՞ս լսեն առանց
քարոզողի:**

Հռոմ.10.14

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 77-78
■ Հռոմեացիներ 10

Վերջերս հանդիպեցի այն մարդուն, ով 35 տարի առաջ ինձ Քրիստոսին ներկայացրեց: Նա Ձիկագոյի Մուտի եկեղեցու նախկին հովիվն էր: 1972-ին՝ աստվածաշնչական մի համագումարի ժամանակ, «Վերադարձ Աստվածաշնչին» խորագրով մի նյութով առաջին անգամ լսեցի Ավետարանի փրկության բարի լուրը և Քրիստոսի՝ ինձ սիրելու և իմ մեղքերի համար իր կյանքը խաչի վրա զոհաբերելու մասին: Սուրբ Հոգին իմ աչքերն ու սիրտը բացեց այդ գիշեր, և ես Տեր Հիսուսին ընդունեցի որպես իմ Տեր և Փրկիչ (Հովհ. 1.12):

Մենք Աստծուն փառք ենք տալիս այնպիսի հովիվների համար, ովքեր հավատարմորեն քարոզում են Բարի Լուրը և շատերին են առաջնորդում դեպի Քրիստոս: Ըստ Պողոս Առաքյալի՝ նրանք գեղեցիկ ոտքեր ունեն: «Ի՛նչ գեղեցիկ են նրանց ոտքերը, ովքեր խաղաղություն են քարոզում և բարի բաներ են ավետիք տալիս» (Հռոմ. 10.15):

Սակայն բարի լուրը տարածելը միայն Աստվածաշնչի ուսուցիչների և հոգևոր հովիվների պարտականությունը չէ: Բոլոր նրանք, ովքեր ճանաչում են Քրիստոսին, կարող են իրենց փորձը հաղորդել ընտանիքի անդամներին, բարեկամներին և գործընկերներին, ինչո՞ւ չէ, նաև օտարներին: Այդ անելը մեր առանձնաշնորհումն ու պարտականությունն է: Հակառակ պարագայում «ինչպե՞ս հավատան, ուժից չլսեցին, և ինչպե՞ս լսեն առանց քարոզողի» (Հռոմ. 10.14):

Գեղեցիկ դարձնենք մեր ոտքերը՝ Քրիստոսի բարի լուրը տանելով ուրիշներին:

Ի՛նչ գեղեցիկ են լեռների վրա նրա ոտքերը,
ով ավետիս է բերում:

Դասեր Հովնանից

Կարդա՛
հովնան 1

**Իմ նեղությանս մեջ
ես աղոթեցի իմ Տեր
Աստծուն, և նա լսեց
իմ աղաչանքը
դժոխքի խորքից:
Հովն. 2.2**

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 79-80
■ Հռոմեացիներ 11.1-18

Հովնանի պատմությունը ամենա-
վիճահարույցն ու հետաքրքրա-
կանն է Աստվածաշնչում: Եվ բոլոր վի-
ճելի նյութերից հետո մի բանում կարող
ենք վստահ լինել. Հովնանը բավական
պրպտումներ արեց իր հոգու մեջ՝ այն
գարշահոտ ձկան փորում օթեւանելով:

Բոլորս էլ ընդունում ենք, որ երբեմն
մեր կյանքի օրերը շատ վատ են անց-
նում: Նման պարագաներում մենք մեզ
առաջադրենք մի քանի հարցումներ:

**Մեղավոր արարքներ կա՞ն իմ
կյանքում:** Հովնանի անտեղի անհ-
նազանդության լույսի տակ Աստ-
ված մի ազդեցիկ բան էր անելու, որ-
պեսզի գրավեր նրա ուշադրությունը
և առաջնորդեր ապաշխարություն:

**Ի՞նչ կարող եմ սովորել այս կա-
ցությունից:** Նինվեի չար ժողովուրդը Աստծու ժողովրդի թշ-
նամին էր: Հովնանը մտածում էր, որ նրանք պետք է դատվեն,
և նրանց երկրորդ առիթ չպիտի տրվի: Հասկանալի է, որ Հով-
նանը տակավին սովորելու դաս ուներ՝ հասկանալու կորսված-
ների հանդեպ Աստծու կարեկցությունը: «Եվ Աստված տեսավ
նրանց գործերը, քանի որ բոլորը հետ էին կանգնել իրենց չար
ճանապարհներից. Աստված զղջաց այն չարիքների համար, որ
ասել էր, թե կանի նրանց, և չարեց» (Հովն. 3.10):

Կարո՞ղ եմ ցույց տալ Աստծու փառքը սրա մեջ: Հաճախ մեր
տառապելը մեզ համար չէ, այլ ուրիշների՝ տեսնելու Աստծու գո-
րությունը, որ գործում է մեր անզորության միջոցով: Հովնանն ըն-
կել էր հուսահատ վիճակի մեջ: Հակառակ դրան՝ Աստված ուզեց
նրան գործածել հեթանոս ժողովրդին դարձի բերելու համար:

Եթե քեզ գում ես, ինչպես «կես ձկան փորում», հնա-
զանդվի՛ր Աստծուն և հանձնվի՛ր Նրա կամքին:

Այն դասերը, որոնք սովորում ենք տառապանքի դպրոցում,
ուրիշ տեղերում չենք կարող սովորել:

Վատ երազ

Կարգա՛
Հովհաննես 6.15-21

**Եվ չես երկնչի
հանկարծահաս
սարսափներից, ոչ էլ
ամբարիշտների
վերահաս
հարձակումներից:**
Առ. 3.25

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 81-83
■ Հռոմեացիներ 11.19-36

Բոլորս էլ ունեցել ենք վատ երազներ: Երբեմն տեսել ենք, որ բարձր շենքից վայր ենք ընկնում կամ հալածվում ենք ինչ-որ սարսափելի արարածի կողմից կամ կանգնած ենք մեծաթիվ հանդիսատեսների առջև ու մոռացել ենք մեր ասելիքը:

Վերջերս տիկինս մի սարսափելի երազ էր տեսել: Իբր, գտնվում էր մի փոքրիկ սենյակում, երբ հանկարծ մշուշի միջից երկու մարդ են երևում: Երբ այդ մարդիկ մոտենում են՝ նրան բռնելու, կինս սարսափած ասում է. «Սպասե՛ք, ձեզ պատմեմ Հիսուսի մասին»: Ճիշտ այդ պահին նա արթնանում է քնից: Հիսուսի անունը նրան ազատել էր այդ սաստիկ վախից:

Հովհաննեսի Ավետարանի 6-րդ գլխում կարդում ենք, որ աշակերտները շատ վախեցան, երբ գիշերվա խավարում տեսան մի տարօրինակ դեմք, որ քայլում էր Գալիլիայի ալեկոծ ծովի վրայով: Բայց այդ խորհրդավոր դեմքը վատ երազի միջից չէր: Այն իրական էր: Մատթեոսի Ավետարանում կարդում ենք. «և վախից ազաղակեցին» (Մատթ. 14.26): Հետո աշակերտները ծանոթ ձայնը լսեցին. «Ես եմ, մի՛ վախեցեք» (Հովհ. 6.20) Հիսուսն էր եկողը: Նրանց վախը փարատվեց, և ծովն էլ հանդարտվեց:

Հիսուսը նույն վստահությունն է մեզ տալիս այսօր՝ հավատքի ճամփորդության ընթացքում դիմադրաված մեր վախերին հանդիման: Սողոմոն Իմաստունն ասում է. «Տիրոջ անունը հայտնի է նրա զորության մեծությունից, և դեպի նա ընթացող արդարները բարձրանում են» (Առ. 18.10): Վախերը պիտի դան, բայց վստահությունն ունենք, որ Հիսուսը միշտ լույս է խավարի մեջ:

Մի՛ վախեցիր խավարից, քանի որ քայլում ես
«Աշխարհի լույսի» մեջ:

**Կրակը վառած
պահիր**

Կարգա՛
Հռոմեացիներ 12:9-21

**...Հոգով ջերմեռանդ
եղեք, Տիրո՛ջը
ծառայեցեք:**

Հռոմ. 12.11

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 84-86

■ Հռոմեացիներ 12

Իսրայելի քահանաներին պատվիրված էր, որ չթողնեն հանգչելու զոհասեղանի կրակը (Ղևտ. 6.9.12-13): Դրա համար ահագին գործ էր պահանջվում, այդ թվում նաև փայտ հավաքել օտար երկրի անտառում:

Մի շարք պատմաբաններ զոհասեղանի վրա այրվող կրակը համարում են Տիրոջ հանդեպ մեր ունեցած մշտավառ ջերմեռանդության խորհրդանիշ: Հոգևոր եռանդն այնպիսի մի բան է, որն անտեսել հնարավոր չէ: Հարկավոր է հոգ տանել նրա մասին, սնուցել այն աղոթքով և խոսքի խորհրդածությամբ: Առաքյալը հոգևոր ջերմությունը նյութ է դարձնում հռոմեացիներին ուղղված իր նամակում (Հռոմ. 12.1-2.11):

Մեր պաշտամունքի կրակը բոցավառ պահելու համար պետք է վառելիք հայթայթենք հույսով, համբերությամբ, տևաբար աղոթելով, առատաձեռնությամբ, հյուրասիրությամբ և խոնարհությամբ:

Հիսուսի հանդեպ մեր սերը, մեր հոգևոր եռանդի բանալին է:

Արդի հնոցները շատ կարևոր գործ են կատարում մեր տները տաքացնելու առումով: Մենք պարզապես որոշակի ջերմաստիճանի վրա ենք դնում ջերմաչափի սլաքը, և առավոտյան, երբ արթնանում ենք, տունը տաքացած է լինում: Իսկ նախկինում դրա համար պետք է կրակ վառեինք և վառելիք ապահովեինք: Չմոռանն առանց վառելիքի մնալը հավասարագոր է մահվանը:

Այդ նույնը ճշմարիտ է նաև հոգևոր կյանքի համար: Եթե մտածենք, թե մեր «հոգևոր կրակը» կարելի է այդքան հեշտորեն վառել, վտանգած կլինենք մեր ջերմ հարաբերությունը Տիրոջ հետ:

Իսրայելի քահանաներին պատվիրված էր, որ չթողնեն հանգչելու զոհասեղանի կրակը (Ղևտ. 6.9.12-13): Դրա համար ահագին գործ էր պահանջվում, այդ թվում նաև փայտ հավաքել օտար երկրի անտառում:

Մի շարք պատմաբաններ զոհասեղանի վրա այրվող կրակը համարում են Տիրոջ հանդեպ մեր ունեցած մշտավառ ջերմեռանդության խորհրդանիշ: Հոգևոր եռանդն այնպիսի մի բան է, որն անտեսել հնարավոր չէ: Հարկավոր է հոգ տանել նրա մասին, սնուցել այն աղոթքով և խոսքի խորհրդածությամբ: Առաքյալը հոգևոր ջերմությունը նյութ է դարձնում հռոմեացիներին ուղղված իր նամակում (Հռոմ. 12.1-2.11):

Մեր պաշտամունքի կրակը բոցավառ պահելու համար պետք է վառելիք հայթայթենք հույսով, համբերությամբ, տևաբար աղոթելով, առատաձեռնությամբ, հյուրասիրությամբ և խոնարհությամբ:

Հիսուսի հանդեպ մեր սերը, մեր հոգևոր եռանդի բանալին է:

**Ստուգի՛ր
երևացողը**

Կարգա՛

Կողոսացիներ 3.12-17

**...ինչպես որ
Քրիստոսը ձեզ
ներեց, այնպես էլ
դուք:**

Կող. 3.13

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 87-88

■ Հռոմեացիներ 13

Երբ Բիլը գնում է միջնակարգ դպրոցի շրջանավարտների 40-րդ հավաքին, հավաքվածների հետ 20 րոպե ողջագուրվելուց հետո նկատում է, որ այդ օրը դպրոցում երկու դասարանների շրջանավարտների հավաք կար, և ինքը սխալ հավաքի էր գնացել:

Բիլը, որ լրագրող էր, օգտվելով այս միջադեպից, այն գործածում է՝ բացատրելու համակարգչի հետ ծագած մի խնդիր, այն է՝ նախ քաննել երևացող բաները: Եթե համակարգչիդ ձայն չես լսում, ստուգի՛ր, թե արդյո՞ք ձայնը նվազագույն աստիճանի վրա չէ: Եթե այն չի միանում, ստուգի՛ր էլեկտրական հոսանքին միացած լինելը:

«Ստուգիր նախ երևացող բաները»: Սա կարող է լավ սկզբունք լինել նաև հոգևոր անհանգստությունները փարատելու համար: Կողոս. 3.12-17 համարներում թվարկվում են տասնյակի չափ հոգևոր հատկանիշներ, որոնք ցույց են տալիս առողջ հոգին: Դրանցից ուշագրավներն են կարեկցությունը, ազնվությունը, խոնարհությունը, համբերատարությունը, ներողամտությունը, սերն ու գոհունակությունը:

Մեր եկեղեցու առաջնորդներին կամ ուրիշ հավատացյալների քննադատելուց առաջ աղոթե՛նք Տիրոջը, որ մեզ ցույց տա մեր տկարությունները: Նախքան հարաբերությունները խզելը ստուգենք, թե համբերությունն ու ներողամտությունը կապված են մեր սրտին:

Նախ լավ նայիր սրտից ներս՝ քննելու համար նախ երևացողը, եթե նույնիսկ մեզ այնպես թվա, թե մեր բոլոր խնդիրների պատճառները ուրիշներն են:

Հիսուսանման սերը միշտ համբերատար է լինում ուրիշների սխալների հանդեպ:

Հավատքի ուսուցում

Կարդա՛
Ծննդոց 12.1-4

**Հավատով Աբրահամը
Հնազանդվեց, երբ
կանչվեց դուրս
գնալու այնտեղ...:**
Եբր. 11.8

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 89-90
■ Հոռնեացիներ 14

Անցնող ամռանը բեյսբոլի խաղացողներից Կոկոն շատ տպավորիչ խաղ ցուցադրեց: Մրցակից թիմի մի խաղացող մի հարվածով գնդակը հասցրեց դաշտի կենտրոնի ձախ կողմը: Գնդակը շեղակի էր գնում, երբ Կոկոն վազեց՝ այն բռնելու: Մարմինը գետնից բարձր՝ ցատկելու պահին Կոկոն ձեռքը երկարեց, որքան կարող էր, և հրաշքի նման որսաց գնդակը՝ գետնին չհասած: Դիտողներից շատերն ասացին, որ դա իրենց տեսած լավագույն ուսուցումն ու գնդակ բռնելն էր:

Արդյոք ի՞նչ էր մտածում մարզիկն այն պահին, երբ տեսավ գնդակի՝ օդ բարձրանալը: Իրեն ուղղված այդ հարցին նա պատասխանեց.

«Վստահ չէի, թե կհասնեմ գնդակին, բայց որոշեցի հնարավորն անել և վազել: Արածս հավատքի ուսուցում էր»: Եբրայեցիներին ուղղված նամակում կարդում ենք, թե ինչն'ը գտավ Աբրահամը, երբ «հավատքով» ճամփա ընկավ: Աստված կանչեց նրան, որ թողներ իր երկիրը և ազգականներին ու գնար «այն երկիրը, որ ցույց կտամ քեզ» (Ծննդ. 12.1): Աբրահամը «հավատքով» հնազանդվեց: Արդյոք Աստված քեզ կանչո՞ւմ է դժվարին գործի: Թերևս դրա համար պահանջվի գնալ մի տեղ, որտեղ մարդիկ օգնություն կարիք ունեն: Կամ վկայելու այնպիսի մեկի համար, ով իր սխալ կողմնորոշման պատճառով գտնվում է վնասակար ուղու վրա: Կամ ազնվություն և սեր ցույց տալ մեկին, ով իր հարաբերությունների մեջ քաջալերանքի կարիք ունի: Եթե վստահ չես, թե այդ գործը կարող ես անել, խնդրի՛ր Աստծուն, որ քեզ օգնի: Վստահի՛ր նրան և ընթացի՛ր դեպի այդ նպատակը: Դա կարող է կյանքիդ լավագույն խաղը լինել:

Երբ Աստված մարտահրավեր է ներկայացնում քեզ, ընդունի՛ր այն հավատքի ուսուցումով:

Բարեկարգություն

Կարդա՛
Դ Թագավոր. 22.11-23.3

**Արքան կանգնեց
սյան մոտ և Տիրոջ
առջև ուխտ դրեց...:
Եվ ամբողջ
ժողովուրդը ուխտ
արեց:**

Դ Թագ. 23.3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 91-93
■ Հռոմեացիներ 15.1-13

2001 թ. մայիսին մի անգլիացի
շավետարանիչ Լիվերպուլում
պատգամ տվեց Ութերորդ պատվի-
րանի մասին՝ «Մի՛ գողացիր» (Ելք
20.15. Երկրորդ Օրենք 5.19): Այդ
պատգամի արդյունքը շշմեցուցիչ
եղավ: Շատերի սրտերը փոխվեցին:
Մի հեղինակ իր հոգվածում գրել էր,
որ բազմաթիվ գողացված ապրանք-
ներ իրենց տներին վերադարձվե-
ցին, այդ թվում հյուրանոցային ան-
ձեռոցիկներ, հիվանդանոցային ան-
թացուպեր, գրադարանի գրքեր և
այլն: Նույնիսկ մեկը, որ հիմա
հոգևոր հովիվ է, վերադարձրել էր
այն սրբիչը, որը հետը տուն էր տա-
րել մարգաղաշտից, որտեղ աշխա-
տում էր:

Այդպիսի մի բան պատահել էր Հովսիա թագավորի իշ-
խանության 18-րդ տարում: Երկար տարիներ իշխած չար
թագավորների օրոք կորսվել էին Տիրոջ օրենքների արձա-
նագրությունները: Երբ Քեղկիա քահանայապետը գտնում է
Աստծու օրենքների գիրքը, հանձնում է Սափան ատենադ-
պիրին, որ այն կարդա թագավորին: Երբ թագավորը լսում է
այդ օրենքները, իր հագուստներն է պատռում և սգի մեջ է
մտնում դրանք անտեսելու համար: Շուտով թագավորն սկ-
սում է կրոնական բարեկարգություններ կատարել իր անձ-
նական կյանքում և ամբողջ ժողովրդի մեջ: Այդ օրինագրքի
միայն մեկ անգամ կարդացվելը հիմնովին փոխել էր ազգի
ապրելակերպը (Բ Թագ. 22.8-23.25):

Շատերն Աստվածաշունչ ունեն, բայց արդյոք այդ խոս-
քի ճշմարտությունը փոխե՞լ է նրանց կյանքը: Կարդանք
այն և շտկենք մեր հարաբերությունները Աստծու հետ:

Բա՛ց Աստվածաշունչը, կարդա՛ ուշադրությամբ,
հնազանդվի՛ր ուրախությամբ:

Կարելի՞ է մոռանալ

Կարդա՛
Փիլիպպեցիներ 1.1-11

**Գոհանում եմ
Աստծուց ամեն
անգամ, որ ձեզ
հիշում եմ:**

Փիլիպ. 1.3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 94-96
■ Հռոմեացիներ 15.14-33

Նոյեմբերյան մի պաղ և տխրաշունչ օր ներկա գտնվեցի բարեկամիս հուղարկավորությանը: Այրին հիշատակի իր խոսքն ասելիս սկսեց բարձրաձայն հեծկտալ: Նույն պահին միջամտեց եկեղեցու հովիվը՝ ասելով հետևյալ տարօրինակ խոսքերը. «Ոչի՛նչ, մի օր դու պիտի կարողանաս մոռանալ»:

Հնարավո՞ր է մոռանալ: Այրի կնոջ պահվածքը ցույց էր տալիս, որ նա չէր ուզում մոռանալ: Ամուսնուց մնացած քաղցր հիշատակները նրան մխիթարություն և ուրախություն էին բերում, նա ուզում էր կառչել դրանցից՝ հույսով սպասելով մի օր կայանալիք երկնային Հանդիպման:

Աստծու՝ մեզ տված ամենաթանկագին շնորհներից մեկն էլ հիշելու կարողությունն է: Մեր կյանքում կան շատ ցավեր ու հուսախաբություններ, որոնք պետք է, որ մոռանանք: Սակայն բարի հիշատակները հաճախ նման են մի գանձատուփի, որի միջից կարելի է հիշատակության արժանի շատ թանկ և քաղցր գանձեր դուրս բերել:

Պողոս Առաքյալն այդպես զգաց, երբ վերհիշեց փիլիպպեցիների եկեղեցում իր անցկացրած ժամանակը: Այդ մասին նա ասում է. «Գոհանում եմ իմ Աստծուց ամեն անգամ, երբ ձեզ հիշում եմ» (Փիլիպ. 1.3): Փիլիպպեի իր բարեկամներին հիշել կարողանալը նրան մեծ մխիթարություն բերեց, երբ Հռոմի բանտում սպասում էր իր դատավարությունը, և նրան մղեց ուրախությամբ ազդեցիկ նրանց համար:

Աստված մեզ թանկագին հիշատակները պահելու կարողություն է տվել: Կառչենք դրանցից, երբ դառնությունը կպատի մեզ:

Երբեք չպետք է թույլ տալ, որ այսօրվա ծանրությունը ջնջի երեկվա օրհնությունը:

Հատուկ Հանձնում

Կարգա՛
Հռոմեացիներ 16.1-16

**Ձեզ եմ Հանձնում
մեր Փիբե քրոջը,
որ.... շատերի խնամք
է տարել:**

Հռոմ. 16.1-2

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 97-99
■ Հռոմեացիներ 16

Երբ փոստատան աշխատողը
Թակում է մեր դուռը և հա-
տուկ նամակ հանձնում մեզ, այդ
նշանակում է, որ շատ կարևոր մի
բան ենք ստանում: Ըստ Աստվա-
ծաշնչի մի շարք մասնագետների՝
Փիբե քույրը անձամբ է տարել և
Հռոմի եկեղեցուն հանձնել Պողոս
Առաքյալի այն շատ կարևոր նամա-
կը՝ Առաքյալի վարդապետական
գլուխգործոցը: Դա ցույց է տալիս,
թե մեղավոր և կորսված մարդկու-
թյունը ինչպես կարող է փրկություն
գտնել Հիսուսի մահվան և հարու-
թյան նկատմամբ իր հավատքով:

Փիբեն, որի անունը նշանակում
է «փայլուն» և «ճառագայթող»,
ապրում էր Կորնթոսի նավահանգս-
տի մոտ գտնվող Կենքրա գյուղում, որտեղ Պողոս Առաքյա-
լը մնացել էր կարճ ժամանակով իր միսիոներական երրորդ
ճամփորդության ընթացքում:

Այդ կնոջ՝ իր հանդեպ ցուցաբերած ազնվության մասին
Առաքյալը գրեց Հռոմի եկեղեցուն. «Ձեզ եմ Հանձնում մեր
Փիբե քրոջը, որ Կենքրայի եկեղեցու սպասավոր է, որպես-
զի... հոգ տանեք նրան, ինչ որ ձեզանից պետք ունենա,
որովհետև ինքն էլ շատերի, հենց ինձ էլ խնամք է տարել»
(Հռոմ. 16.1-2): Փիբեն օգնել էր նաև ուրիշներին, որ Աստ-
ծու Խոսքը քարոզեն:

Մենք բոլորս «հոգևոր թղթատարներ» ենք: Ունենք Ավետա-
րանի այն բարի լուրը, որ Առաքյալը գրել և հանձնել է մեզ դա-
րեր առաջ: Փիբե քրոջ պես մենք էլ պետք է թե՛ խոսքով և թե՛
գործով օգնենք՝ այն փոխանցելու, հասցնելու մեր շուրջը գտնվող
մարդկանց, որոնք այդ կենսատու պատգամի կարիքն ունեն:

Մենք բոլորս «հոգևոր թղթատարներ» ենք: Ունենք Ավետա-
րանի այն բարի լուրը, որ Առաքյալը գրել և հանձնել է մեզ դա-
րեր առաջ: Փիբե քրոջ պես մենք էլ պետք է թե՛ խոսքով և թե՛
գործով օգնենք՝ այն փոխանցելու, հասցնելու մեր շուրջը գտնվող
մարդկանց, որոնք այդ կենսատու պատգամի կարիքն ունեն:

Մենք Աստծուն ծառայած կլինենք՝ Իր Խոսքին ուրիշներին էլ
բաժնեկից անելով:

**Ծառն ընդդեմ
արջի**

Կարգա՛

Երեմիա 8.4-12

Արագիլը երկնքում ժամանակի իր զգացողությունն ունի... իսկ իմ ժողովուրդը չգիտակցեց Տիրոջ օրենքները:
Երեմ. 8.7

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 100-102

■ Ա Կորնթացիներ 1

Հաճախ չի պատահում, որ ուտիկանը ստիպված լինի լուծել արջի և ծառի միջև ծագած վեճը: Վեճն այդ ծագել էր մի խաղի վերաբերյալ Հանդիմանությունը և ընդհարումով: Այն սկսել էին արջի մորթի հագած մի մարդ և ծառի կերպավորում ստացած մեկ ուրիշը: Մի ուտիկան ստիպված էր եղել նրանց բաժանել միմյանցից: Կերպավորվածները Կալիֆոռնիայի մի համալսարանից էին, որոնք ժողովրդին զվարճացնելու համար էին սկսել իրենց ելույթը, բայց շուտով այն վերածվեց իսկական կռվի:

Արջերն ու ծառերը ստեղծված չեն կռվելու համար: Ոչ էլ մենք: Սակայն պատմության ընթացքում մարդիկ, որոնք ստեղծված են սիրելու և

իրար ծառայելու համար, հաճախ են ատել և նախատել իրար:

Ջարմանալին այն է, որ ըստ Երեմիա մարգարեի՝ նույնիսկ նրանք, ովքեր գիտեն Աստծու օրենքը, կարող են իրար վիրավորել առանց զղջումի: «Մարդ չկա, որ զղջա իր չարությունների համար», - ասում է մարգարեն (Երեմ. 8.6): Ավելին, «այդպես էլ ամոթ ու ամաչել չիմացան» (Երեմ. 8.12): Նա խոսում է նաև Աստծու զարմանքի վրա, որ նույնիսկ վայրի կենդանիները այդ անհնազանդ մարդկանցից ավելի իմաստուն են պահում իրենց, քան նրանք, ովքեր «խաղաղություն, խաղաղություն» են ասում, մինչդեռ իրար մեծ վնասներ են հասցնում (Երեմ. 7.11):

Նա, որ թռչունների չվելը ծրագրել է իր հրամանով (Երեմ. 7.7), ոչ միայն նկատում է մեր սխալները, այլև մեր դատարկությունը լցնում է իր լեցունությունը: Այլընտրանքները շատ են՝ շնորհք-դառնություն, իմաստություն-հիմարություն, խաղաղություն-վեճ:

Չղջումն այն չէ, որ միայն «ցավում եմ» ասես, այլ այն, որ ասես «մեղքիցս հեռանում եմ»:

Եկեղեցու սիրտը

Կարգա՛
Ա. Թեոսաղոնիկեցիս 3.6-13

**Իսկ տերը ձեզ
աճեցնի ու ավելացնի
սիրով իրար և բոլորի
հանդեպ:**

Ա. Թեո. 3.12

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 103-104
■ Ա Կորնթացիներ 2

Իսկ տերը ձեզ աճեցնի ու ավելացնի սիրով իրար և բոլորի հանդեպ... որպեսզի ձեր սրտերը հաստատվեն անարատ սրբությամբ...» (Ա. Թեո. 3.12-13): Այս բառերով Առաքյալը ցույց է տալիս երկու կարևոր հատկանիշներ, որոնք կենսական են հավատացյալների համախմբման հաջողվածության համար. դրանք են՝ սեր իրար հանդեպ և ձգտում դեպի սրբություն:

Եկեղեցիների անդամները, շենքերը և բյուջեները կարող են տարբերվել իրենց մեծություններով:

Ճշմարիտ հաջողություն չափանիշը երևում է, երբ Քրիստոսի հետևորդները գործնականորեն են ցույց տալիս իրենց սերը Աստծուն և իրար ու նվիրված են մաքուր կյանքով ապրելուն:

«Ի՞նչ է ուզում քեզնից Տերը. իրավունք հաստատել, ողորմություն սիրել և պատրաստ լինել քո Տեր Աստծու հետևից գնալու» (Միք. 6.8):

Փոքր եկեղեցի՝ մեծ տեսիլքով, ավելի ազդեցություն ունի, քան մեծ եկեղեցի՝ փոքր տեսիլքով:

Ի՞նչն է, որ հաջողակ է դարձնում եկեղեցին. մեծաթիվ ներկաները կիրակնօրյա պաշտամունքին, միլիոն դոլարի հասնող բյուջե՞ն կամ արդիական գեղեցիկ շե՞նքը:

Բոլորս էլ գիտենք, որ վերևում հիշատակվածներից ոչ մեկն էլ եկեղեցին հաջողված անվանելու չափանիշ չէ: Եկեղեցու նստարանների կամ ժողովականների թիվը չափանիշ չէ: Աստված թվերով չի չափում մեր եկեղեցու հաջողությունը:

Նա նայում է եկեղեցու սրտին: Պողոս Առաքյալը շատ կարևոր մի եկեղեցի էր հիմնել Մակեդոնիայի մայրաքաղաք Թեսաղոնիկեում: Նա իր փափազն ուզեց հայտնել եկեղեցու անդամներին՝ գրելով. «Իսկ Տե-

**Սպառողի
մտայնություն**

Կարգա՛

Ա Կորնթացիներ 3.5-15

**Եթե մեկի շինած
գործը հաստատուն
մնա, վարձ կստանա:**
Ա Կորնթ. 3.14

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 105-106

■ Ա Կորնթացիներ 3

մեջ՝ մեզ փոխելով:

Սա առավել ճշմարիտ է մանավանդ Աստվածաշնչի վերաբերյալ: Երբ Խոսքը բնակվում է մեր մեջ, այն մեզ հետու է պահում մեղքի կործանարար ճանապարհով քայլելուց (Սաղմ. 118.11): Հիսուսն ասաց, որ երբ Իր խոսքերը բնակություն հաստատեն մեր մեջ, մենք կզառնանք ստեղծողներ և ոչ սպառողներ, տվողներ և ոչ առնողներ:

Առաքյալը, ակնարկելով հավատացյալներին, նրանց անվանում է «Աստծու գործակիցներ» (Ա Կորնթ. 3.9), որոնք կառուցում են այնպիսի բաներ, որ հնարավոր չի լինի սպառել Աստծու դատապարտության կրակով (Ա Կորնթ. 3.13-15): Ապա նա ստիպում է իր ընթերցողներին, որ իրենց լավագույնն անեն եկեղեցու շինության համար (Ա Կորնթ. 14.12):

Որպես հավատացյալներ՝ լավ է, որ ճանաչվենք ոչ թե իբրև ապրանք սպառողներ, այլ որպես պտուղ արտադրողներ:

ԱՆՃՆՎԵՐ ԿՅԱՆՔՐ ԻՆՃՈՒՄ Է ԻՍՎԻՏԵՆԱԿԱՆ ԽՈՒՆՃՐ:

Միրում եմ երբեմն կարգալ
առևտրի վերաբերյալ գրքեր,
սակայն չեմ սիրում, երբ հրատարակիչները գնորդներին «սպառողներ» են անվանում: «Սպառել» բառը նշանակում է վատնել, հատեցնել, կորցնել կամ ամբողջությամբ կործանել: Այն հիշեցնում է անտառի կրակը, որ կործանում է անսահման տարածության վրա գտնվող կանաչ խոտը և իր հետևից թողնում այրված ծառերի կոճղեր մոխրացած տունկեր:

Երբ գիրք ենք կարդում, դրանք չենք սպառում այն իմաստով, որ նրանք գործածությունից հետո այլևս գոյություն չեն ունենում: Իրականությունը դրա ճիշտ հակառակն է. դրանք տեղ են գտնում մեր էություն

**Տանջված
ճամփորդներ**

Կարգա՝
Մատթեոս 11.20-30

**Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր
հոգնածներ ու
բեռնավորվածներ, և
ես հանգիստ կտամ
ձեզ:**

Մատթ. 11.28

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 107-109
■ Ա Կորնթացիներ 4

Երեք ժամ ուշացումով վերջապես Հոնկոնգից հասանք Ջիկագո՝ այստեղից էլ մեկ այլ ինքնաթիռով մեր քաղաք թռչելու համար: Սակայն այդ ուշացման պատճառով 20 բոպե ուշացանք նաև մեր երկրորդ թռիչքից: Ավիացիոն ընկերությունը օդանավակայանի հյուրանոցներից մեկում գիշերելու տեղ տրամադրեց մեզ: Հյուրանոցի սպասավորների աչքին մենք հոգնած տեսք ունեինք: Նրանցից մեկն ասաց. «Տանջված ճամփորդներ»: Թերևս ճամփորդական իրողություններում այս արտահայտությունը հաճախ է գործածվում, բայց ինձ համար այն նորություն էր, թեև շատ տեղին էր ճամփորդության երկու

ծանր օր անցկացնելուց հետո:

Այդ փաստը փոխաբերական իմաստով ինձ մարդկային կյանքը հիշեցրեց: Մենք ուխտավորներ ենք այս երկրի վրա, ճամփորդներ՝ դեպի երկնային տուն ընթացող, որն անհնար է նկարագրել: Այդ ճամփորդության ընթացքում մեր հոգսերն ու բեռները երբեմն կարող են մեր հույսն ու ուրախությունը տանել մեզնից: Մենք կդառնանք «տանջված ճամփորդներ», որոնք կարիք ունեն բարոյական աջակցության, քաջալերանքի և կազդուրման: Աստված մեզ պես հոգնած ուխտավորներին կոչ ունի՝ ասելով. «Ինձ մո՛տ եկեք, բոլո՛ր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28): Միայն Տերն ինքը կարող է մեզ հանգստություն և ուժ տալ, որ կարողանանք շարունակել մեր ճամփորդությունը:

Հոգնա՞ծ ես կյանքիդ ճամփորդության ընթացքից: Դիմի՛ր Նրան: Նա պիտի քեզ զորացնի:

Երբ ճամփորդում կյանքի հոգսերով բեռնավորված, թո՛ւյլ տուր, որ Հիսուսը վերցնի բեռդ:

Ներքին

խաղաղություն

Կարգա՝

Եսայի 53-7-9

...բարեսիրտ եղե՛ք:

Չարի դիմաց չար չհատուցեք կամ բամբասանքի դիմաց՝ բամբասանք, այլ ընդհակառակն օրհնեցե՛ք:

Ա Պետ. 3.8-9

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 110-112

■ Ա Կորնթացիներ 5

Թեև շատ մտավորականներ նրան համարում էին հմուտ իմաստասեր, բայց նա խիստ հարձակման էր ենթարկվել իր իսկ եկեղեցու ժողովականների կողմից: Վերջիններիս կարծիքով այդ քարոզիչը սխալվում էր՝ ուսուցանելով, որ վերստին ծնունդ ունենալուց հետո մարդը պետք է հաղորդություն առնի:

Թեև նրան վտարեցին իր եկեղեցուց, բայց քարոզիչը շարունակեց սիրո և ներողամտության վերաբերմունք ցույց տալ նրանց: Նրա կողմնակիցներից մեկը վկայելով ասել է նրա մասին. «Ես երբեք չեմ տեսել դժգոհության նվազագույն նշույլ իսկ նրա դեմքի վրա... Նա իսկապես երևում էր որպես Աստուծու մարդ, որի երջանկությունը պատուհասելը շատ հեռու էր նրա թշնամիներից»:

Այդ քարոզիչը պարզապես հետևում էր իր Տիրոջ օրինակին: Երբ Հիսուսն անարգվեց, փոխարենը անարգանք ցույց չտվեց: Երբ հանիրավի ամբաստանվեց, մնաց լուռ, «Եվ ինչպես գառ՝ անմոռունջ կանգնած է խուզողի առաջ և նրա նման իր բերանը չի բացում» (Եսայի 53.7):

Դու էլ կարո՞ղ ես քո ներքին խաղաղությունը պահել, երբ մարդիկ հանիրավի քննադատեն քեզ: Երբ խնդրես Սուրբ Հոգուց, որ օգնի քեզ, կարող ես քրիստոնեական վերաբերմունքով հակադարձել քո դեմ եղած անտեղի մեղադրանքներին և բամբասանքներին:

Քո դեմ հնչած ամենավատ քննադատությունը կարող է ի հայտ բերել քո մեջ եղած լավագույնը:

Գագաթնակետը

Կարգա՛
Հուսմեացիներ 12.1-8

**....ձեր մարմինները
ներկայացրեք
կենդանի զոհ՝ սուրբ
ու Աստծուն հաճելի:**
Հռոմ. 12.1

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 113-115
■ Ա Կորնթացիներ 6

Մի հեղինակ իր «Գագաթնա-
կետը» գրքում նշում է, որ
առևտրական որոնումները երբեմն
անակնկալ հաջողություն են հաս-
նում մի բանալի որոշումով: Բազմա-
թիվ ընկերություններ շարունակում
են իրենց հաջողակ գործունեությունը
մեկ հիմնական ընտրության
շնորհիվ, որը համարվում է գործի
գագաթնակետը:

Թեև այդ սկզբունքը առևտրական
բնագավառում է գործում, սակայն այն
կարելի է կիրառել նաև քրիստոնեական
աշխատանքները հաջողեցնելու աշխա-
տանքներում: Երբեմն հայտնվում ենք
մի բարձր պատի առաջ: Պայքարում ենք
մի իրավիճակի դեմ, որը սպառնում է
անդամալուծել Տիրոջը ազդեցիկ ծառա-

յություն մատուցելու մեր կարողությունը: Այդպիսի ճակատագ-
րական ընդհանրություն է, որ կարող ենք «դարձակետային» որոշում
ընդունել ծանր կացությունը շրջանցելու համար: Այդ որոշումը
կամքը և սիրտը Աստծուն հանձնելն է: Հակոբ. 4.7 համարն ասում է.
«Հնազանդվեցե՛ք Աստծուն»: Իսկ Հռոմ. 12.1-ն ասում է.
«Աղաչում եմ ձեզ, եղբայրներ՛ր, որ ձեր մարմինները ներկայացնեք
կենդանի զոհ՝ սուրբ և Աստծուն հաճելի»: Հոժարակամ լինենք մեր
ծրագիրը զոհելու Նրան՝ մեծ նպատակների համար:

Ի՞նչ կարող էր պատահել, եթե Նոյն ասեր Աստծուն. «Ես
նավ չեմ շինի»: Ի՞նչ կարող էր պատահել, եթե Հովսեփը
չներեր եղբայրներին և չպաշտպաներ նրանց կյանքին
սպառնացող սովից: Կամ ի՞նչ կարող էր պատահել, եթե Հի-
սուսը մերժեր մեռնել խաչի վրա: Աստծու կամքին ենթարկ-
վելը գագաթնակետ է: Երբ անենք այդ ընտրությունը, Աստ-
ված մեզ կգործածի մեծ բաների համար:

Աստծուն ենթարկվելը իսկական հաղթանակ է:

**Աստված լալիս է
մեզ հետ**

Կարգա՛
Սաղմոս 115

**Տիրոջ աչքում
հարգելի է մահն իր
սրբերի:**

Սաղմոս 115.15

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 116-117
- Ա Կորնթացիներ 7.1-19

Բայց Հիսուսը մեզ ցույց տվեց, որ Աստված բաժնեկից է մեր սիրելիների մահվան առիթով առաջացած մեր վշտին ու ցավին, և իր Հոգին մեծ ցավով է լցվում:

Այս մտքերը ծնվեցին վերջերս՝ եղբորս հուղարկավորության ընթացքում: Նրա ընտանիքը և հոգևոր հովիվը գովաբանեցին եղբորս բարեգլխությունը, ազնվությունն ու առատաձեռնությունը: Այնուհետև մարդիկ, ովքեր եղբորս ճանաչել էին որպես առևտրական, խոսեցին նրա՝ պարկեշտ և վստահելի անձնավորություն լինելու մասին: Թեև եղբորս անունը լրագրային մահազդերում ամենաշատ հիշատակված անուններից մեկն էր, նրա մահը մեծ կորուստ էր մեզ՝ իր հարազատների և նրան սիրողների համար: Եվ մխիթարական է գիտենալ, որ Աստված անտարբեր չգտնվեց նրա մահով մեզ պատած ցավին: Ես հավատում եմ, որ նա լաց եղավ մեզ հետ:

Աստված միշտ բաժնեկից է մեր վշտին:

Ի՞նչ է ակնարկում սաղմոսերգուն, երբ ասում է. «Տիրոջ աչքերում հարգելի է մահն իր սրբերի» (Սաղմ. 115.15): Հաստատ է, որ Աստված չի ուզում կամ հաճելի չի համարում իր զավակների մահը: Եթե այդպես լիներ, սաղմոսերգուն չպիտի փառաբաներ Աստծուն իրեն մահվանից ազատելու համար: Կամ Հիսուսը չպետք է լար Ղազարոսի մահվան համար, երբ մոտեցավ նրա գերեզմանին (Հովհ. 11.33-35): Ես համաձայն եմ այն մեկնաբանների հետ, ովքեր ասում են. «Թանկ արժե Տիրոջ աչքերին իր սրբերի մահը»:

Այս աշխարհում, եթե հոչակավոր մեկը չես, քո մահը շատ շուտով պիտի մոռացվի բոլորի կողմից, բացի շատ փոքր ընտանեկան ու բարեկամական շրջանակից:

Պայքար ներսից

Կարգա՛
Գաղատացիներ 5.16-23

**Որովհետև մարմինը
հոգու հակառակն է
ցանկանում:**

Գաղ. 5.17

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 118.1-88
■ Ա Կորնթացիներ 7.1-19

Բժիշկա մի փոքրիկ կես նկատեց մաշկիս վրա և որոշեց, որ պետք է զբաղվել նրանով: Դա շատ նուրբ մի բան էր, որը պետք է բուժվեր, որպեսզի ավելի մեծանալով՝ վատ բանի չվերածվեր: Ես չէի կարծում, թե այդ կետը լուրջ խնդիր կարող է լինել, մինչև որ բժիշկա իմ ուշադրությունը չհրավիրեց նրա վրա:

Նա դեղագրեց ինչ-որ հատուկ դեղ, որը պետք է քսեի այդ կետին: Դեղը պիտի օգներ, որ մարմնիս լավ բջիջները գային այդ կետի վրա և պայքարեին վատ բջիջների դեմ: Այլ խոսքով՝ դեղը մի փոքրիկ պայքար էր սկսելու հիվանդացած և առողջ բջիջների միջև:

Նման պայքար է տեղի ունենում նաև մեր՝ հավատացյալներիս մեջ: Նախ մեղավոր խորհուրդներ են տեղ գտնում մեր մեջ: Դրանք պետք է դարմանվեն Սուրբ Հոգու միջոցով, որի գործն է պայքարել մեր մարմնի կողմից մեր մեջ ծնունդ առած վատ և վնասակար խորհուրդների ու զգացմունքների դեմ: Մարմինն արտադրում է անբարո խորհուրդներ, պղծություն, վեճ, ատելություն և նախանձ (Գաղ. 5.19-20): Սակայն եթե հավատքով հրավիրենք, որ Սուրբ Հոգին գա և մեզ փրկություն բերի, Նա կպայքարի այդ վատ խորհուրդների դեմ Հոգու պտուղով, որոնք են՝ «սեր, ուրախություն, խաղաղություն, համբերատարություն, քաղցրություն, բարություն, հավատարմություն, հեղուկություն, ժուժկալություն» (Գաղ. 5.22-23):

Հետևե՛լ ես Սուրբ Հոգու դարմանումին, որ քո մեջ բնակվելով՝ պայքարում է մարմնիդ մեղսալի պահանջների դեմ: Միայն այդպե՛ս կարելի հաղթել մեր ներքին պայքարում:

Աստծու հոգին պարտություն չի ճանաչում:

Հոգևոր

բարեխառնություն

Կարգա՝

Մարկոս 1.35-39

**Ջեր ամբողջ Հոգսը
նրա վրա՝ գցեցեք,
որովհետև նա ձեզ
համար Հոգ է անում:**
Ա Պետ. 5.7

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 118.89-176

■ Ա Կորնթացիներ 8

Ճառով արյան մեջ հայտնվում են որոշակի մանր պղպղակներ, որոնք իրենց հերթին պակասեցնում են թթվածինը և պատճառ են դառնում գլխապտույտի և հոգացավերի, մինչև իսկ անդամալուծության և մահվան: Այսօր գիտությունն արդեն տեղյակ է այդ բոլոր իրողություններին և հատուկ միջոցներով կարող է կանխել այդ երևույթները:

Մենք նույնպես կարիք ունենք մի վայրի, որտեղ կարող ենք նվազեցնել մեր կյանքի ճնշումները: Աստված միջոց է հայթայթել՝ բարեխառնելու մեր «Հոգևոր» ճնշումը: Առանձնացած պաշտամունքի պահը կարող է լինել այն վայրը, որտեղ մենք կարող ենք թեթևացնել մեզ վրա ճնշող բեռը (Մարկ. 1.35-39): Այնտեղ կարող ենք մեր բոլոր հոգսերը գցել Աստծու վրա (Ա Պետ. 5.7): Կենտրոնանալով Աստծու բավարարության վրա՝ կարող ենք ունենալ իր խաղաղության ապահովությունը (Եսայի 26.3):

Ունե՞ս Հոգևոր բարեխառնության վայր:

Իսկ նրանք, որոնք Տիրոջն են ապահովում, նոր ուժ պիտի ստանան: Եսայի 40.31

Հատուկ լեզու

Կարգավ՛
Ա. Կորնթ. 9.19-23

Ամենքի համար ամեն ինչ եղա, որ ինչ էլ լինի, մի քանիսին փրկեմ:

Ա. Կորնթ. 9.22

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 119-122
■ Ա Կորնթացիներ 9

ըմբռնել: Օրինակ՝ «չնորհք», «փրկված եմ» կամ «ապաշխարություն» բառերը: Սրանք բոլորն էլ հավատացյալների համար հատուկ նշանակություն ունեն, սակայն երբ գործ ունենք ոչ հավատացյալների հետ, պետք է պարզաբանել այդ բառերը: Օրինակ, «չնորհք» ասելու փոխարեն պետք է ասել «Աստծու ձրի պարգևած ներումը», իսկ «ապաշխարության» փոխարեն կարող ենք ասել «սխալներից հրաժարվել և հեռու մնալ»: Պողոս Առաքյալը միշտ ջանում էր ավելի ճկուն լինել իր միսիոներական ծառայության մեջ, որպեսզի կարողանար ավելի մեծ թվով մարդկանց Քրիստոսի Ավետարանը քարոզել (Ա Կորնթ. 9.19-23): Այդ թվում նա գործածում էր շատ հստակ բառեր՝ բացատրելու Քրիստոսի մահվան և հարության բարի լուրը:

Երբ մեր հավատքը բացատրենք պարզ լեզվով, մեզ լսողները կհասկանան, թե ինչ է նշանակում «նորից ծնվել», այսինքն՝ բարեփոխվել Հիսուսի սիրով և թողությունք:

Եթե Աստծու Խոսքն ունենք մեր մտքում, Նա կարող է ճիշտ բառեր դնել մեր քերականում:

Մեր օրերում երիտասարդներն ունեն իրենց հատուկ լեզուն և բառապաշարը: Օրինակ, երբ ասում են «լիակա՞մ եմ», նկատի ունեն, որ սաստիկ հոգնած են, հանգստի կարիք ունեն: Երբ ծնողներից «պանիր» են ուզում, ասել է, թե դրամ են ուզում: Մեկին նոր հագուստով տեսնելիս ասում են «է՛հ, դրամ»: Տարբեր ժամանակներում երիտասարդները երբեմն գործածում են իրենց հատուկ լեզուն, որը մենք դժվար ենք հասկանում, և որը կարծես հաճախակի փոփոխությունների է ենթարկվում:

Հավատացյալներն էլ ունեն իրենց հատուկ բառապաշարը: Նրանք երբեմն գործածում են բառեր, որոնք ոչ հավատացյալները չեն կարողանում

**Տեսանելի
Հուշարարներ**

Կարգա՛
Երկ. Օրենք 6.1-9

**Այս պատգամները, որ
այսօր հաղորդում եմ
քեզ, կպահես մտքիդ
ու հոգուդ մեջ:**

Երկ. Օրենք 6.6

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 123-125

■ Ա Կորնթացիներ 10.1-18

քում: Երբ Աստված պատվիրեց Հին Կտակարանի ժողովրդին, որ իր պատվիրանները պահեն, Նա ասաց նրանց, որ իր խոսքը տեսանելի հուշարարների վերածեն: «Իրանք որպես նշան կկապես քո ձեռքին, որ մնան անշարժ քո աչքերի առջև, դրանք կգրես քո տների մուտքին ու դռների վրա» (Երկ. Օր. 6.8-9): Այդպես անելու նպատակը Ֆիզիկական բարեգարգումը է՝ այլ հոգևոր ազատագրումը: «Զգո՛ւյշ եղիր, որ չմոռանաս եգիպտացիների երկրից՝ ստրկութեան տնից քեզ դուրս բերած քո Տեր Աստծուն» (Երկ. Օր. 6.13):

Հաճախ Աստվածաշնչից տախտակի կամ հուշող մի քարտի կամ սովորական օրացույցի վրա դուրս գրված համարները, ամբողջ օրը մեր աչքի առաջ լինելով, կարող են մեր ուշադրությունը կենտրոնացնել Տիրոջ վրա և մտածել տալ մեզ: Այդպիսի հուշարարները, որոնք մեզ հիշեցնում են Քրիստոսին ու իր խոսքը, կարող են խրախուսել մեր քայլերը՝ ավելի հնազանդվելու Նրան:

Տեղավորի՛ր Աստվածաշունչը հոգուդ մեջ և ոչ թե
գրադարանումդ:

Հետզհետե ավելանում է այն մարդկանց թիվը, ովքեր համոզված են, որ քայլաչափ գործածելն օգնում է զարգացնելու իրենց ամենօրյա մարզանքը: Քայլերը հաշվող այդ գործիքը թե՛ արձանագրում է կատարվածը և թե՛ խթանում մարզանքը: Արածդ քայլերի թիվն իմանալը քեզ քաջալերում է ավելի քայլելու:

Մի կին, որը նպատակ էր դրել օրական 10.000 քայլ անել, սկսել է ավելի շատ քայլել: Այն գիտակցությունը, որ ինքը քայլաչափով է քայլում, բոլորովին փոխել էր նրա ապրելակերպը:

Նույնպիսի տեսանելի հուշարարներ շատ կարևոր դեր կարող են ունենալ Հիսուսի հետ քայլելու ընթացքում:

Միջատարան

Կարգավճար
Առականեր 30.24-28

**Մըջյունը, որ
զորուծթյուն չունի,
բայց իր կերակուրը
պատրաստում է
ամռանը:**

Առ. 30.25

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 126-128
- Ա Կորնթացիներ 10.19-33

ներկայացնում է միջատներ և այլ փոքրիկ արարածներ: Նա ասում է, որ դրանք փոքր են, բայց շատ իմաստուն:

Նայե՛ք մըջյունին: Թեև տկար է, բայց Արարիչը նրան սովորեցրել է իր ամբողջ զորուծթյունը գործածել ապագայի նախապատրաստության համար: Ուշադրությո՛ւն դարձրեք նաև մորեխներին: Նրանք թագավոր չունեն, բայց երբ թվով շատանում են, Աստված նրանց սովորեցրել է, թե ինչպե՛ս ցատկեն և խմբովին առաջ գնան: Նայե՛ք սարդին. դա էլ ցածր դասակարգի մի միջատ է, սակայն Աստծու տված կարողությունը գործածելով՝ կարողանում է շատ բարձր տեղեր ելնել:

Դու է՛լ, սիրելի բարեկամ. երբեմն միջատի պես շատ փոքր ու անկարևո՞ր ես զգում քեզ: Եթե այդպես է, հիշի՛ր, որ Աստված իր իմաստությունը և մեծությունը ցուցադրում է փոքր բաների միջոցով: Դա ճշմարտություն է, որովհետև «Իր զորությունը տկարության մեջ է իրագործվում» (Բ Կորնթ. 12.9):

Աստծու իմաստությունը տրվում է նրանց, ովքեր
խոնարհաբար խնդրում են այն:

Տիլադելֆիայում կա մի կենդանաբանական այգի, որտեղ բնակվում են 100.000 միջատներ, և որն այցելում է տարեկան շուրջ 75.000 մարդ: Այդ միջատարանի հիմնադիրն ու սեփականատերն ասում է. «Դեռ մեկ միլիոնից ավելի միջատներ էլ ունեմ ամառանոցում», այսինքն՝ տարբեր տուփերի մեջ, որոնք շարված են գետնից մինչև առաստաղ և լցված են աշխարհի բոլոր կողմերից հավաքված մեռած ու չորացած միջատներով: Այցելուներին ցուցադրվում են բազմատեսակ միջատների նկարներ, տեսաժապավեններ, մանրադիտակներ:

Առակաների 30-րդ գլխում մի իմաստուն մարդ՝ Ագուր անունով,

**Մեր մեղքերը չեն
արձանագրվում**

Կարդա՛
Սաղմոս 129

**Եթե
անօրինություններս
քննես, ո՞վ կարող է
կանգնել քո առջև,
Տե՛ր:**

Սաղմ. 129.3

Աստվածաշունչը

մեկ տարում

- Սաղմոս 129-131
- Ա Կորնթացիներ 11.1-16

ուաբանում ենք Աստծուն, որովհետև Նրա շնորհքն ու ներողամտությունը մեզ թեկադրում են միշտ և ավելի սիրել Նրան:

Սակայն ի՞նչ կպատահի, եթե սայթաքելով վերադառնանք Հին մեղքերին, կամ մեղքը հաստատվի մեր մեջ: Պետք է ապաշխարենք և Իրեն սպասենք (Սաղմ. 129.5): Եվ պետք է համբերող լինենք, երբ Աստված աշխատում է: Մեր վիճակը երբեք հուսահատական չէ: Կարող ենք մեր «հույսը» Նրա վրա դնել, որ մեզ պիտի ազատի իր ժամանակին:

Երկու հիմնական իրողություն կա՝ Աստծու հավատարիմ և անսպառ սերը. «Քեզ չեմ թողնի ու երեսից չեմ գցի» (Եբր. 13.5), և ճշտված ժամանակին քեզ փրկելու Աստծու խոստումը. Նա պիտի փրկի մեզ բոլոր անօրինություններից (Սաղմ. 129.8) և պիտի ընդունի Իր Փառքի առջև մեծ ուրախությունը (Հուդա 24): Մեր մեղքերը ներված են մեզ, երբ հավատանք և խոստովանենք դրանք:

Սաղմոսերգուն ասում է. «Խորություններից քեզ կանչեցի՛, Տե՛ր» (Սաղմ. 129.1): Նրան հուզում է անցյալի արած և չարած գործերի համար իրեն մեծապես հանցավոր զգալու մասին հարցը. «Եթե անօրինություններս քննես, Տե՛ր, ո՞վ կարող է կանգնել քո առջև...» (Սաղմ. 129.3):

Բայց, փառք Աստծու, որ մեր Տե՛րը ներող է: Նա անցյալի մեղքերի հաշիվը չի պահում, որքան էլ շատ կամ ծանր եղած լինեն դրանք: Առաքյալն ասում է. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսի մեջ եղողների համար» (Հռոմ. 8.1): Աստծու ներողամտությունը մեզ առաջնորդում է ակնածելու Նրանից (Սաղմ. 129.4): Մենք պաշտում և փառաբանում ենք Աստծուն, որովհետև Նրա շնորհքն ու ներողամտությունը մեզ թեկադրում են միշտ և ավելի սիրել Նրան:

Երբ մենք ներված ենք, այլևս մեր մեղքերը չեն արձանագրվում:

Ո՞րն էր Աստված

Կարդա՛
Եբրայեցիներ 13.5-8

**Նա մեր մեղքերն էր
վերցնում և մեզ
համար չարչարվում...:**
Եսայի 53.4

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 132-134
■ Ա Կորնթացիներ 11.17-14

պոլեթյունների հետ էր, որոնք անմիջապես աշխատանքի լծվեցին՝ օգնելու գոհերի հետ կապված հարցերում ու նաև բոլոր նրանց, ովքեր կորցրին իրենց տները: Աստված հազարավոր մարդկանց հետ էր, ովքեր կարեկցություն ցույց տվեցին աղետյալներին՝ աղոթելով և նյութական օգնություն հասցնելով նրանց»:

Աստված մեզ հետ է, երբ պատահում է սրտակեղեք մի աղետ, ինչպիսին է սիրելիի կորուստը: Մեր կյանքի ցավալի պատահարների համար մենք չունենք կատարյալ և գոհացուցիչ պատասխան: Սակայն գիտենք, որ Աստված միշտ մեզ հետ է և պատրաստ՝ իրեն սիրող մարդկանց միջոցով մեզ օգնելու: Նրա խոստումն է՝ երբեք մեզ չլքել (Եբր. 13.5): Հիսուսը կոչվեց «Էմմանուել», որը նշանակում է «Աստված մեզ հետ» (Մատթ. 1.23): Եթե նույնիսկ տառապանքը փորձի պարտություն մատնել մեր միտքը, տակավին կարող ենք վստահ լինել, որ Աստված մոտ է և ամեն բան իր բարի նպատակին պիտի հասցնի:

Համալսարանի մի դասախոս
հարցնում է, թե Աստված արդե՞
յոք անգթաբար բացակայո՞ւմ էր Նյու-
Օռլեանի ահավոր հողմապտույտի ժա-
մանակ, որը բազմաթիվ տների քանդակե-
լու և մարդկանց մահվան պատճառ
դարձավ: Մենք ուզում ենք անմեղ ճա-
նաչել Ամենակարողին այդ մեծ աղետը
թույլ տալու համար, որը պատճառ
դարձավ մահվան սարսափի մատնելու
անպաշտպան մնացած ժողովրդին:
Աստված արդե՞յոք իրո՞ք բացակա է
նման իրավիճակներում: Հիշյալ դասա-
խոսն ասում է. «Ո՛հ, ամենեկին: Աստ-
ված անտեսանելի կերպով ներկա էր թե՛
տառապողների, թե՛ մեռնողների կող-
քին: Նա անհատ մարդկանց, համայնք-
ների, եկեղեցիների և այլ կազմակեր-
պությունների հետ էր, որոնք անմիջապես աշխատանքի լծվեցին՝
օգնելու գոհերի հետ կապված հարցերում ու նաև բոլոր նրանց,
ովքեր կորցրին իրենց տները: Աստված հազարավոր մարդկանց
հետ էր, ովքեր կարեկցություն ցույց տվեցին աղետյալներին՝
աղոթելով և նյութական օգնություն հասցնելով նրանց»:
Աստված մեզ հետ է, երբ պատահում է սրտակեղեք մի
աղետ, ինչպիսին է սիրելիի կորուստը: Մեր կյանքի ցավալի
պատահարների համար մենք չունենք կատարյալ և գոհացուցիչ
պատասխան: Սակայն գիտենք, որ Աստված միշտ մեզ հետ է և
պատրաստ՝ իրեն սիրող մարդկանց միջոցով մեզ օգնելու: Նրա
խոստումն է՝ երբեք մեզ չլքել (Եբր. 13.5): Հիսուսը կոչվեց «Էմ-
մանուել», որը նշանակում է «Աստված մեզ հետ» (Մատթ. 1.23):
Եթե նույնիսկ տառապանքը փորձի պարտության մատնել մեր
միտքը, տակավին կարող ենք վստահ լինել, որ Աստված մոտ է
և ամեն բան իր բարի նպատակին պիտի հասցնի:

Մեր կյանքի փոթորիկները պիտի փաստեն մեր խարսխի
գորությունը:

Մերժել

օգնությունը

Կարգա՛

Դ Թագավորներ 5.9-14

Բայց ամեն մեկին

Հոգու

հայտնությունը

օգուտի համար է

տրված:

Ա Կորնթ. 12.7

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 135-136

■ Ա Կորնթացիներ 12

Ձուն Ռուբինգը 1869-ին երա-
զում էր մի հսկայական կա-
մուրջ կառուցել Նյու Յորքի երկու մեծ
թաղամասերը՝ Բրուքլինը և Մանհեթը-
նը իրար կապելու համար: Սակայն,
դժբախտաբար, աշխատանքի ժամա-
նակ վթարի պատճառով ոտքի ծանր
վնասվածք ստացավ: Ապաքինման ըն-
թացքում այդ ճարտարապետը հրա-
ժարվեց ընդունել բժշկական խնամք՝
առարկելով, թե ինքը կարող է հոգ
տանել իր մասին: Բժշկական օգնու-
թյունը մերժելուց հետո նրա մարմ-
նում ի հայտ եկան փայտացման առա-
ջին նշանները, և շատ չանցած՝ նրա
կզակը քարացավ՝ անհնար դարձնելով
խոսելը և ժպտալը: Հետո նա խելա-
գարվեց և շաբաթներ անց մահացավ:

Աստվածաշունչն էլ ներկայացնում է նման մի պատմու-
թյուն իրեն ազատ համարող մի մարդու մասին, ով նույնպես
հակառակվում էր իրեն մատուցված օգնությանը: Նէեման
անունով ասորի զորավարը տառապում էր բորոտությամբ:
Նա գնում է Եղիսե մարգարեի մոտ՝ բուժում գտնելու: Սա-
կայն հիվանդ զորավարը նախապաշարումներ ուներ բուժ-
ման ձևի վերաբերյալ: Երբ Եղիսեն իր պատգամավորի միջո-
ցով լուր է ուղարկում Նէեմանին, որ գնա և Հորդանան գե-
տում յոթ անգամ հաջորդաբար լողանա, վերջինս խիստ
բարկանում է: Սակայն Նէեմանի ծառան լավ խրատ է տալիս
տիրոջը. «Եթե մարգարեն դժվար բան խնդրեր, չպե՞տք է կա-
տարեիր» (Դ Թագ. 5.13): Դրանից հետո Նէեմանը հետևում
է մարգարեի խորհրդին և բուժվում բորոտությունից:

Աստված մեզ շնորհք է տալիս՝ իրար օգնելու (Ա Կորնթ.
12.7): Բայց լինենք ընդունելու Աստծու՝ մեզ պարգած ձեռքը:

Օգնություն ստանալու առաջին քայլը հեզությունն է:

ԼՈՒՆ ԿԱԳ, ՀՈՂԻՍ

Կարգա՝

Գ Թագավորներ 19.1-12

**Երկրաշարժից հետո
կրակ կթափվի,
սակայն Տերը կրակի
մեջ չի լինի: Կրակից
հետո մեղմ օղի ձայն
կլսվի:**

Գ Թագ. 19.12

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 137-139

■ Ա Կորնթացիներ 13

վում է այն ձայնը, որը ամենից կարևորն է գուցե:

Եղիան հավատացել էր Հեզաբելի սպառնալիքներին ու իր ներքին ձայնին և փախել էր անապատ՝ մի քարայրում ապաստան գտնելու: Քարայրում եղիան սաստիկ որոտման, հզոր փոթորկի, երկրաշարժի և կրակի ձայներ լսեց (Գ Թագ. 19.11-12): Հետո լռութուն տիրեց, և Տիրոջ ձայնը լսվեց, որն ամենակարևորն էր՝ «մեղմ օղի ձայն» (Գ Թագ. 19.12):

Եթե ուզում ենք լսել մեր սրտերի հետ խոսող Աստծու ձայնը՝ Իր խոսքի ճանապարհով, պետք է հեռու քաշվենք աղմկոտ ամբոխից: Միայն երբ գիտենք լուռ մնալ, այն ժամանակ է, որ կարող ենք հասկանալ, թե ի՛նչ ասել է Աստծու հետ հաղորդակցության մեջ լինելը, ով այնքա՛ն հոգում է մեր մասին:

Այսօր՝ քո լռության մի ժամի, փորձի՛ր լսել և հասկանալ Աստծու ձայնը:

Աստծու ձայնը լսելու համար պետք է ցածրացնել աշխարհի ձայնի աստիճանը:

Մեր ժամանակներում ձեռքի փոքրիկ ընկալուչները, որոնք ականջին դնելով՝ երաժշտություն են լսում, մեծ մտահոգություն են առաջացրել լսողությունը կորցնելու առումով: Հաստատված է, որ այդ ընկալուչներով երկար ժամանակ բարձր երաժշտություն լսելը բազմաթիվ մարդկանց լսողության թուլացման պատճառ է դարձել: Այլ խոսքով՝ շատ բարձր ձայնը կարող է առաջացնել լսելու անկարողություն:

Ապրում ենք աղմկալի աշխարհում: Աղմուկը ծառայեցվում է առևտրական գովազդերով մեր ուշադրությունը գրավելու, մեզ խաբելու և մոլորեցնելու համար: Այդ տհաճ աղմուկի մեջ հեշտորեն խեղդ-

**Աշխատել բարեկամ-
ների համար**

Կարգա՝

Գործք 4.32-37

**....Նրանց մեջ ոչ մեկը
կարոտուեթյուն
չունենր:**

Գործք 4.34

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Սաղմոս 140-142

■ Ա Կորնթացիներ 14.1-20

Ամերիկայի Միացյալ Նա-
հանգների Մինեսոթա նա-
հանգի Մինիապոլիս քաղաքից վեց
բարեկամներ տներ նորոգելու խմ-
բակ են ստեղծել: Նրանք ամեն ամսի
մի շաբաթ օր հանդիպում են իրեն-
ցից մեկնումեկի բնակարանում և
միասնաբար անում են գործեր,
որոնք մենակ անել անհնար է: Քսան
տարվա փոխօգնություն փորձը
նրանց իրար կապված մի մեծ ընտա-
նիքի զգացողություն է հաղորդել:
Նման մի խումբ էլ կազմակերպվել
էր Վաշինգթոնում. սրանց նշանա-
բանն էր «Աշխատել բարեկամների
համար»:

Այս խմբերի հոգածությունը բա-
րեկամների հանդեպ հիշեցնում է
առաջին եկեղեցին (Գործք 4.32-37): Այդ շրջանում մեծ հա-
լածանք կար հավատացյալների դեմ, ուստի նրանք մեծ կա-
րիք ունեին իրար նեցուկ լինելու: Շատերը կամովին վաճա-
ռում էին իրենց ունեցվածքը և դրամը բերում առաքյալնե-
րին, «և ամեն մեկին տրվում էր, ինչի կարիք որ ունենում
էր» (Գործք 4.35): Նրանց «...սիրտն ու հոգին մեկ էր»
(Գործք 4.32):

Որպես Քրիստոսի հետևողներ՝ մենք կարիք ունենք իրար
նեցուկ կանգնելու և քաջալերելու: Թերևս դժվարանում ենք
որոշել, թե ինչպե՛ս կարող ենք ծառայել Քրիստոսին, կամ
գուցե ամենօրյա հարցեր ունենք կամ չգիտենք՝ ինչպես
դաստիարակել մեր անհնազանդ զավակին: Նման պարագա-
ները լավագույն առիթ են լսելու հավատացյալների խրատ-
ները և խնդրելու նրանց աղոթքը: Սիրով օգնենք իրար թե՛
Ֆիզիկապես և թե՛ հոգևորապես:

Հավատացյալներն ուժեղ են, երբ իրար կողքի են:

Իմ իշխանը

Կարգա՛
Եփեսացիներ 5.22-33

**Ամուսիններ՛ր,
սիրեցե՛ք, ձեր
կանանց:**

Եփես. 5.25

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 143-145
- Ա Կորնթացիներ 14.21-40

Աշխարհի բոլոր կողմերում մարդիկ ցնցվեցին, երբ 2006-ի սեպտեմբերին անակնկալորեն իմացան, որ «կոկորդիլոսի որսորդ» Սթիվ Արվին մահացել է: Նրա սերը կյանքի և Աստծու ստեղծած արարածների հանդեպ վարակիչ էր դարձել և ամբողջ աշխարհում մարդկանց համակրանքին արժանացել:

Երբ նրա մահվանից հետո մի լրագրող հանդիպել էր նրա կնոջ հետ, այրին ամուսնու հանդեպ իր սերն արտահայտելու համար ասել էր. «Ես կորցրի իմ իշխանին»: Որքա՛ն գորովալից ձև՝ ամուսնուն հիշելու:

Կինը Սթիվին անվանում էր իր իշխանը և լավագույն բարեկամը:

Մեր ժամանակներում հազվագյուտ են այր ու կնոջ նմանօրինակ հարաբերությունները: Հաճախ մամուլում կամ հեռուստատեսությունում ականատես ենք լինում ամուսինների միջև դառնություն, անարգանքի, թշնամական վերաբերմունքի: Որքա՛ն փափագելի է տեսնել անկեղծ սեր: Տեսնել գուլգեր, որոնք անձնվիրաբար գուրգուրում են իրար և միմյանց անվանում «իշխանս» կամ «իշխանուհիս»:

Ինչպե՞ս կարող է ամուսինը կնոջը սիրել իշխանավայել: Հետևյալ թեմադրանքները կարող են օգտակար լինել. լսել-երբ մեր կենակիցը խոսում է և անվախ բացում իր սիրտը: Սիրել կյանքը, փորձել հաճելի պահեր ստեղծել ամուսնական կյանքում: Առաջնորդվել հոգևորապես, աղոթքի և Աստծու հետ մտերիմ պահեր ունենալ միասին:

Այրե՛ր, եղե՛ք ձեր իշխանուհու իշխանը:

Ամուսնությունը հաջողվում և ծաղկում է սիրո և հարգանքի մթնոլորտում:

Թափանցի՛ր մեջը

Կարդա՛
Սաղմոս 45

**Լսեցինք, թե ինչ է
խոսում Տեր Աստված
մեր. խղաղության
մասին պիտի խոսի իր
ժողովրդի, իր
սրբերի... Հետ:**

Սաղմ. 84.9

Աստվածաշունչը
մեկ տարում

- Սաղմոս 146-147
- Ա Կորնթացիներ 15.1-28

ջի՛ր ինձ, և ես պատասխան կտամ քեզ» (Երեմիա 33.3): Այնտեղ չեն ասում. «Բոլոր գծերը զբաղված են: Քո զանգը կարևոր է ինձ համար, սիրելի՛ս, սպասի՛ր գծի վրա»: Այսպիսի բաներ չկան, երբ իսկապես հարաբերում ենք Աստծու հետ: Չեմ պատկերացնում, թե սրանից ավելի լավ կապի միջոց կա:

Աստծու հետ հաղորդակցությունը նման է երթևեկ ունեցող փողոցի: Նա մեզ հետ խոսում է Իր Խոսքի ճամփով, երբ ակնածանքով և աղոթքի ոգիով դիմենք Իր ներկայությունը և ուզենք լսել այն մաքուր ու մեղմ ձայնը, որ Սուրբ Հոգին մեզ է փոխանցում: Նա թանկ գին է վճարել մեր հաղորդակցության գծերը բաց պահելու համար, որպեսզի մենք կարողանանք վայելել Իր հետ լինելու ուրախությունն ու խղաղությունը՝ Իրեն ճանաչելով որպես մեր կյանքի միակ Աստված (Սաղմ. 45.10):

Նրա ձայնը լսելու հաճույքը մի կոչ է, որը երբեք չպիտի ուզեիր կորցնել:

Անցել են այն ժամանակները, երբ հեռախոսի մյուս ծայրից քեզ պատասխանում էր կենդանի խոսակիցը: Հիմա, երբ ուզում ենք որևէ մեկի հետ հեռախոսային կապ հաստատել, հաճախ մեզ ողջունում է ձայնագրված պատասխանը:

Ես ուրախ եմ, որ այդպիսի իրավիճակ չկա, երբ ուզում ենք հաղորդակցվել մեր Երկնավոր Հոր հետ: Նա միշտ տեղում է: Խոսքի ձայնագրության կարիքը չկա: Ոչ էլ մի երկրորդ թիվ սեղմելու՝ ձայնագրված հավելյալ բացատրությունները լսելու համար: Եվ ոչ էլ մեկ ուրիշ գծի միջամտություն կարող է խանգարել ձեր խոսակցությունը: Փա՛ռք Աստծու: Նա ուրախություն էր կոչ է անում. «Կան-

Ցանկեր

Կարգա՛
Ա. Կորնթ. 15.42-53

**Ոչ թե բուրս
կննջենք, այլ բուրս
կփոխվենք:**
Ա. Կորնթ. 15.51

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սաղմոս 148-150
■ Ա Կորնթացիներ 15.29-58

Երեխայի մեջ նույն մտապատկերն էին ծնել:

Պողոս Առաքյալը սերմ ցանելու բացատրությունը գործածում է՝ Կորնթացիների եկեղեցուն մահը, գերեզմանում թաղվելը և հարություն առնելը նկարագրելիս (Ա Կորնթ. 15): Նա ասում է, որ հավատացյալների մարմինները, եթե նույնիսկ թաղվեն հողի տակ, մի օր հարություն են առնելու նոր կյանքի համար (Ա Կորնթ. 15.42): Մեր բնական մարմինը տկար է, բայց մեր հոգևոր մարմինը ազատ է լինելու հիվանդություններից, անկումից և մահից (Ա Կորնթ. 15.43-44): Մեր նոր մարմինը պիտի փառավորվի և օծովի զորությամբ, ինչպես Հիսուսի մարմնական հարությունը:

Հույսով սպասում ենք այն օրվան, երբ փողը պիտի հնչի, Քրիստոսով ննջեցյալները հարություն պիտի առնեն, «և մենք կփոխվենք» (Ա Կորնթ. 15.52): Եվ մինչ սպասում ենք այդ օրվան, տարածենք բարի լուրը (Ա Կորնթ. 15.56-57):

Հիսուսի հարությունը երաշխավորում է նաև մեր հարությունը:

Ութ տարեկան մի տղա դպրոցում սկսել էր սովորել, թե ինչպե՛ս են ցանվում և աճում բույսերը: Նրան շատ էր հետաքրքրել, թե ինչպե՛ս է փոքրիկ սերմը ծլարձակում և հողը ճեղքելով՝ դուրս գալիս, ապա որոշ ժամանակ անց դառնում խոշոր ծառ:

Այդ շրջանում երեխան իր ընտանիքի հետ ներկա է լինում մի հուշարկավորություն: Պաշտամունքի ժամանակ հոգևոր հովիվը խոսում է մարմնական հարություն մասին:

Մի քանի օր անց, երբ ընտանյոք անցնում էին գերեզմանոցի մոտով, տղան ասում է. «Այստե՛ղ է, որ մարդ են ցանում»: Հողի մեջ սերմ ցանելը և մարդու մարմինը թաղելը

Ողջամտություն

Կարդա՛
Առակներ 1.20-33

**Տերն է տալիս
իմաստությունը, և
նրանից են բխում
գիտությունն ու
հանճարը:**

Առ. 2.6

Աստվածաշունչը
մեկ տարուն
■ Առակներ 1-2
■ Ա Կորնթացիներ 16

Տրանսիացի իմաստասեր Վոլ-
թերն ասել է. «Ողջամտու-
թյունն այնքան էլ համընդհանուր բան
չէ»: Իրոք, հասարակությունը, որի մեջ
ապրում ենք, դառնում է հետզհետե
ավելի ու ավելի խնդրահարույց: Ներ-
կայուն բազմաթիվ արտադրանքների
վրա նախազգուշական ծանուցումներ
են գրվում, որովհետև շատ մարդկանց
մոտ պարզ դատողությունն անգամ
բացակայում է: Տեսե՛ք հետևյալ նա-
խազգուշացումները, որոնք գրված են՝
- մազեր չորացնող սարքի վրա.
«Մի՛ օգտագործիր քնած ժամա-
նակ»:

- արդուկի վրա. «Հագուստդ մի՛
արդուկիր մարմնիդ վրա»:

- շղթայով էլեկտրական սղոցի

վրա. «Մի՛ փորձիր հոսանքն անջատել ձեռքով»:

Համընդհանուր դատողություն կարող ենք ունենալ փոր-
ձով կամ ուսման միջոցով, որ ստանում ենք նրանցից, ում վս-
տահում ենք: Սակայն Աստծու Խոսքը լավագույն աղբյուրն է՝
զարգացնելու մեր ընտրելու և դատելու կարողությունը: Այս
իմաստով Առակների գրքում երեք կարևոր բառեր կան, որոնք
հաճախ են կրկնվում՝ իմաստություն, գիտություն և ըմբռնո-
ղություն: Աստված այս գիրքը ողջամտությամբ է կազմել:

Առակներ 11.12-ը խրատում է ինքնագուստ լինել.
«Իմաստուն մարդը լուռություն է սիրում»:

Առակներ 17.27-ը զգուշացնում է. «Իր խիստ խոսքը գս-
պողն իմաստուն է, համբերատարը՝ խելացի»:

Առակներ 20.13-ը գործնական է. «Աչքերդ բա՛ց արա և կշ-
տացի՛ր հացով»: Ավելի ողջամտություն ունենալու համար
գիմի՛ր Աստծու Խոսքին՝ ամենօրյա իմաստության աղբյուրին:

Գիտությունն առանց ողջատության հիմարություն է:

Անել, ինչը որ ճիշտ է

Կարգա՝
Սաղմոս 14

**...Ով անում է այս, նա
հավիտյան չի
սասանվի:**

Սաղմ. 14.5

Աստվածաշունչը
մեկ տարում

- Առակներ 3-4
- Բ Կորնթացիներ 1

որովհետև դա ճիշտ է: 14-րդ Սաղմոսը ներկայացնում է կենդանի մարդու պատկեր, ում նկարագիրը չի կարող ճշգրիտ լինել առանց Աստծու հետ հարաբերվելու:

Սաղմոսներգուն հարց է տալիս. «Տե՛ր, ո՞վ պիտի ապրի քո վրանում» (Սաղմ. 14.1): Պատասխանը կարող է լինել՝ ամեն օր օրինակելի կյանքով ապրելը. «Նա, ով անբասիր է ընթանում, արդար գործ է կատարում, ճշմարտություն խոսում իր սրտում» (Սաղմ. 14.2): Ապա շարունակում է՝ ավելացնելով՝ պարկեշտ հարաբերություններ մեր ընկերների և մեր ձավորների հետ (Սաղմ. 14.3-4), նաև ուղղամտություն՝ նյութական հարցերում (Սաղմ. 14.5):

Բարոյական կյանքով ապրելը շատ ավելի բարձր հասկացողություն է, քան այն գիտաժողովի քննարկման նյութ դարձնելը: Այն միջոց է՝ մեր ապրած կյանքով Քրիստոսին ներկայացնելու: Անել այն, ինչը ճիշտ է. միշտ անել ճիշտը:

Չկա ավելի հարուստ կտակ, քան ուղղամտությունը:

Մի հեղինակ իր «Բարոյագիտություն» գրքով և իր դասախոսություններով հաճախ կոչ է անում մարդկանց, որ ընտրություններ անելիս հիմնվեն ավելի շատ սկզբունքների, քան անձնական հետաքրքրությունների ու հարմարության վրա: Նա հաճախ հարց է տալիս ունկնդիրներին՝ ինչո՞ւ հարգել բարոյագիտական սկզբունքները:

Նա ասում է, որ բազմաթիվ պատասխաններ ընդհանրապես կենտրոնանում են պարկեշտության և բարոյականության վրա՝ պատժից խուսափելու և խղճի մաքրության համար: Ընդունելով, որ բարոյական սկզբունքների կիրարկման բարիքները բազում են, նա շեշտում է, որ ճիշտ բանը պետք է անել,

**Ցանկացած տեղ՝
Հիսուսի հետ**

Կարդա՛
Ելք 33.12-17

**...մի՛ վախեցեք ու մի՛
զարհուրեք... քանզի
Տերը ձեզ հետ է:
Բ Մնաց. 20.17**

Աստվածաշունչը
մեկ տարում

- Առակներ 5-7
- Բ Կորնթացիներ 2

Երբ մեր զավակը դեռ փոքր էր, մի անգամ հետո տարա մեր երեխաների դայակին տուն բերելու: Երբ մոտեցա վերջինիս տանը, տեսա, որ շունը, որը սովորաբար կապված էր լինում ետնաբակում, պառկած է դռան առաջ: Առաջին հայացքից շունը հանդարտ և բարի թվաց ինձ: Սակայն, ի՛նչ անակնկալ, հանկարծ տեղից բարձրացավ և հարձակվեց տղայիս վրա: Տղաս, սաստիկ վախեցած, սկսեց մեջքս ի վեր մագլցել, ապա փաթաթվեց վզիս: Իսկ ես, արդեն մենակ, ջանացի պաշտպանվել շան հարձակումներից: Երբ փորձեց ոտքս կծել, ես քացով հետ շարտեցի նրան: Մինչ այդ դուրս եկավ տանտերը, կանչեց շանը և կողքի տարավ:

Վերջում, երբ ավտոմեքենա էինք նստում, տղաս նայեց ինձ և ասաց. «Հայրի՛կ, ես ամեն տեղ կարող եմ գնալ քեզ հետ»: Երեխայիս վստահությունն, անշուշտ, սխալ բանի վրա էր հիմնված: Ես կարող էի մի օր էլ հուսախաբ անել նրան: Սակայն ես հաճախ, երբ ինձ վախ է պատում, մտածում եմ Նրա խոսքի մասին:

Երբ Մովսեսը մատնվեց անորոշ վիճակի, պաղատեց Աստծուն՝ ասելով. «Արդ, եթե քո շնորհին եմ արժանացել ես, ինձ հայտնապես երևա, որպեսզի իմանամ, որ քո այս ժողովուրդը մեծ ազգ է լինելու» (Ելք 33.13): Տերը պատասխանեց. «Ես ինքս պիտի գնամ քո առաջից ու պիտի տեղավորեմ քեզ» (Ելք 33.14):

Ահազգու կացության մեջ գտնվելիս կամ հարձակման դիմազրավելիս վստահությամբ ասենք. «Տե՛ր, ես կարող եմ ցանկացած տեղ գնալ քեզ հետ»:

Չվախենաս, ուր էլ գնաս, եթե Աստված քայլում է քեզ հետ:

**Հորի ծննդյան
տարեդարձը**

Կարդա՛
Հոբ 3

**Քանզի ինչ բանի
երկյուղն ունեի՝
հասավ ինձ վրա:**

Հոբ 3.25

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Առակներ 8-9
■ Բ Կորնթացիներ 3

պաղատեց՝ ասելով. «Կորչի թող օրն այն, երբ ես ծնվեցի» (Հոբ 3.3): Հորը Աստծուց խնդրեց, որ ջնջի ոչ միայն տարին, այլև իր ամբողջ գոյությունը հիշատակը: Նա ապրել էր հաջողության և հարգանքի տարիներ: Իսկ հիմա հարցականի տակ էր գրել իր ապրելու նպատակը (Հոբ 3.20): Հորն ուզում էր մեռնել և մոռացվել, բայց Աստված ուզում էր, որ նրա անունն ու պատմությունը միշտ հիշվեն: Աստված Հորին նրա ուզածը տալուց բացի, նաև գալիք սերունդներին տվեց այն, ինչի կարիքը նրանք պիտի ունենային.

- Տեսնել ներքին հոգևոր պայքարը Աստծու և Սատանայի միջև. որպես արդյունք՝ Աստծով ներշնչված մի վավերագրություն տառապանքի մասին, որը դարերի ընթացքում անհամար մարդկանց մխիթարության միջոց է դարձել:

Երբ պատահի այն, ինչից վախենում ենք, վստահ լինենք, որ Աստված կարող է ամեն բան բարու գործակից դարձնել:

Մեր բարձրագույն բարիքը կարող է գալ մեր տառապանքից:

Մահ, ամուսնալուծություն, հիվանդություն. այս երեքը կարող են տառապանքի գլխավոր պատճառներ դառնալ: Նրանք մեր կյանք են թափանցում վշտի մրրկահողմի պես և կասկածներ արթնացնելով՝ ի չիք դարձնում մեր բոլոր երազները:

Բարեկամիս հետ որոշեցինք, որ անցած տարին այնպիսին էր, որ երկուսս էլ պետք է մոռանանք այն: Երկուսս էլ անցել էինք այդ երեք փորձությունների միջով:

Մեր խոսակցությունը հիշեցրեց Հորին: Նա կարճ ժամանակի ընթացքում կորցրել էր իր զավակներին, առողջությունը, հարստությունը և իր կնոջ հարգանքը: Հորի հուսահատությունն այնքան մեծ էր, որ նա

**Առաջնորդի՛ր
նրանց դեպի խաչը**
Կարգա՛վ
Ա. Կորնթացիներ 1.18-25

**Սակայն քաղ լիցի, որ
ես պարծինամ, բայց
միայն մեր Տեր
Հիսուս Քրիստոսի
խաչով....:**

Գաղ. 6.14

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Առակներ 10-12

■ Բ Կորնթացիներ 4

մխիթարություն են գտնում այդ լուռ վկայության մեջ՝ իրենց ծանր ողբերգության մեջ զգալով երկնային ներկայությունը: Եվ երբ մի լրագրող զավակին կորցրած մի ընտանիքի հետ աղետի վայր է գալիս, վշտաբեկ հայրը նրան բերում է այդ խաչի մոտ:

Աշխարհի մարդկության ցավի և չարիքի լուծումը իմաստասիրական ապացույցների կամ աստվածաբանական տեսությունների մեջ չէ: Իսկական և ամբողջական լուծումը Գողգոթայի խաչն է, որի վրա խաչված և հարուժյուն առած Քրիստոսը մեր մեղքերի բեռը իր վրա կրեց և «Նա ինքը մեր մեղքերն իր մարմնի մեջ խաչափայտի վրա բարձրացրեց, որ մեղքերից հեռանալով՝ արդարության համար ապրենք» (Ա. Պետ. 2.24):

Միրելի՛ բարեկամ, եթե տակավին Գողգոթայի խաչի մոտ առաջնորդված չես, թո՛ւյլ տուր, որ քեզ տանեմ այնտեղ: Նա մեռավ քեզ համար և հարուժյուն առավ: Հավատա՛ նրան և պիտի փրկվես (Ա. Կորնթ. 1.21):

Շատ սրտաճմլիկ պատմու-
թյուններ լսեցինք 2001 թվա-
կանի սեպտեմբերի 11-ին ահաբեկիչ-
ների կողմից Նյու Յորքի Առևտրի
Համաշխարհային կենտրոնը պայ-
թեցնելուց հետո: Այդ պատմու-
թյունների մեջ հոգևորապես ավելի
կարևոր էր մի երկաթագործի հետ
կատարվածը: Երբ նա օգնում էր
մարմինները դուրս բերելու, փշրված
աղյուսների ճիշտ մեջտեղում նկա-
տում է երկու պողպատե ձողեր՝ խա-
չի ձևով ագուցված:

Իրեն պարտավորված զգալով
Աստուծու սերը խորհրդանշող այդ
երևույթի հանդեպ՝ նա հաճախ սրտա-
բեկ այցելուներ է տանում իր հետ՝
ցույց տալու իր տեսածը: Շատերը

Երկինք տանող ճանապարհն սկսվում է խաչից:

Գլուխգործոց

ստեղծել

Կարգա՛

Բ Կորնթացիներ 5.12-21

**Ուրեմն, եթե մեկը
Քրիստոսի մեջ է՝ նոր
ստեղծված է. հներն
անցան, ահա ամեն
բան նոր եղավ:**

Բ Կորնթ. 5.17

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Առակներ 13-15

■ Բ Կորնթացիներ 5

ծում էր իր յուրաքանչյուր նկար: Ի վերջո անհամար գույների ներդաշնակ միախառնվելուց ստացվում էր մի գեղանկար, որը հորս կարծիքով արժանի էր իր ճիգերին ու հոգնությունը:

Երբ մտածում եմ հորս՝ նկար ստեղծելու համբերության մասին, միտքս կենտրոնանում է մեր Երկնավոր Հոր ստեղծագործության վրա: Աստված նայում է մեզին յուրաքանչյուրի կյանքին և այնտեղ տեսնում անիմաստ ու ոչ կատարյալ բաներ: Որքա՛ն սիրով ու համբերությամբ է նա աշխատում մեզ՝ որպես իր ստեղծագործությունները, կատարյալ դարձնելու, «Իր Որդու պատկերին կերպարանակից անելու» (Հռոմ. 8.29) համար:

Ի՛նչ ուրախալի երևույթ է ունենալ նման Աստված, որը նորոգում է մեզ (Բ Կորնթ. 5.17) և բնավ չի հոգնում՝ իր գործությունն ու ջանքերը մեր կյանքերին տրամադրելով:

Միայն Աստված կարող է բարեփոխել մեղքով ժանգոտած սիրտը և այն վերակերտել որպես շնորհքի գլուխգործոց:

Իմ ամենավաղ մանկական հուշերից մեկը հորս նկարչուլթյունն է: Կտավե մեծ պաստառի առջև, նախապես ընտրված գույներով ներկապնակը ձեռքին, ժամերով նստած իր աթոռին, մի գավաթ սուրճով, նա ժամերով կենտրոնացած ու համբերությամբ շարունակում էր իր աշխատանքը:

Փոքրիկ երեխա՛ նստում էի մեր տան աստիճաններից մեկին և հիացած դիտում էի հորս աշխատանքը: Հետաքրքրությունս ծագում էր ոչ թե այն մտքից, թե հորս աշխատանքը նրան մեծ արվեստագետ է դարձնում: Ինձ ավելի հետաքրքրում էր նրա սքանչելի ու երկարատև, անխոնջ համբերությունը, որով ստեղծում էր իր յուրաքանչյուր նկար: Ի վերջո անհամար գույների ներդաշնակ միախառնվելուց ստացվում էր մի գեղանկար, որը հորս կարծիքով արժանի էր իր ճիգերին ու հոգնությունը:

Զին և իր որդին

Կարդա՛
Առակներ 16.18-25

**Պակասամիտ մարդն
արհամարհում է
ընկերներին,
իմաստուն մարդը
լուռությամբ է սիրում:
Առ. 11.12**

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Առակներ 16-18

■ Բ Կորնթացիներ 6

ձիուն իր թուլութունը անկեղծորեն խոստովանելու համար:

Աստվածաշունչն ասում է. «Կործանմանը նախորդում է թշնամանքը, անկմանը՝ չար բարքը» (Առ. 16.18): Կյանքն ունի մեր թուլութուններն ու սնափառութունը ցույց տալու ձևը: Բայց սովորել այն դասը, որ «կործանման առջևից հպարտութունն է քայլում», կարող է մեզ համար դարձակետ դառնալ, որ մեր ուշադրութունը հեռացնելով ինքներս մեզ փառաբանելուց՝ կենտրոնացնենք Աստծու վրա: Երբ որդեգրենք խոնարհ հոգի Աստծու և մարդկանց առջև, կարող ենք իմաստության միջոց դառնալ ուրիշների համար. «Ուր թշնամանք է մտնում, այնտեղ կա նաև անարգանք: Խոնարհների բերանն իմաստություն է խորհում» (Առ. 11.2):

Երբ փառաբանում ենք մեր կարևորութունը, ճախողում ենք: Բայց երբ փառաբանում ենք մեր բոլորի կարիքները հոգացող Աստծուն, իմաստուն կեցվածք ենք ստանում:

Հպարտությունն ամաչեցնում է, իսկ խոնարհությունը
իմաստություն է բերում:

«**Զին և իր որդին**» այլաբանական գրքում ներկայացված է մի խոսող ձի՝ Բրի անունով: Նրա կարծիքով իր որդին, որը դեռ մտրուկ է, կարիք ունի կրթվելու: Հայր ձիու ամբարտավան կեցվածքն ու կարծիքները հաճախ նրա գերակայության մթնոլորտն են ստեղծում: Նա իրեն երևակայում է պատերազմի քաջ նժույգ՝ օժտված մեծ ճարպկությամբ և քաջությամբ: Սակայն լսելով առյուծի մոնչյունը՝ փախչում է և իր երամակը թողնում անպաշտպան:

Մի օր Բրին հանդիպում է Ասլանին, որը անտառի առյուծների թագավորն է: Զին խոստովանում է, որ ինքը ամբարտավան և վախկոտ ճախողակի մեկն է: Ասլանը գովում է

Անուն՝ անվան վրա

Կարգավ
Մատթեոս 1.1-16

**Աբրահամի որդի
Դավթի որդի Հիսուս
Քրիստոսի ծննդյան
գիրքը:**

Մատթ. 1.1

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Առաջին 19-21
■ Բ Կորնթացիներ 7

կայացնում է այն պատկերը, որով ճշմարիտ հրեան ուզում է գնալ և հասնել իր արմատներին՝ կրոնական մաքրություն և հարազատություն հաստատելու համար: Երկրորդ՝ այդ անունները ցույց են տալիս Աստծու նախածրագրի ճշմարտությունը: Նրանք արտահայտում են Աստծու՝ անցյալում ունեցած ծրագրի անշեղորեն իրագործվելը մինչև Մեսիայի ծնունդը: Աստված Հիսուսի ծննդյան շառավիղը ցույց տալու համար գործածել է ամեն տեսակի և մակարդակի մարդկանց՝ հողագործների, թագավորների, պոռնիկի, շնացողների, ստախոսների: Երբ Մատթեոսի Ավետարանի առաջին գլխում կարդում ենք այդ անունները, հիշում ենք Աստծու հավատարմությունը:

Հիսուսի հանդեպ ունեցած մեր հավատքով, որպես Աստծու ընտանիքի անդամ՝ պետք է հիշենք Նրա հավատարմությունը և փափազը՝ գործածել մեզ իր նպատակի համար:

Մեր կյանքի նպատակը գտնվում է մի անձի մոտ, ում անունն է Հիսուս:

Նյու Յորքի համալսարանի հասարակագիտություն մի դասախոս և նրա կինը որոշ պատճառներով դիմում են քաղաքապետարան՝ խնդրելով, որ իրենց 5-ամյա տղայի անվանը, որն արդեն բաղկացած էր հինգ անուններից, ավելացնեն ևս երեքը, և տղայի անունը դառնա Եո Ջինգ Հեյնո Օգոստոս Այցենըր Ալեքսանդր Ջերեջիմեգո Քոնլի:

Ես հավատում եմ, որ Աստված որոշակի նպատակ ունի՝ Մատթեոսի Ավետարանում այդ բոլոր անունները հիշատակելով: Թերևս առաջին հայացքից դրանք թվելը անիմաստ և ճանճրալի թվա, սակայն դրանք հիշվում են երկու նպատակով: Առաջին՝ այդ անունների հիշատակումը ներ-

Դեղագործը

Կարդա՛
Բ Թագավորներ 12.1-14

**Նաթանն ասաց
Դավթին. «Դո՛ւ ես
այն մարդը, որ արել է
այդ բանը»:**

Բ Թագ. 12.7

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Առակներ 22-24
■ Բ Կորնթոսացիներ 8

Նա հայտնի էր որպես աստվածավախ մարդ, սակայն իր թագավորական դիրքը չարաչահեց՝ ուրիշի կնոջը տիրանալով (Բ Թագ. 11): Ավելին՝ նաև մահվան ուղարկեց այդ կնոջ ամուսնուն, որն իր զորավարներից մեկն էր և տնից հեռու ուղարկված՝ պատերազմում էր թագավորի համար:

Հաճախ, երբ նայում ենք հաջողակ մարդկանց ձախողումներին, մեզ ավելի լավ ենք զգում: Սակայն եթե ուրիշի ձախողությունը մեզ ուրախացնում է, նշանակում է՝ մենք մեզ լավ չենք ճանաչում: Աստվածաշունչը Դավիթի մեղքերի մասին չի խոսում՝ մեր բարոյական չափանիշը ցածրացնելու համար, այլ հակառակը՝ որպեսզի ավելի արթուն և զգաստ պահենք մեզ:

Երբ գիտակցում ենք մեր թուլությունները և կարիքն ունենք Քրիստոսի շնորհքի, ա՛յն ժամանակ պիտի զգանք Աստծու զորությունից մեր կախված լինելը:

Աստվածաշունչը հայելի է, որն արտացոլում է, թե Աստված ինչպե՞ս է տեսնում մեզ:

Մի դեղագործ շատ լավ համբավ ուներ: Նա ուներ լավ ընտանիք և շատ հաջողակ դեղատուն: Ասում էին, որ նրա հարստությունը միլիոնների է հասնում: Այդքանով հանդերձ՝ վստահելի համարվող այդ մարդը սկսել էր թաքուն խարդախել իր պատրաստած քիմիաբուժությունների դեղահաբերը, որպեսզի մի փոքր մեծացնի իր եկամուտը: Ի վերջո նա բռնվում է և դատապարտվում իր հանցանքի համար: Դեղագործի արարքը զարմացնում է նրան ճանաչողներին և առողջապահության ոլորտի մասնագետներին, թե ինչպե՞ս կարող էր նման բան պատահել:

Նման հարցում կարելի է անել նաև Դավիթ թագավորի վերաբեր-

**Երաժշտություն
ներսից**

Կարգա՛վ
Սաղմոս 97

**...օրհնեցե՛ք, ցնծացե՛ք
ու սաղմո՛ս երգեցեք:**
Սաղմ. 97.4

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Առակներ 25-26
■ Բ Կորնթացիներ 9

97-րդ Սաղմոսի Հեղինակն էլ, կարծես, մի երգ ուներ իր սրտում: Նա կոչ էր անում ուրիշներին, որ միանան իրեն. «Օրհնեցե՛ք Տիրոջը նոր օրհներգով, քանզի սքանչելագործություններ արեց նա» (Սաղմ. 97.1): Նա փառաբանում է Աստծուն Նրա փրկության, արգարության, գութի և հավատարմության համար (Սաղմ. 97.2): Նրա սրտից փառաբանությունը այնպե՛ս է գուրս հորդում, որ կոչ է անում երկրի բնակիչներին՝ ցնծությամբ պոռթկալու և սաղմոս երգելու. «Գետերը թող ծափ տան» (Սաղմ. 97.4,8): Մենք էլ շատ բանի համար շնորհակալություն ունենք հայտնելու Աստծուն՝ մեզ պարզեաժ ընտանեկան կյանքի, բարեկամների, ամենօրյա կարիքների և մեզ՝ որպես իր զավակների մասին հավատարմաբար հոգալու համար: Կարող ենք լավ երգելու կարողություն չունենալ: Սակայն երբ իսկապես հիշենք Աստծու՝ մեզ արած ընծաները, չենք կարող ցնծությամբ չպոռթկալ և սաղմոս չերգել Իրեն (Սաղմ. 97.4):

Թրաբ ընտանիքի չորս երեխաների համար երգելը ինքնաբուխ մի բան է: Նրանք զորավար Ջորջ վան Թրափի ծոռներն են, որի ուղեկցող կյանքը՝ իր երկրորդ կնոջ՝ Մարիայի հետ, ներշնչել և ծնունդ է տվել 1965-ին հրապարակելիս նշանավոր ֆիլմին:

Ներկայումս Միացյալ Նահանգների Մոնթանա նահանգում ապրող այդ մանուկները պապիկի՝ սրտի կաթված ստանալուց հետո նրանք ձայնագրեցին իրենց առաջին ձայնապնակը, որպեսզի ուրախացնեն պապին: Դրանով նրանք ավելի ճանաչվեցին և սկսեցին շրջել երկրներով՝ ներկայացնելու իրենց երգարվեստը: Այդ երեխաների հայրն ասում է. «Երաժշտությունը նրանց ներսից է»:

Փառաբանությունը ուրախ սրտի հորդումն է:

Նոր բարեկամ

Կարդա՛
Հովհաննես 15.9-17

**...ձեզ «բարեկամ»
կոչեցի, որովհետև
ամեն բան, ինչ իմ
Հորից լսեցի, ձեզ
իմացրի:**

Հովհ. 15.15

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Առակներ 27-29
■ Բ Կորնթացիներ 10

օգտվելով այդ վայրկյանից՝ մի լրագիր վերցրի ձեռքս: Սա-
կայն նոր էի սկսել թերթել, երբ զգացի մի փոքրիկ արմուն-
կի հրում դեպի ինձ: Փոքր-ինչ արհամարհանքով նայեցի
նրան: Նա իր փոքրիկ ձեռքը դուրս հանեց և ասաց. «Ու-
զո՞ւմ ես՝ բարեկամներ դառնանք»: Սիրտս թուլացավ:
«Այո՛, ուզում եմ, որ բարեկամներ լինենք», - ասացի:

Կյանքում ունեցած նեղությունների մեջ հաճախ կարծում
ենք, թե միակ բանը, որ պետք է մեզ, մենակ մնալն է: Հիսու-
սը պարզում է մեխից վիրավոր իր ձեռքը և մեզ հրավիրում
իր բարեկամները դառնալու: «Զեզ «բարեկամ» կոչեցի,
որովհետև ամեն բան, ինչ իմ Հորից լսեցի, ձեզ իմացրի»
(Հովհ.15.14-15): Մենք գտնվում ենք ընտրություն առջև.
մնանք մենակ՝ ինքներս մեզ հետ, մեր նեղություններով, կամ
բացենք մեր սիրտը՝ ընդունելու համար անսահման սիրո և
զոհաբերության բարեկամության հրավերը:

Հիսուսը կարոտ է քո բարեկամը լինելու:

Մի օր, երբ եվրոպայից Մի-
ացյալ Նահանգներ էի վե-
րադառնում, ինքնաթիռում կողքս
նստած էր մի փոքրիկ աղջնակ, որն
ամբողջ ճանապարհին չդադարեց
խոսելուց: Նա պատմեց իր ընտանի-
քի մասին, նաև իր տիկնիկի մասին,
որը ճամփորդական ուղեպայուսա-
կում էր: Մեծ խանդավառությամբ
սկսեց ինձ ցույց տալ այն ամենը, ինչ
մեր շուրջը կար՝ «Նայի՛ր սրան, նա-
յի՛ր նրան» ասելով: Սկսեցի մտածել,
որ թո՛ւհքի 8 ժամը բավական երկար
մի ճամփորդություն էր դառնալու:

Բավական խոսելուց հետո աղջ-
նակը հանկարծ լռեց: Ծածկոցը քաշ-
եց վրան և կծկվեց իր աթոռի վրա:
Մտածեցի, որ մի փոքրի կքնի, և

Պատգամ երկնքից

Կարգա՛
Սաղմոս 18

**Երկինքը պատմում է
Աստծու փառքը:**

Սաղմ. 18.1

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Առակներ 30-31

■ Բ Կորնթացիներ 11.1-15

անաղմուկ վկայությունը:

Մենք կարող ենք լսել իսկապես, որ «Երկինքը պատմում է Աստծու փառքը» (Սաղմ. 18.1): Եվ հիացումով կարող ենք տեսնել, որ «երկնքի հաստատությունը հայտնում է նրա ձեռքի գործերը» (Սաղմ. 18.2): Մենք կարող ենք լսել «օրը օրվան հաղորդած միտքը», որ մեր մտքերը լցնում է Աստծու հրաշալի ստեղծագործության մասին անսխալական գիտակցությամբ (Սաղմ. 18.2): Մենք կարող ենք սքանչանալ՝ գիշերվա մթուկթյան մեջ դիտելով երկնքի պայծառությունը, որը մեզ ցույց է տալիս Աստծու ձեռքերի գործերը (Սաղմ. 18.1-2):

Մեր Արարիչը՝ Աստված, ուզում է, որ հանգիստ լինենք և իմանանք, որ Ինքն է ճշմարիտ Աստված (Սաղմ. 45.11): Այդ անելու լավագույն միջոցն այն է, որ ժամանակ հատկացնենք Նրա արարչությունը և Նրա ձեռքերի գործերին: Հետո անկասկած պիտի ճանաչենք, որ Նա է Աստված:

Ասում են, թե աշխարհի բնակչությունը ներկայումս հասել է մոտ 7 միլիարդի: Եվ կախված մեր բնակչության վայրից՝ հետզհետե դժվար է դառնում առանձնությունը ընդհանուր գտնելը, երբ կարող ենք լուռ դիտել գիշերային երկինքը: Այդուհանդերձ, ըստ 18-րդ սաղմոսի, եթե կարողանանք մի լուռ անկյուն քաշվել, որտեղ մեր սրտի զարկերը միայն կարելի է լսել, և միակ տեսարանը աստղազարդ երկինքն է մեր գլխավերևում, միայն այդ ժամանակ կարող ենք լսել երկնքից մեզ հասնող պատգամը:

Այդպիսի պահերին կարող ենք մեր ներքին ականջներով լսել Աստծու շնչող ստեղծագործության

Աստված Իր փառքի մասին խոսում է Իր արարչության միջոցով:

Աստծու Հավատարմությունը

Կարգա՝

Մարկոս 11.20-26

**Հիսուսը
պատասխանեց ու
ասաց նրանց.
«Աստծու Հավատն
ունեցեք»**

Մարկոս 11.22

Աստվածաշունչը

մեկ տարում

■ ժողովող 1-3

■ Բ Կորնթացիներ 11.16-63

Հիսուսի՝ Աստծու Հանդեպ Հավատքի մասին Իր աշակերտներին ասած մի շարք խոսքեր երբեմն հարց են առաջացնում իմ մեջ, թե արդյոք ես կարո՞ղ եմ այդ աստիճանի վստահություն ունենալ իմ աղոթքի մեջ: Ես չեմ կարող լեռանը հրամայել տեղաշարժվել և օվկիանոսն ընկնել ու դիտել այդ տեսարանը:

Հազտոն Թեյլորը՝ Ջինաստանի ռազմիրա միսիոները, ասել է, թե Հիսուսի խոսքերը Մարկ. 11.22 համարում՝ «Աստծու Հավատն ունեցեք», կարելի է թարգմանել «Վստահ եղեք Աստծու Հավատարմության վրա»: Մեկ ուրիշ հոգևոր հովիվ, գնահատելով Թեյլորի այս միտքը, ասել է. «Հավատք նշանակում է վստահ լինել Աստծու Հավատարմության վրա, և այնքան ժամանակ, որ այդպես ենք վարվում, ճիշտ ընթացքի մեջ ենք: Հավատքը երբեք նկատի չունի դժվարությունները... Հավատքը երբեք չի վերաբերում ինքն իրեն կամ այն անձին, որն այն գործածում է: Հավատքը վերաբերում է Աստծուն... Հավատքին միայն Աստված է հետաքրքրում, և նա խոսում է Աստծու մասին, փառաբանում է Աստծուն և գովաբանում Աստծու արժեքները: Եվ մարդու Հավատքի ուժը չափվում է Աստծու մասին նրա ունեցած գիտություն չափով: ...Նա այնքան լավ է ճանաչում Աստծուն, որ կարող է վստահել այդ գիտությունը: Եվ Հավատք ունեցող այդ մարդու աղոթքներն են, որ պատասխան են ստանում»:

«Քո խոսքը, Տե՛ր, հավիտյան երկնքում է: Սերնդից սերունդ մնում է քո ճշմարտությունը» (Մաղմ. 118.89-90):

Մեր կյանքը միշտ չէ, որ արդար է, բայց Աստված միշտ հավատարիմ է:

Քայլել զբոսայգում

Կարգա՛
Եփեսացիներ 5.1-14

**Եվ սիրո՛վ ապրեցեք,
ինչպես որ Քրիստոսն
էլ մեզ սիրեց:**
Եփես. 5.2

Աստվածաշունչը
մեկ տարում
■ ժողովող 4-6
■ Բ Կորնթացիներ 12

Մեր տան հետևում արահետ կա, որը տանում է հանրա-
յին զբոսայգի: Ճանապարհի մեծ մա-
սը երևում է մեր խոհանոցի պատու-
հանից, դրա համար էլ ես քայլված-
քից ճանաչում եմ մարդկանց: Մի
փաստաբան կա, որը միշտ արագա-
քայլ է անցնում, իսկ մի տարեց մարդ
միշտ հոգնած է քայլում: Մի կին էլ
կա, կարծես քայլում է նապաստակին
հասնելու համար: Նրանցից յուրա-
քանչյուրն իր յուրահատուկ քայլ-
վածքն ունի:

Աստվածաշունչը մեզ պատվի-
րում է. «Եվ սիրո՛վ ապրեցեք, ինչ-
պես Քրիստոսն էլ մեզ սիրեց»
(Եփես. 5.2) և «Իմաստությա՛մբ
վարվեցեք» (Կող. 5.2): Ես ինձ հարց
եմ տալիս. «Արդյոք իմ քայլվածքն արտացոլո՞ւմ է Աստծու
սերն ու իմաստությունը»: Արդյո՞ք այն հարկ եղածի չափ
«սուրբ է, խաղաղարար, հեզ, հլու, ողորմությունմբ և բարի
պտուղներով լի, անկողմնակալ, անկեղծ» (Հակ. 3.17): Ու-
նե՞մ արդյոք սեր, խնդություն և խաղաղություն: Արդյոք
հանդա՞րտ եմ և ուժեղ: Արդյոք ի՞նչ են տեսնում ուրիշնե-
րը, երբ անցնում եմ նրանց կողքով:

Որպես Տեր Հիսուսին հետևող հավատացյալներ՝ մեր
խոսքերից առաջ և ավելի մեր կյանքի բոլոր երևույթներով
և արտահայտություններով պետք է ներկայացնենք Քրիս-
տոսին, որին հավատալու և հետևելու ուխտ ենք արել: Արդ-
յոք մեր կեցվածքը, զգացումներն ու մտքերը, ժպիտն ու
խաղաղարար տրամադրությունը ինչ-որ բան ասո՞ւմ են
Քրիստոսի մասին: Այլ խոսքով՝ որքա՞ն Քրիստոսանման
կեցվածք և քայլվածք ունենք:

Քրիստոսանման քայլվածք ունենալու համար պետք է
հետևել Նրա հետքերին:

Հա՛յր, ների՛ր նրանց

Կարդա՛
Ղուկաս 23.32-98

**Հիսուսն ասաց.
«Հա՛յր, ների՛ր
նրանց, որովհետև
չգիտեն թե ինչ են
անում»:**

Ղուկաս 23.34

Աստվածաշունչը
մեկ տարում

- ժողովող 7-9
- Բ Կորնթացիներ 13

Ղուկաս 23-րդ գլխում Հիսուսը շատ ազդեցիկ ազդեցություն է անում այն մարդկանց համար, ովքեր իրեն մահվան էին տանում (Ղուկ. 23.34): Նրանք անարգում էին Աստծու Որդուն՝ մտրակելով Նրան, թքելով Նրա վրա, ծաղրելով և փշե պսակ դնելով գլխին: Նրանք Նրա ոտքերն ու ձեռքերը դամեցին խաչափայտին և խոցեցին նրա կողը: Թեև նրանք չզգացին իրենց այդ արարքի ահավորությունը, սակայն Աստված Իր Որդու մահով թողություն չնորհեց բոլոր նրանց, ովքեր հավատացին և ապաշխարեցին: Նույնիսկ Հիսուսին մահվան ենթարկողներին:

Մեր մեղքերի պատճառով մենք էլ մեղսակից ենք համարվում բոլոր նրանց, ովքեր Հիսուսին մահվան ենթարկեցին:

Ուրախ լուրն այն է, որ Աստված չնորհ՞քի Աստված է: Նա ներում է և վերցնում մեղքի խայթոցը և մեզ տալիս ապրելու երկրորդ առիթ՝ Իր Որդու միջոցով:

Ոչ ոք շատ այնքան վատը չէ՝ Աստծու ներումն ստանալու համար, բայց պետք է այն ընդունել:

Դպրոցական էքսկուրսիայի ժամանակ թանգարանում մի պատանի բերանի ծամոնը հանում և կայցնում է մեկուկես միլիոն արժույթով շատ նշանավոր մի նկարի: Ծամոնը քառորդ դուլարի չափ մի բիծ է առաջացնում նկարի վրա:

Արվեստի ոլորտի մասնագետները քննում են ստեղծված վիճակը և չեն կարողանում վստահ պատասխանել՝ հնարավո՞ր է առանց նկարը վնասելու հեռացնել այդ բիծը: Տղան վտարվում է դպրոցից: «Չգիտեմ, թե արդյոք հասկացա՞վ նա իր արարքի վնասակարությունը»,~ ասում էր տեսուչը:

Ղուկաս 23-րդ գլխում Հիսուսը շատ ազդեցիկ ազդեցություն է անում այն

**Խոստորվել
իմաստությունից
Կարգա՛
Գ Թագավորներ 3.4-15**

**Իմաստնությո՛ւն
տուր քո ծառայի՛ն, որ
նա կարողանա
արդարությամբ լսել
ու դատել քո
ժողովրդին...**

Գ Թագ. 3.9

Աստվածաշունչը
մեկ տարում
■ ժողովող 10-12
■ Գաղատացիներ 1

նվիրումով և եռանդով՝ կառուցելու մի սքանչելի տաճար՝ ի փառս Աստծու:

Սակայն այդ ընթացքում մի սխալ բան կատարվեց. Աստծու իմաստությամբ ապրելու նրա խանդն ու եռանդը փոխարինվեցին այն հարստությամբ և ունեցվածքով, որ Աստված տվել էր նրան: Օտար և հեթանոս կանանց հետ նրա ամուսնանալը ի վերջո թե՛ իրեն, թե՛ իր ժողովրդին տարավ կռապաշտության:

Պատգամն այստեղ հստակ է. եթե ուզում ենք Աստծուն գոհացնել, մեր գերագույն նպատակը պետք է լինի Քրիստոսի և Նրա իմաստության հանդեպ մեր ունեցած սիրուն նախապատվություն տալը: Երբ նվիրվենք Աստծու՝ ամենից թանկագին հարստությունը եղող իմաստությանը, պիտի կարողանանք հաղթահարել այն փորձությունը, որը պատճառ դարձավ Սողոմոնի կործանման: Մեր սրտերը բաց պահենք իմաստության առջև և հնազանդվենք Նրա ձայնին:

**Եթե Աստված ուզի քեզ շնորհ
հանել քո ցանկացած բանը,
ի՞նչ պիտի խնդրես Նրանից:**

Երբ Սողոմոնին առիթ տրվեց այդ ընտրությունն անելու, նա խնդրեց իմաստություն՝ զանազանելու չարն ու բարին, որպեսզի կարողանա իր ժողովրդին լավ առաջնորդություն անել (Գ Թագ. 3.9): Աստված նրան ասաց. «Քանի որ դու այդ բանը խնդրեցիր ինձնից... ուստի քո ասածի համաձայն եմ վարվելու» (Գ Թագ. 3.11-13): Նա խոստացավ ավելին՝ «Հարստություն և փառք» նույնպես շնորհել: Մինչև այսօր Սողոմոնը հիշվում է իմաստության համար, որ Աստված նրան շնորհեց:

Սողոմոն թագավորն իր իշխանությունն սկսեց իմաստությամբ,

Հսկի՛ր սրտիդ ամեն օր՝ Աստծու իմաստությունից
խոսորելուց խուսափելու համար:

**Նա գիտի իմ
անունը**

Կարգա՛
Հովհաննես 10.1-4

....ոչխարները նրա
ձայնը լսում են, ու
նա իր ոչխարներին
կանչում է իրենց
անուններով և նրանց
դուրս է հանում:

Հովհ. 10.3

Աստվածաշունչը
մեկ տարում

- Երգ երգոց 1-3
- Գաղատացիներ 2

տալով, և հարցնում էր վերջերս իմ տարած վիրահատություն
մասին: Անկասկած, մենք մեզ լավ ենք զգում, երբ մարդիկ ան-
ձամբ մոտենում և մտերմաբար խոսում են մեզ հետ:

Բոլորս էլ փափագում ենք ճանաչվել, հատկապես Աստ-
ծու կողմից: Մի հոգևոր երգում ասվում է. «Նա գիտի իմ
անունը»: Նա գիտի յուրաքանչյուրիս խորհուրդն ու զգա-
ցումը, ամեն արցունքի կաթիլ, որ ընկնում է մեր աչքից, և
լսում է մեզ, երբ կանչում ենք Իրեն: Հովհաննեսի Ավետա-
րանում կարդում ենք. «Ոչխարները նրա ձայնը լսում են...
և ոչխարները գնում են նրա հետևից, որովհետև նրա ձայ-
նը ճանաչում են» (Հովհ. 10. 3-4):

Նա, որ ստեղծել է երկինքն ու երկիրը, մի քանի միլիարդ
ժողովուրդ ճանաչելը նրա համար խնդիր չէ: Աստված քեզ սի-
բում է անսահման (Հովհ. 3.16): Նա միշտ մտածում է քո մա-
սին (Սաղմ. 139.17-18), և Նա գիտի քո անունը (Հովհ. 10.3):

Աստված գիտի բոլոր հավատացյալների անունները:

Երբ սկսեցինք մեծ եկեղեցի
հաճախել, նոր բաներ սովորեցինք՝ միանալով մեծ խմբերի և վայելելով երաժշտությունը հագեցած պաշտամունքներ: Սակայն բավական ժամանակ անց զգացի, որ մի բան պակասում է իմ կյանքում. եկեղեցու հովիվն ամենևին չգիտեր, թե ո՛վ եմ ես: Գիտակցում էի, որ նա չի նկատել իմ ներկայությունը. հազարավոր մարդկանց մեջ անկարելի էր բոլորին ճանաչել անուն առ անուն:

Որոշ ժամանակ անց, երբ սկսեցինք հաճախել ավելի փոքր եկեղեցի, շատ ուրախացա, երբ եկեղեցու հովիվը ստացա բարի գալուստի շնորհավորական նամակ: Մի քանի շաբաթ հետո հովիվն սկսեց հետս խոսել՝ անունս

Բոլորդ ոտքի՛

Կարգա՛
Մարկոս 2.1-12

**Ասում եմ քեզ՝ վե՛ր
կաց, մահիճո՛ւ
վերցրո՛ւ, քո տո՛ւն
գնա:**

Մարկ. 2.11

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երգ երգոց 4-5
■ Գաղատացիներ 3

Երբ ամուսնուս խնդրեցի, որ տուն գալու ճանապարհին ձուզնի և հետը բերի, որպեսզի եգիպտացորենի հացով ընթրիք պատրաստեմ, նա ասաց. «Այսօր ես ավելի լավ բան ունեմ, քան քո պատրաստելիքը»: Զարմանալի էր: Սակայն շուտով հասկացա, թե ի՛նչ էր ուզում ասել, երբ դռնից ներս մտնելով՝ պարզեց կարկանդակի նմանվող մի հաց: Փաթեթավորման թղթի վրա գրված էր. «Շնորհակալություն խմորի համար: Մենք հունցեցինք այն»: Մի տիկնոջ կողմից պատրաստված այդ հացը մեզ տվել էին մի երիտասարդական կազմակերպության մեր ցուցաբերած նյութական օգնության դիմաց:

Այդ տիկինն սկսել էր նման հացեր թխել, երբ գլխից վիրավորվելու պատճառով ստիպված էր եղել թողնել հիվանդապահուհու աշխատանքը: Փոխանակ հուսահատվելու և տանը փակվելու՝ նա, իր կարողություններին համեմատ, սկսել էր համեզ հացեր թխել և նվիրել բարեգործական կազմակերպությունների, որպեսզի նրանք էլ, իրենց հերթին, նվիրատվությունների դիմաց բաժանեն նվիրատուներին՝ ի նշան շնորհակալության:

Այդ տիկինը թեև մարմնական կատարյալ բուժում չէր ստացել այն անդամալույծի պես, որին բժշկեց Հիսուսը (Մարկ. 2), բայց կարողացել էր ոտքի կանգնել և բոլորին զարմացնել այն գործով, որ Աստված էր կատարում իր միջոցով:

Աստված մեզնից յուրաքանչյուրի միջոցով հատուկ գործ ունի անելիք՝ հակառակ մեր ունեցած սահմանափակություններին: Պետք է ոտքի կանգնենք, արթնանանք և հարցնենք, թե Աստված ի՛նչ է ուզում անել մեր միջոցով:

Պատրաստ լինենք աշխատանքի և անենք այն, ինչ որ Աստված ուզում է, որ անենք:

Մոծակի

Համաճարակ

Կարգ՝

Բ Մնացորդաց 34.14-21

**Օրենքի գիրքը գտել
եմ Տիրոջ տանը:**

Բ Մնաց. 34.15

Աստվածաշունչը

մեկ տարում

■ երգ երգոց 6-8

■ Գաղատացիներ 4

ների, որոնք, հատուկ դեղ սրսկելով, ոչնչացրին մոծակներին: Հիվանդությունները վարակվողների թիվը շուտով սկսեց նվազել:

Հին Կտակարանում կարգում ենք Հուդայի երկրում կռապաշտության համաճարակի մասին, որի հետևանքը եղան բարոյական ախտերը: Երբ գտնվեց Աստծու օրենքի գիրքը, Հոսիաս թագավորը բացականչեց. «Քանզի մեր նախնիների Տիրոջ խոսքերին չանսալու՝ այս գրքի մեջ գրված ամեն ինչ չկատարելու պատճառով» (Բ Մնաց. 34.21): Հոսիասը հասկացել էր, որ բարոյական հիվանդությունների դարմանը Աստծու խոսքն է: Նա հրահանգեց, որ ամեն տեղ Աստծու օրենքը գործադրության մեջ դրվի, և շուտով ժողովրդի մեջ արթնացում սկսվեց, ու մարդիկ վերագտան իրենց հոգեկան առողջությունը: Անտեսելով Աստծու խոսքի ընթերցումը՝ կրնկնենք հոգևոր ախտերի մեջ: Ուրեմն լավ է դուրս բերել նրա կենսատու պատգամը:

Պանամայի ջրանցքը կառուցողները կարողացան հաղթահարել անհամար մարտահրավերներ. նրանք տոնաններով հող փորեցին և տեղափոխեցին այլ վայրեր, գետի ուղղությունը փոխեցին և բազմաթիվ մղոնների վրա ճահիճներ չորացրին: Սակայն փոքրիկ մոծակների հայտնվելով՝ ամբողջ ծրագիրը վտանգի տակ դրվեց: Այդ տարածաշրջանը մոծակների առատորեն բազմանալու վայր էր: Մոծակների խայթոցներից մալարիայի համաճարակ տարածվեց, և անհամար թվով մարդիկ մահացան:

Բարեբախտաբար մի բժիշկ, որն ուսումնասիրել էր այդ հիվանդությունը, գտավ մեծ թվով աշխատող-

Աստվածաշունչը Աստծու դեղատոմսն է մեր հոգու առողջության համար:

Հիսուսը մեզ

կազատագրի

Կարգա՝

Գաղատացիներ 5.1-6

Եվ ճշմարտությունը

կճանաչեք, ու

ճշմարտությունը

կազատի ձեզ:

Հովհ. 8.32

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 1-2

■ Գաղատացիներ 5

ազատ կամքով դարձել էի այնպիսին, որպիսին չէի ուզում լինել»:

Մեզնից շատերն են անցել Հոգեկան մաքառման միջով: Մենք ուզում էինք ձեռքազատվել մեղքի կաշկանդումներից, սակայն ինքներս մեզ անկարող էինք համարում թոթափել մեր ունակությունների շղթաները: Սակայն Հետո, երբ լցվեցինք Քրիստոսի հավատով, մենք մեզ ազատագրված զգացինք ճիշտ, ինչպես Հետեյալ երգում է ասվում. «Ո՛վ իմ բանտարկված Հոգի, արագ դե՛ն նետիր մեղքիդ կապանքներն ու մոլթ գիշերը: Թող աչքդ բացվի տարածվող լույսի բոցերով, շղթաներս ընկած՝ սիրտս ազատ է ոտքի կանգնած, առաջ եմ գնում՝ հետեելով քեզ»:

Միայն Հիսուսը կարող է փշրել մեր կյանքի ձեռնակապերը: Սիրելի՛ բարեկամ, ընդունի՛ր Նրան որպես Փրկիչդ, և «ճշմարտությունը կազատի քեզ» (Հովհ. 8.32):

Ղշմարիտ ազատությունը կարելի է գտնել Հիսուսին ծառայելու մեջ:

Ցանկ և հնձել

Կարդա՛
Գաղատացիներ 6.7-9

**Մի՛ խարվեք. Աստված
չի ծաղրվի:
Որովհետև մարդ ինչ
որ սերմանի, այն էլ
կհնձի:**

Գաղ. 6.7

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 3-4

■ Գաղատացիներ 6

խնդիրներ ունենայի: Դրա հետևանքները շարունակվում են մինչև օրս: Մի հեղինակ ասել է. «Մեր կյանքում սխալներ կան, որոնց համար պարտավոր ենք լինում շարունակ վճարել»:

Դարեր առաջ Պողոս Առաքյալը միևնույն գաղափարն արտահայտել է որպես տիեզերական անշեղ օրենք՝ ցանելու և հնձելու օրինակով: Առաքյալն ասել է. «Որովհետև մարդ ինչ որ սերմանի, այն էլ կհնձի» (Գաղ. 6.7): Առաջին հայացքից հասարակ թվացող մեր այս կամ այն ընտրությունը երբեմն այնքա՛ն երկարատև ազդեցություն է ունենում մեր կյանքի վրա, որ անհնար է պատկերացնել: Դրա համար էլ Առաքյալի խոսքերը պատվիրում են իմաստությունը կատարել մեր ընտրությունները: Ընտրությունը, որ անում ենք այսօր, առաջացնում է այն արդյունքները, որ պիտի հնձենք վաղը: Լավ է խոսասփել մեղքից առաջին իսկ հնարավորության դեպքում, քան թե նրա հետևանքների դեմ մաքառել վաղը:

Այսօր ճիշտ ընտրություն անելու կարևոր պատճառներից մեկը վաղն է:

Այն ժամանակ արածս անմեղ
քան թվաց ինձ: Այդ երեկո
դպրոցից նոր էի տուն վերադարձել,
երբ մորս ասացի, որ գնում եմ մի ըն-
կերոջ հետ գնդակ խաղալու: Մայրս
պնդեց, որ տանը մնամ և տնային
առաջադրանքներս կատարեմ: Սա-
կայն ես մեր տան ետնադռնից թա-
քուն դուրս սարդեցի և գնացի ընկե-
րոջս մոտ ու նրանց տան հետնաբա-
կում երկու ժամ գնդակ խաղացինք:
Խաղի վերջում թափով վայր ընկա և
առջևի ատամներիցս մեկը կոտրեցի:
Սաստիկ ցավ զգացի, սակայն հուզեցի
ծնողներիս ասել պատահածի մասին:

Այդ անհնազանդությունս պատ-
ճառ դարձավ, որ հետագա տասը տա-
րում ատամնացավ և ատամների այլ

**Նկատի ունենալ
ուրիշներին ևս
Կարգա՛
Փխլիպպեցիներ 2.3-8**

**Միայն ձեր անձի
շահերին չնայեք, այլ
ամեն մեկն իր
ընկերոջն էլ:
Փխլիպ. 2.4**

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 5-6
■ Եփեսացի 1

մեր շուրջը գտնվող մարդկանց հետաքրքրությունների, նրանց կարիքների, ցանկությունների և մտահոգությունների մասին:

Ուրեմն պետք է հարցնենք ինքներս մեզ. «Ուրիշների հետաքրքրությունները մեր հետաքրքրությունից ավելի կարևոր համարո՞ւմ ենք: Խանդավառվո՞ւմ ենք Աստծու՝ ուրիշների միջոցով արած գործերով այնքան, որքան մեր միջոցով արած գործերով: Ուզո՞ւմ ենք տեսնել ուրիշների, ովքեր մեծանում են Աստծու շնորհքի մեջ և ճանաչվում ու զնահատվում են մեզնից ավելի: Գոհունակություն ապրո՞ւմ ենք, երբ տեսնում ենք, որ մեր հոգևոր զավակները մեզ գերազանցում են այն գործի մեջ, որը կոչված են անելու: Եթե այդպես է, ա՛յդ է մեծության չափանիշը: Մենք ավելի շատ ենք մեր Տիրոջը նմանվում, երբ մեր խորհուրդներն աշխատում են ուրիշների բարիքի համար: Դրանից ավելի մեծ սեր չկա» (Հովհ. 15.13):

Որքան շատ ենք սիրում մեր Տիրոջը, այնքան ավելի կարող ենք սիրել ուրիշներին:

Զոհաբերելով մեր անձը՝ մենք Չավելի ևս ընդգծած ենք լինում Հիսուսի նկարագրի միջուկը կազմող ճշմարտությունը, որի էությունն է՝ ուրիշների բարորություն մասին մտածել ավելի, քան քո մասին: Հակառակ դեպքում ինչո՞ւ պիտի Նա այնքան շատ խոնարհեցներ իր անձը և հնազանդ լիներ մինչև մահ, նույնիսկ խաչի մահ (Փխլիպ. 2.8):

Մեր բնագրական հակումն ընդհանրապես մեր անձնական շահն ու հետաքրքրությունը տեսնելն է: Ամեն ինչի նայել մեր անձնական կարիքների և ցանկությունների տեսանկյունից: Սակայն Հիսուսի օգնությամբ կարող ենք հրաժարվել այդ սովորությունից: Մենք կարող ենք մտածել

**Նշանագրիչի
իմաստություն**

Կարգա՝
Եփեսացիներ 5.8-21

....որովհետև օրերը
չար են: Դրա համար
անմիտ մի՛ եղեք:
Եփես. 5.16-17

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 7-8
■ Եփեսացի 2

Տլորիդայի հիվանդանոցնե-

քրից մեկում մի հիվանդի ոտ-
քը անդամահատում են: Սակայն
անզգայացումից դուրս գալուց հետո
նա հայտնում է, որ բժիշկը սխալ-
մամբ իր առողջ ոտքն է կտրել: Նույն
հիվանդանոցում մի անգամ էլ առողջ
ծնկի վիրահատություն է կատարվել:

Առողջապահության պաշտպա-
նությանը կոչված պատասխանատու-
ները այսպիսի մեծ և ողբերգական
ղեպքերը նմանեցնում են օդային
վթարների, թերթերում հրապարակ-
վելու արժանի կարևոր լուրի, քանի
որ դրանք խիստ հազվագեպ են
պատահում: Նման սխալներից խու-
սափելու համար նույն հիվանդանոցի
ղեկավարները որոշում են սև նշագրի-
չով (մարկերով) առողջ անդամի վրա խոշոր գրել «Ոչ» բառը:

Աստվածաշունչն էլ ստիպում է, որ մեր սխալները ճա-
նաչելուց բացի ավելի հեռուն զնանք, վճռական քայլեր
անենք՝ դրանք այլևս չկրկնելու համար: Առաքյալը զգուշ-
ացնում է Եփեսոսի եկեղեցու հավատացյալներին. «Խավարի
անպտուղ գործերին մասնակից մի՛ եղեք» (Եփես. 5.11):
Քրիստոսը մեզ փրկել է դատապարտությունից, սակայն
մենք շարունակում ենք մեզ վտանգել ժամանակավոր վնա-
սի և կորստի մեր՝ մեղանչելուն հակամետ լինելու պատճա-
ռով (Գաղ. 5.16-17): Սակայն շատ բան է փոխվել Քրիստո-
սով: Փոխվել է մեր հարաբերությունը Աստծու հետ: Մեր
երբեմնի անհույս համարվող ապագան հիմա փայլուն է շատ
խոստումներով: Կարող ենք հանձնվել Սուրբ Հոգուն և
քայլել Նրա հետ, որը միշտ բարիք է գործում և երբեք՝ անտ-
րամաբանական չարիք:

Իմաստուն մարդիկ ոչ միայն ընդունում են իրենց սխալները,
այլև խուսափում են դրանք կրկնելուց:

Մի՛ թիավարիր

Կարգա՛
Եփեսացիներ 3.12-21

Որպեսզի իր հարուստ փառքի համեմատ տա ձեզ, որ իր Հոգու միջոցով ներսի մարդու մեջ գորուծյամբ հաստատվեք:

Եփես. 3.16

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 9-10
■ Եփեսացի 3

Ամուսն մի տաք օր մի նշանված գույգ զբոսնում էր լճափին: Աղջիկն ասում է. «Ի՛նչ լավ կլիներ, եթե այս շոգին պաղպաղակ ուտեինք»: Այդ խոսքի վրա նշանածը նստում է մի նավակ և ուրախությամբ թիավարում է, որպեսզի պաղպաղակ բերի իր նշանածին: Նա վերադառնում է սաստիկ հոգնած, իսկ պաղպաղակն էլ հալված է լինում: Տղան մտածում է, որ կարող էր ավելի լավ միջոց լինել իր արածի համար: Նրա միտքը լարված աշխատում է այդ խնդրի վրա, և մի տարի անց՝ 1907-ին, նա ստեղծում է շարժիչ՝ փոքր նավակների համար: Ամուսնութունից հետո էլ նա շարունակում է նավակի շարժիչներ ստեղծել և տարածել ամենուրեք: Կինը, որպես առևտրական գովազդ, շարժիչների վրա գրել է տալիս. «Մի՛ թիավարիր, կողքի՛ գցիր թիակները»:

Այդ մարդը ծուլի մեկը չէր: Նա հասկացել էր մարդ արարածի գորուծյան սահմանափակությունը: Մենք ամեն օր մեքենաներ ենք օգտագործում՝ մեր ամենօրյա կյանքի գործերը կատարելու համար: Սակայն հաճախ համառորեն կառչում ենք ինքներս մեզնից, երբ փորձում ենք Աստծու գործերը կատարել: Առաքյալը թելադրում է ավելի լավ ձև. «Որպեսզի իր հարուստ փառքի համեմատ տա ձեզ, որ իր Հոգու միջոցով ներսի մարդու մեջ գորուծյամբ հաստատվեք» (Եփես. 3.16): Նա պատվիրում է անձնական ճիգ անելու փոխարեն գորուծյուն գտնել Նրանից, «ով կարող է առատությամբ ամեն բանից ավելին անել, քան որ խնդրում ենք ու իմանում, այն գորուծյան չափով, որ մեր մեջ ներգործում է» (Եփես. 3.20):

Մի՛ թիավարիր: Ստացի՛ր և գործածի՛ր Աստծու գորուծյունը:

Մենք կարող ենք անել ամեն բան, որ Աստված ուզում է, որ անենք, եթե կախված լինենք Նրա զորությունից:

Նյութերի այբբենական ցանկ

Ազատություն.....	Հուլիսի 4
Աղոթք.....	Հուլիսի 29, սեպտ. 5
Ամբողջականություն.....	Սեպտ. 8
Ամուսնություն.....	Հուլ. 30, սեպտ. 4
Ապաշխարություն.....	Օգոստ. 15, 18
Աստվածաշունչ.....	Հուլ. 17, 22
Աստծու ամենագիտությունը.....	Հուլ.18, սեպտ. 23
Աստծու առաջնորդությունը.....	Հուլ. 1, 22
Աստծու խոսքը.....	Օգ. 15, 17, 25, սեպ. 7,25
Աստծու հավատարմությունը.....	Սեպտ. 14,19
Աստծու հոգածությունը.....	Օգ. 21, 24, սեպ. 23
Աստծու ներկայությունը.....	Հուլ. 1, 20, Օգ. 31, սեպ. 9
Աստծու սերը.....	Հուլ. 21, 30, օգ. 3
Բարեկամություն.....	Օգ. 5
Բարկություն.....	Հուլ. 24
Գործ.....	Սեպ. 3
Դատել.....	Օգ. 13, սեպ. 15
Դիմազբալություն.....	Հուլ. 27
Դրախտ.....	Հուլ. 21
Եկեղեցի.....	Հուլ. 8. օգ. 19
Ենթարկում.....	Օգ. 23, սեպ. 15
Երկրորդ զալուստ.....	Հուլ. 19, սեպ.6
Երջանկություն.....	Սեպ. 16
Իմաստություն.....	Սեպ. 7, 13, 22
Ինքնագոհություն.....	Սեպ. 1
Ինքնապատկեր.....	Սեպ. 1
Խաղաղություն.....	Օգ. 22
Խոնարհություն.....	Սեպ. 13
Խոստովանություն.....	Հուլ. 16
Ծառայություն.....	Հուլ. 11, 25
Կախյալ լինել.....	Սեպ. 30
Համբերություն.....	Հուլ. 29

Հանգիստ.....	Օգ. 8, 16
Հանդարտ պահ.....	Օգ. 26, սեպ. 2
Հանձնվել.....	Հուլ. 14, սեպ. 29
Հանձնում.....	Հուլ. 2, օգ. 23
Հարատևություն.....	Հուլ. 7, սեպ. 24
Հավատք.....	Օգ. 14
Հիսուսի բարեկամությունը.....	Սեպ. 17
Հիսուսի հրաշքները.....	Հուլ. 10
Հիսուսի մահը.....	Սեպ. 11, 21
Հնազանդություն.....	Հուլ. 13, 14, օգ. 6
Հոգեկան աճում.....	Սեպ. 12
Հոգեկան նվերներ.....	Օգ. 20
Հոգեկան պատերազմ.....	Օգ. 25
Հպարտություն.....	Հուլ. 9
Հույս.....	Հուլ. 26
Նախընտրություններ.....	Հուլ. 5, 13
Ներում.....	Հուլ. 23, օգ. 30, սեպ. 21
Նվիրում.....	Օգ. 12
Որոշում կայացնող.....	Սեպ. 27
Չարչարանք.....	Հուլ. 26, օգ. 10, 31, սեպ. 10
Պաշտամունք.....	Հուլ. 3, 15, 16, 28, սեպ. 18
Սեր ուրիշների հանդեպ.....	Հուլ. 24, 27, օգ. 19, սեպ. 28
Ստացվածք.....	Հուլ. 12
Վախ.....	Օգ. 3, 11, սեպ. 9
Վկայել.....	Օգ. 9, 17, 27
Վկայություն.....	Օգ. 4, սեպ. 20
Տալ.....	Հուլ. 25, օգ. 2
Տերունական ընթրիք.....	Հուլ. 20
Փորձառություն.....	Հուլ. 31, օգ. 1, 8
Փրկություն.....	Հուլ. 4, սեպ. 11, 26
Քրիստոսի թանկություն.....	Օգ. 13, 22

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ, եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

*Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Ցաքս՝ (010) 54-75-69; Կայքէջ՝ www.amaa.am*

ԼՂՀ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7ա

Հեռ. (374) 94 52 75; 95 02 95

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
